



ՀՈԿՏԵՄԲԵՐ
ՆՈՅԵՄԲԵՐ
ԴԵԿՏԵՄԲԵՐ
ԹԻՒՆ. 10 - 1
2000



ՄԻՈՒ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՍՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ
ՀԴ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

2000

ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՎ. 10 - 11 - 12

2000

OCTOBER - NOVEMBER - DECEMBER

No. 10 - 11 - 12

SION

VOL. 74

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor : His Beatitude The Armenian Patriarch Of Jerusalem



St. James Press, Jerusalem

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՍՕՏՏ ԳԱՐԵԳԻՆ Բ.-Ի ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

«Ինձի համար պատիւ է, որպէս Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս, խօսքս ուղղել Միացեալ ազգերու կազմակերպութեան, համաժողովի կազմակերպիչներուն, հովանաւորողներուն եւ Համաշխարհային Խաղաղութեան Համաժողովի յարգարժան մասնակիցներուն: Միջազգային հասկացողութեան եւ համագործակցութեան նոր ուղիներ որոնելու մեր ջանքերուն մէջ՝ այս եզական համաժողովը գնահատականն է մարդկային կեանքին մէջ կրօնքի ունեցած դերին:

Հայ ժողովուրդը ունեցած է փոթորկոտ պատմութիւն մը, յաճախ հազիւ ազատելով մահուան հիւսիսներէն: Եւ սակայն, այս բոլոր արհաւիրքներով հանդերձ, 2001 թուականին՝ ութը միլիոն հայեր, աշխարհի բոլոր ծագերուն, պիտի տունեն 1700-ամեակը Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման: Խաղաղ եւ փոթորկոտ շրջաններուն իսկ՝ մենք երբեք չենք կորսնցուցած մեր հաւատքը եւ խաղաղ կեանք մը ապրելու փափաքը: հայերը, բոլոր ժողովուրդներու նման, կենդանի խաղաղ եւ համերաշխ աշխարհ մը, եւ կը պայքարին կորսուած արքայութիւն վերագտնելու համար:

Անցնող Հայ: Իր տարիներու ընթացքին, հաւատալի ճարտարագիտութեան յստաջոյնութեան, Դարը դժբախտաբար նշանաւոր դարձաւ պատերազմով, ցեղասպանութեամբ, ցեղային եւ կրօնական հակադրարտութեամբ եւ համատարած մարդկային տառապանքով: Այս բոլորը չեն մատնանշել մեր ձայնողանքը հասկացողութեան, ներդրամտութեան եւ հաշտութեան ի նպաստ տարուած աշխատանքներուն: Այս բոլորը յաճախ պատճառ չեն եղած որ մենք չգիտակցինք մարդկային տառապանքներուն նկատմամբ մեր պատասխանատուութիւններուն: Մեր բոլորին, անհատական եւ խմբային, պարտականութիւնը չէ՝ ընդդիմանալ բռնութեան, կեանքի սպառնացող անտարբերութեան եւ անհանդուրժողութեան:

Մեզի համար ժամանակը եկած է ստեղծելու տարբեր իրականութիւն մը 21-րդ Դարուն համար: Որպէս Հոգեւոր Առաջնորդ, հաւատալի անոր որ հաստատներու տարբերութիւն ունինք, մենք բոլորս ալ կը հաւատանք սիրոյ եւ կարեկցութեան: Ասոնք են հիմքերը իրականացնելու համար ներդրամտութիւնն ու հաշտութիւնը: Հասնան երբեք դիպին չէ: Ան որ հաշտութիւն կը հետապնդէ՝ նախ եւ առաջ պէտք է սիրէ ճշմարտութիւնն ու արդարութիւն, եւ յարգէ անհատներու եւ ազգերու իրաւունքները:

Առանց գորացնելու հոգեւոր եւ բարոյական այս արժէքները, պատմութիւնը մեզի ցոյց կուտայ որ համագոյակցութիւնը անարժէք է՝ պահպանելու համար խաղաղ ընկերութիւններ: Ժողովուրդները անկարող են, առանց այս արժէքներուն եւ սկզբունքներուն, պահանջելու առողջ եւ անկեղծ տիեզերք մը:

Հշմարտութեան հոգեւոր եւ բարոյական սկզբունքներու, ազատութեան եւ արդարութեան պակասի յառաջ կը բերէ թշնամութիւնն եւ հակառակութիւն: Միայն անցնող Դարու ընթացքին, մարդկութիւնը դիմացաւ երկու Համաշխարհային Պատերազմներու:

Համաշխարհային Առաջին Պատերազմի ընթացքին, Օսմանեան Թուրքերու կողմէ, մէկ ու կէս միլիոն հայեր ջարդուեցան եւ տեղահանուեցան իրենց պատմական հայրենիքէն: Եթէ ընկերութիւնը միայն ունենար քաջութիւնն ու առաքինութիւնը հակադարձելու՝ առաջը առնելու համար այս ցեղասպանութեան, առաքինութիւնը դառաւ պարտելու պատահաժող, Հիթլերը թերեւս առիթը պիտի չունենար յայտարարելու. «Այսօր ո՛վ կը յիշէ հայերը», եւ ծրագրելու վեց միլիոն հրեաներու սպանութիւնը:

Ուրախ եմ, որպէս իմ հայերը տակաւին կը սպասեն որ աշխարհը ճանչնայ եւ դատաւարտէ ցեղասպանութիւնը, որ իբրեւ արդարութեան յաղթանակ, հաւասարապէս կենսական է աշխարհի բոլոր ազգերուն համար, նոյնիսկ թուրք ազգին համար:

Դար մը անցած է. այսօր աշխարհի տարբեր անկիւններուն մէջ տակաւին գոյութիւն ունին հակամարտութիւններ, բռնութիւններ եւ պատերազմ: Լուծումը այս իրականութեան եւ այլ բարդ հարցերու կը կարօտի տիեզերական ուշադրութեան եւ միացեալ ջանքերու:

Ի տես այս բացառիկ համաժողովին մասնակցողներուն, կարելի է հաստատել որ մենք միասնաբար կը ներկայացնենք մէկ պիլիոնէ աւելի մարդկային ուժ: Մենք հարգում ենք, կեանքի անհրաժեշտ տարրերը հանդիսացող, իրաւ ուժ: Մենք հաւատարմ ենք, կեանքի անհրաժեշտ տարրերը հանդիսացող, իրաւ հաւատքն ու հոգեւոր արժէքները միաձուլելու համաշխարհային ջանքերուն՝ վերջ տալու համար բռնարարութեան եւ յառաջ բերելու խաղաղութիւնը: Հարաւային

Ակրիկէն եւ Հիսիսային Իրլանտան ներշնչող օրինակներ են, թէ ինչպէս անհակաբեռելի ու երկար տարիներ տեւող Հակամարտութիւնները կարելի է լուծել յարատեւ աշխատանքով, միջազգային քննարկով, հետաքրքրութեանց հաւասարակշռութեամբ եւ խնդրոյ առարկայ ազգերու իրաւունքներու հանդէպ յարգանք ցուցաբերելով:

Հայերը, որոնք Լեռնային Ղարաբաղի մէջ ազատ ու անկախ կեանքի համար կը պայքարին, շատ լաւ կը հասկնան կարեւորութիւնը անհատներու եւ ազգերու միջեւ գոյութիւն ունեցող փոխադարձ յարգանքին: Հայ ժողովուրդը կը յուսայ որ Ղարաբաղի հակամարտութեանց լուծումը պիտի իրագործուի մօտիկ ապագային, ցոյց տալով որ լուծումներ եւ հաշտութիւններ կարելի է իրականացնել նոյնիսկ շատ դժուարին նկատուող պայմաններու մէջ:

Մեր յանձնարարութիւնը յստակ է: Ինչպիսի ձեւափոխութեան ալ ենթարկուի աշխարհը, վերաշտուցումը բնական եւ իրաւ պատկերին, բնութեան եւ մարդկային կեանքի նպատակին՝ կարելի է իրագործել միայն հաւատքի ճամբով, Տիրոջ առաջնորդութեամբ: Մենք ամէլի յարատեւ կերպով պէտք է աշխատինք մեր հաւատաքեղներուն ցոյց տալու մարդկային ուժերու միութեան կառուցողական թափը: Երկխոսութեամբ եւ իսմացործակցութեամբ, կարելի պիտի լլլայ որ ամէլի լաւ աշխարհի մը ժառանգ ձգենք մեր յաջորդ սերունդներուն:

Մեր արտաքին ազօրթն է որ Տէրը գօրաքնէ մեզ՝ որպէսզի մենք՝ պիտակցինք մեր պատասխանատուութիւններուն: Մեր յոյք յայտնենք Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Իր Առաքեալներուն ուղղած հետեւեալ բառերով. «Խաղաղութիւն ընդ ձեզ», Խաղաղութիւն բոլորիս համար: Շնորհակալ ենք:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՈՐՀԱԽՈՐԱԿԱՆ ՌԻԶԵՐԶԸ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ԱՌԻԹՈՎ

Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Հայաստանի Անկախութեան 9-րդ տարեդարձի առիթով հետեւեալ շնորհատրական ուղերձն է յղել համայն հայութեանը.

«Անկախութեան Օրուայ առիթով, Հայրապետական օրհնութեամբ ջերմօրէն ողջունում եւ շնորհատրում ենք Մեր ժողովրդի բարեպաշտ զաւակաց ի Հայաստան եւ ի Ազիւսում:

Բոլոր ժողովուրդների կեանքում մեծագոյն իրադարձութիւն է անկախ պետականութեան հռչակումը, քանզի ազդարարում է ազատ ապրելու նրա կամքը եւ հաստատում անմիջեղի իրաւունքը: Ազատութիւնը շնորհ է երկնային, աստուածատուր անկողնայտելի պարգեւ, որի մէջ միայն մարդիկ ու ժողովուրդներ ինքնարտայայտում եւ ինքնահաստատում են իրենց ողջ կարողութեամբ եւ ստեղծագործում լիարժեքօրէն:

Ազատութեան բաղձանքից գօրութիւն առած Հայկեան զարկով է ծնունդ առել մեր ժողովուրդը եւ ազատութեան քրիստոնէական հանաչողութեամբ ընտրել իր երթը դէպի յանձնարարութիւն:

Թանկ ենք ինքնիշխան մեր Հայրենիքին տէր լինելու քաջութեամբ ու պատասխանատուութեամբ, այն պահպանելու եւ ամրապնդելու միաբանութեան սիրով: Անկախութեան օրուայ սրբազան խորհուրդը թող իռնանայ մեր հոգիներում, որպէս անխորտակ ամրոց՝ դիմագրաւելու ամէն փորձութիւն եւ որպէս նորոգ ուխտ՝ շողկապելու մեր անցեալը, ներկան ու ապագան:

Միրելի հայորդիք, հաւատում ենք, որ մեր Հայրենիքի երկնքում եռագոյնի հալարտ ծածկումով հսնապազ ջերմացնելու է մեր սրտերը, միաւորելով մեզ, աշխարհի չորս ծագերում: Խաւատում ենք մեր ժողովրդի հանձնարակնիք արառող հոգուն, ստեղծագործ մտքին ու կերտող բազկին: Առ Աստուած ապաւինեալութեամբ հաւատում ենք հայոց լուսաւոր գալիքին:

Թող բարձրեալն Աստուած գօրացնի մեզ մեր պարտքի մէջ եւ Իր օրհնութեան ներքոյ անսայթաք առաջնորդի բոլորիս, նաեւ՝ հայրենի պետական այրերին, որպէսզի մշտապէս արեւորում լինի յոյսի արշալոյսը հայորդեաց կեանքի:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿՐՕՆԱԿԱՆ

ԻԳՆԱՏԻՈՍ ԵՊՍ.Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ

Գլուխ ԺԸ

1.- Առակով խօսեցաւ անոնց և ըսաւ թէ, պարտ է միշտ աղօթել և չձանձրանալ: Ապա

2.- Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, Աստուծոյ չէր վախնար և մարդոցմէ չէր ամչնար:

Ոմանք կարծեցին սխալմամբ թէ դատաւորը զԱստուծոյ կը ներկայացնէ. քանի որ իրմէ վեր մէկը չկայ որմէ երկնչի և մարդոցմէ ալ ամչնայ: Այսպէս կարծողները, չեն հետեւած առակի յաջորդող խօսքերուն: Որովհետեւ առակի վերջաւորութեան, զայն անիրաւութեան դատաւոր կը կոչէ, հետեւաբար անտեղի է, քանի որ Աստուծոյ իրաւունքի և արդարութեան դատաւոր է:

Միտքը դատաւորի կը նմանցնէ, մեր մարդկային բնութիւնն ալ քաղաքի: Բնութիւնը քաղաքի նման ընդարձակ է. չարերն ու բարիները կը մտնեն, կը շրջին ու հոն կը բնակին: Մեր զգայարաններն ալ դռներու պէս են, մտնողները կ'ընդունին: Միտքն ալ դատաւոր է և ընտրող. ընտրութիւն կ'ընէ և շտեմարանելով կը պահէ. ինչ որ անախորժ է, ի բաց կը վանէ: Ահաւաստիկ թէ ինչպէս ոմանք բարի են և ուրիշներ չար: Այստեղ խօսքը չարին մասին է, զի Աստուծոյ չէր վախնար ու մարդոցմէ ալ չէր ամչնար: Մտքին մէջ շատ բան ծածկաբար պահուած ըլլալով, Աստուծոյն երկիւղը կ'արհամարհէ, թէն գիտէ ապիրատութիւնը և մտածմամբ իսկ անօրինիլը: Զաղրացեալ խորհուրդներով, ամօթալիին մէջ շաղախուիլը. սակայն ինչպէս ըսինք, չտեսնուելուն համար, մարդոցմէ չամչնար: Վնասակար ցանկութիւններու ետեւէ ըլլալով, անհոգ է սպառնալիքներու վերաբերմամբ:

Հոգին այլի մնացած է, զրկեալ ոսոխ մարմնէն, կ'աղաչէ որ դատ տեսնէ, որպէսզի բոլորովին պակսելով բարութենէ, կոստեան չմատնուի, վասնզի ահարկու է երբ հոգին դատարկանայ բարութենէ: Ի՞նչ է հոգւոյն բողբջը առ միտք: Զղշումն է, երբոր վատթար գործերու յիշատակները, օրինակ ծուլութիւնը որով ժամանակը կը վատնենք, մղին մեզ զղջալու կը դառնանք ապաշխարութեան: Բայց մեղքերու ցանկութեամբ կապուած ըլլալով, դիւրութեամբ չենք պրծիր, չարք չենք վաներ, վաղահաս պատժին ազատելու համար, այլ տակաւին ժամանակ ունինք ապաշխարահելու, կը խորհինք, յառաջիկային բարիգործութիւն կարելի է ընել կ'ըսենք մենք մեզի: Սնոտի յոյսով. ինքզինք օրօրելով, վաղահաս մահը վրայ կրնայ հասնիլ, մեզ բարի գործերէ դատարկ գտնելով դատապարտելու համար մշտնջենական կապանքի: Այս առակին մէջ սակայն զղշումը կը յաղթէ:

4.- Թէև, - կ'ըսէ դատաւորը -, Աստուծոյն չեմ վախնար և մարդոցմէ չեմ ամէնար, սակայն այս աշխարհի կոշտ թախանձանքներուն համար դատը տեսնեմ, որպէսզի այլևս զիս չանհանգստացնէ: Այս պարագան յայտնի է բոլոր անոնց որոնք խղճահարութենէ կը տաղնապին:

Արդ՝ ինչպէս որ անիրաւ տնտեսին պարագային Տէրը գովեց անիրաւութեան տնտեսը, այստեղ ևս կ'ըսէ. -

6.- Լսեցէք թէ անիրաւութեան դատաւորը ի՞նչ կ'ըսէ. - Աստուած իրեն աղաղակող ծառաներուն չի՞ լսեր որոնք գիշեր ու ցերեկ կը խնդրեն, անոնց հանդէպ միայն երկայնամիտ կըլլայ: Եթէ բազմաթիւ խնդրանքները տմարդի դատաւորին ստիպեցին որ հաւանի արդարութեամբ դատ տեսնել, որքան ակնի արդարադատ բնութիւն ունեցող Աստուած որ յամենայնի պատրաստ է խնդրողին տալ, միայն թէ խնդրանքը արժանաւոր ըլլայ և մեզի համար օգտակար ու պատշաճ: Որովհետեւ սկիզբը յիշեցուց թէ հարկ է ստէպ աղօթքի կենալ և չի ձանձրանալ, տալու վերաբերմամբ ալ երաշխաւոր կըլլայ և իրաւացին երեւան կը հանէ: Աստուած ժամանակով երկայնամիտ է, ուստի մեզ ալ օրէնք չէ կարճամիտ ըլլալ: Աստուած հատուցանող է իսկ սատանան մեր ոսոխը: Տնանկները նեղող չար մարդիկը կը զարհուրեցնէ: Լաւ չէ որ զրկեալները աղօթքներով, Աստուծոյ պատուհասը խնդրեն զրկողներուն վրայ, զի Աստուած ինք իր դատաստանաւ կը դատէ, ըստ այնմ կ'ըսէ. - "Ի՞նչ է վրէժխնդրութիւնը կամ հատուցումը, ես պիտի հատուցանեմ:" Հռոմ. 12.19: Այստեղ ևս նոյնը կարեւորութեամբ կը հաստատէ: "Այո, անոնց հանդէպ չուտով վրէժխնդիր կըլլայ:"" որպէսզի չարերը Աստուծոյ համբերութիւնը չարհամարհեն, իսկ անոնք որ նեղեալ են, յոյսով միութարուին: Այս ամէնքը կատարածը կը խորհրդանշեն, զի Աստուած արդարութեամբ կը դատէ: Ապա խօսքը կ'աւարտէ ըսելով.

8.- Իսկ Որդի մարդոյ գալով աշխարհ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞: Յայտնի կըլլայ որ բարեգործութիւնները սպառելով կը պակսին աշխարհէն, բայց և այնպէս Աստուածաբնութիւնը ոմանց մօտ կը մնայ: Որովհետեւ նեղը անբարի օրերուն գալով, իշխանութեամբ զօրացած կ'օրօքին դէմ կը կռուի զայն վերացնելու համար:

Դարձեալ, իրենք իրենց կարծեցեալ կերպով իբրեւ արդար պանծացողներուն և շատերը մեղադրողներուն վերաբերմամբ հետեւեալ առակը պատմեց: Ջար է ամբարտաւանութիւնը. Հոգեկան ախտերը ասկէ յառաջ կուգան և կրկնապատիկ վնաս կը պատճառեն: Թոյլ չեն տար որ բարին հաստատուի մեր մէջ, ուրիշ ախտերու նման, մարմնին հանդիստ չեն տար: Մարմնական ախտերը երբեմն ծոյլերուն և անփոյթներուն մօտ կը տեղաւորուին:

Իսկ ամբարտաւանութիւնը և մասամբ նորին, աշխոյժ և առաքինի մարդոց մօտ կ'երևի: Ուրեմն որպէսի վնասակար ախտէ ունէ մէկը չբռնուի, հետեւեալ առակը պատմեց. -

10.- Երկու մարդիկ տաճար դացին աղօթելու: Օրէնք էր որ Հոն գոհութիւն և կամ զոհ մատուցանէին: Մէկը Փարիսեցի էր, միւսը մաքսաւոր: Մին կը նկատուէր լաւագոյններէն իսկ միւսը չար որմէ անոնք կը գարշէին, նոյնիսկ կը բամբասէին զԹիսուս անոնցմէ հրաւէր ընդունելուն համար: Այս երկուքը քով քովի դնելով, մէկը ամբարտաւանութեան համար կը պատժէ, միւսն ալ խոնարհութեանը համար կ'արդարացնէ, ըսելով. - Փարիսեցին մեկուսի կեցած, աղօթք կը մատուցանէր, "Աստուած իմ, կ'ըսէր, գոհանամ քեզմէ, զի ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ կամ շնացող չեմ": Այսպիսի գոհութիւն մատուցանել աւելի չար գնահատուեցաւ քան անոնք որոնք կը տրտնջան. ըստ այնմ Հովիւները որոնք չարագործութենէ ետք կ'ըսէին. "Օրհնեալ է Տէրը, զի փարթամացանք." Զաք. 11.5: Ասոնց նման, այս ալ աղօթելով կը վնասուի, զի իբրև թէ բնաւ մեղաւոր չէ, կ'աղօթէ խնդրանք ներկայացնելու կարծես թէ անկարօտ ըլլալով: Ախտակիր բնութիւն ունենալով, ոչ իր յանցանքներուն համար, ոչ ալ ժամանակի ընթացքին դիւրասխալ բնութեամբ մոլորութիւններուն համար: Վասնզի ըստ Յոր երանելիին "ո՞վ առանց մեղքի է, մարդ անօրէնութիւն կ'ըմպէ." Յոր. 15.13: Արդ՝ այս բոլորէն կ'իմանանք թէ արդարներէն ոչ ոք կրնայ պարծիլ առաջի Աստուածային ամենատես բնութեան: Սա ամբարտաւանութեան ախտով կը մեծաբասէր իր վարքին մասին, գոհանալով կ'ըսէ. "Ուրիշ մարդոց նման չեմ": Յանտգնութեան սահմանները մեծցուց, այն աստիճան որ ամէնքը չար համարեց և միայն իր անձը արդարացուց: Իրօք, ի՞նչ շահ կայ ուրիշները նախատեսուն մէջ: Այն որուն ամենագործեալը կը հատուցանէ, նա է անսխալականը: Աստուած կը ճանչնայ արդարն ու ամբարեշտը: Իսկ սա փառասէր ախտէն թմրած, կ'ըսէ. - "Ուրիշ մարդոց նման չեմ": Արդարև ուրիշ մարդոց նման հեզ ու խոնարհ չէր, որոնց մէջ Աստուած կը հանգչի: Իրենց անձերը զսվողները լեցուն են պարասուելի թերութիւններով: Յետոյ դառնալով մաքսաւորին, այս մաքսաւորին պէս ալ չեմ կ'ըսէ: Զարդի մարդուն կողմէ մեծ ամբաստանութիւն մէջ է, ամբարտաւանօրէն մերձեկաններէն մին առաջ երկրպագելով թողութիւն կը խնդրէր: Այս բոլորին վրայ տակաւին անփակ բերանով կը յաւելու

12.- Եարթուան մէջ երկու անգամ պահք կը պահեմ և տասանորդս կուտամ: Ո՞վ յիմարութիւն, ի՞նչպիսի առաքնութեամբ կը պարծի, որո՞նք առջև ամբարտաւանութեամբ արբեցած կը բարբառի: Անշուշտ այսպիսիներէն զգուշացուց Յիսուս երբ ըսաւ, Զեր բոլոր պարտականութիւնները կատարելէն ետք, ըսէք թէ անպիտան ծառաներ էք, ինչ որ պէտք էր ընել, ըրինք:

13.- Մաքսաւորը մեկուսի կեցած, նոյնիսկ աչքերը դէպի երկինք չէր բարձրացնէր, այլ կուրծքը բախելով կ'ըսէր. – “Աստուած իմ, ներէ ինծի, մեղաւոր իմ:” Փարիսեցին որ ինքզինք արդար կը կարծէր, կործանման պատճառը ցոյց տալէ հտք, յանցաւորին արդարացումն ալ կը ցուցնէ: Եւ յայտնի անշուշտ ի յայտ կուգայ թէ մեր անկան սկիզբը արբարտականութիւնը եղաւ, վասն որոյ մեր բնութեան ստեղծիչը երբ կամեցաւ անկեալներս վերականգնել, խոնարհութեամբ մեր բնութիւնը առաւ որպէսզի Հպարտութեան վէրքը բուժէ և բարձրանալու ճանապարհն ալ ցոյց տայ: Արդ՝ Փարիսեցին մեր անկման առաջին պատճառով ախտացեալ, ինկաւ. իսկ մաքսաւորը փրկութեան երկրորդ դարձանը գտնելով, վերադարձաւ, Աստուծոյ, մեզ փրկողին շնորհօք: Ամենայն խոնարհութեամբ, իր անձը անարժան կը Համարէր երկնքին նայելու որը նման էր Մանասէի դարձին, որովհետեւ նա ևս ըսաւ “չեմ արժանի Հայր և տեսնել զբարձրութիւնս երկնից”, նոյնպէս և սա չէր կամէր աչքերը երկինք բարձրացնել, այլ կուրծքը բախելով կը Հառաչէր ըսելով “Աստուած թողութիւն շնորհէ մեղաւորիս”: Որովհետեւ զղջմամբ արդարացաւ, այն որ ծածկատեսն է, վկայեց և ըսաւ. –

14.- Ասիկա տունն զնաց աւելի արդարացած քան միւսը: Իրօք այս Տէկը մեղքերու ծովուն մէջ ալկոծեալ, նաւապետէն խնդրեց նաւահանգիստ Հասնիլ, ալիքներու վտանգէն ազատեցաւ: Իսկ միւսը նաւահանգիստին մէջ իսկ, բեռնելով մէկտեղ նաւունհետ ընկղմեցաւ, որովհետեւ նաւապետը երբև օգնական չփնտռեց, այլ անձնական ճարտարութեամբ ազատիլ փորձեց, այդ պատճառաւ ալ կը բացատրէ. –

14.- Ով որ ինքզինք բարձրացնէ՝ պիտի խոնարհի և ով որ ինքզինք կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ: Մարդ արարածը ինքնաբաւ չէ, այլ ամենակալին ձեռքն է որ կը խոնարհեցնէ կամ կը բարձրացնէ:

15.- Մանուկներ կը ներկայացնէին որպէսզի Յիսուս օրհնէր զանոնք, որովհետեւ գիտցան թէ այն ձեռքերը որոնք Հիւանդութիւնները կը բժշկէ, կը Հաստատէ նաև մանուկներու օրհնութիւնը:

Առաքեալները տեսնելով ասիկա, կը յանդիմանէին զանոնք: Իսկ նա որ ամէն տեղ խոնարհութեամբ գնաց և խոնարհութիւն սորվեցուց, ըսաւ. – “Թողուցէք որ մանուկները ինծի դան, մի արգիլէք անոնց, որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը այդպիսիներուն է:”

18.- Մեծատուն կամ իշխանձը տեսնելով թէ արքայութեան դռները մանուկներուն կամ անոնց նմանողներուն առջև կը բանայ, խանդավառութիւնով մօտեցաւ որպէսզի սորվի յաւիտեանական կեանքի ճանապարհին մասին և զայն կը կոչէ – վարդապետ՝ բարի: Յիսուս գոհ չմնաց անոր արտայայտութենէն, քանի որ պարզապէս եբրեւ սոսկ մարդ նկատեց զինք, վասն որոյ ըսաւ. –

19.- Ինչո՞ւ բարի կը կոչես, միայն Աստուած բարի է: Աստուած միայն բարի է ըսելով ոչ թէ իր անձը բարութենէն կը մեկուսացնէ, այլ որպէսզի սորվին ու Հասկնան թէ ինք ևս բարի է և միայն մարդ չէ:

20.- Գիտես պատուիրանները. մի շնար, մի սպաններ, մի գողնար, սուտ մի վկայեր, պատուէ Հայրդ ու մայրդ: Առաջին պատճառէն ետք, անոնք են երկրորդ պատճառը, անոնց Հանդէպ պատիւ կամ անարգանք, առաջին պատճառին պատիւ կամ անարգանք ընել կը նշանակէ:

21.- Ան ալ ստելով կը պատասխանէ. – “Այդ ամէնը պահած եմ մանկութենէս ի վեր՝ իսկ Յիսուս որպէսզի անոր թերակատար պարծենկոտութիւնը յանդիմանէ, կ’ըսէ. – “Մէկ բան տակաւին կը պակսի քեզի. ծախէ բոլոր ինչքերդ, բաժնէ աղքատներուն և երկնքի մէջ գանձ կ’ունենաս, յետո եկուր Հետեւէ ինծի:”

22.- Անոր գործը կ’ընեց և պակաս գտաւ: Եթէ ընկերոջ տար այնքան որքան ինքզինքին, ուրտեղէն՝ անոր ստացուածքները այսչափ բազմացան: Որպէսզի արդարանայ, բոլոր ստացուածքները աշխատներուն բաժնիլ, զինք վշտացուց: Յոյսը Աստուծոյ վրայ կեդրոնացնել և ոչ թէ ստացուածքներու, վասնզի երկուքին միանգամայն կարելի չէ ծառայել: Աշակերտները այս մասին տարակուսելով, կ’ըսէ. – “Աստուծոյ Համար անհնարինները, Հնարաւոր են: Ազգանքեր չի գովաբանաւ, այլ մարդկային բնութեան տկարութիւնները փոխել, դէպի կատարելութիւն ընթանալու:

28.- Այն ատեն Պետրոս իր և այլոց կողմէ, իբրեւ փոխարինութիւն օրէնքները պահելուն և պարզկներ ստանալու առնչութեամբ, Հարցուց . – “Մենք ամէն բան թողուցինք և քեզի Հետեւեցանք:”

29.- “Ճշմարիտ կ’ըսեմ Ձեզի, – ըսաւ Յիսուս –, չկայ մէկը որ թողած ըլլայ տուն, կին, եղբայրներ, ծնողք կամ զաւակներ Աստուծոյ արքայութեան Համար և բազմապատիւր չընդունի այս աշխարհի վրայ և յաւիտեանական կեանքը՝ Հանդերձեալ աշխարհի մէջ:”

31.- Տասներկուօրը մեկուսի առնելով ըսաւ անոնց. – “Ահաւասիկ երուսաղէմ կ’երթանք. պիտի երականանայ ինչ որ մարգարէները ըսած են Մարգրու Որդիի մասին: Պետի մատնուի Հեթանոսներուն, պիտի ծաղրուի, պիտի անարգուի, պիտի ձաղկին ու պիտի սպաննեն զինք սակայն երրորդ օրը յարութիւն պիտի առնէ:” Անոնք չհասկցան, քանի որ խօսքին իմաստը թաքնուած էր: Ըսուածները պատահելէն հողք պիտի յիշէին այս բոլորը:

35.- Մինչ Յիսուս երեքովի կը մօտենար ճամբուն վրայ երկու կոյրեր, օրինակ Հրէից և Հեթանոսաց, նստած կը մնային սպասելով Աստուածային լոյսին որ պիտի ծագէր խաւարին և մահուան ստուերին մէջ նստողներուն համար: Արդ՝ Յիսուսի անցքին առթիւ Հարցուցին թէ ո՞վ է: Նախանձորդները փոքրացուցին զայն, անոր փառքին նախանձելով, ըսին թէ Նազովրեցին է: Կոյրերը Հասկցան թէ նախանձի Համար կ’ըսէին, ատողները թողուցին և մարգարէներուն Հետեցան և ազադակեցին “Յիսուս, Դաւիթի որդի, գթա՛ մեր վրայ:” Անոնք ալ դժկամակելով կը սաստէին որպէսզի լռեն: Կոյրերը աւելի բարձր ձայնով կ’աղաղակէին, հաւատացեալներուն օրինակ Հանդիմանալով որոնք ոչ սպառնալիքներէն վախցան ոչ ալ Հարուածներուն կարեւորութիւն տուին անոր Աստուածութիւնը քարոզելու համար:

40.- Յիսուս կանգ առաւ և հրամայեց որ կանչեն զիրենք: Հարցուց, ի՞նչ կուղէք որ ընեմ ձեզի: “Տէր՝ թող մեր աչքերը բացուին ու տեսնենք: Յիսուս տեսնելով անոնց ամուր Հաւատքը, լոյսին պարզէր կը շնորհէ, օրինակ ներքին մարդուն լուսաւորութեան:

Ժողովուրդը կատարուածը տեսնելով, գովաբանութիւններ բարձրացուց Աստուծոյ:

ԶԱԽԷՆ ԱՐՔ. ԶԻՆԶԻՆՍԱՆ

Ս. ԶԱՏԻԿ ՁԷ ԱՍՏ ԱՅԼ ՅԱՐԵԱԻ

...Եւ մտեալ ի ներքս տեսին երիտասարդ մի, զի նստէր ընդ աջն կողմանէ և զարհուրեցան. և նա ասէ ցնոսա, «Մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք, զնազովքեցի զՅաչելեալն. չէ աստ այլ յարեաւ. տեսէք զտեղին ուր եղին զնա»:

(Մարկոս ԺԶ:5-6)

Հրեաներու Պասեքի տօնի շարժուման ընթացքին պատահած դէպքերը այնքան զխնայալորտ արագութեամբ իրար յաջորդած էին, որ նոյնիսկ իրենց Տիրոջ թաղումէն ետք աշակերտները տակաւին կը փորձէին ըմբռնել պատահածը և չէին յաջողեր եղբակացութեան մը յանգիլ: Հաւանաբար անոնց մէջ զտնուեցան ոմանք որոնք սկսան խորհիլ ծաղկազարդի օրը թափօր կազմած ամբոխին նման. «փրկիչ» մը, «արքայ» մը կ'ակնկալէին, սակայն այդ կարծեցեալ արքան հասարակ աւազակներու հետ խաչի անարդ մահուան դատապարտուած ու թաղուած էր փոխ առնուած գերեզմանի մը մէջ:

Ահա այս է պատկերը որ կու տան մեզի այսօր Սուրբ Գրական ընթերցուածները: Ուրմը մը յուսահատ և յուսախար մարդիկ. այլևս չկար իրենց տէրն ու վարդապետը. իրենց երազները անգութօրէն փչրուած էին և հաւանաբար սկսած էին խորհիլ վերադառնալ իրենց ուռկաններուն կամ մաքսաւորի սեղաններուն, և փորձել մոռնալ պատահածը, կարծելով թէ դառն ու քաղցր տեսիլք մըն էր որ ապրած էին հաւաքաբար: Թերևս ալ անոնք սկսան երազի պէս վերապրիլ այն հին օրերը երբ հետեւած էին Գալիլիացի Վարդապետին՝ որ խօսած էր առաւել կեանքի մասին ու հիմա ... ան մեռած էր:

Նազովքեցին խոստացած էր նոր թագաւորութիւն մը և երկար խօսած անոր մասին, բայց թագաւորներ հասարակ ոճրագործներու նման չէին կրնար մեռնիլ ոճրագործներու սահմանուած խաչերու վրայ: Ան խօսած էր Երկնաւոր Հայր Աստուծոյ մը մասին, բայց երբ ամէն ժամանակէ աւելի կ'արիքը զգացուած էր այդ Աստուծոյն, Ան անյայտացած էր: Բնութեան ծոցին մէջ մեծցած այդ մարդոցմէ ոմանց արժանապատուութիւնը վիրաւորուած էր, որովհետեւ կը կարծէին թէ իրենք հետեւած էին սովորական բաղդախնդրի մը ու կորսնցուցած իրենց ընտանիքներն ու ապագան: Անոնք կը խորհէին թէ քանի Յիսուս մեռած էր ուրեմն անոր վարդապետած սկզբունքները ևս կը դադրէին ըլլալէ ի զօրու: Առաջին Զատիկական առաւօտուն հաւաստեցէն զգացումներն ու տպաւորութիւնները մեր Տիրոջ աշակերտներուն և հետեւորդներուն, այլևս անիմաստ էր հաւատալ. ամէն ինչ վերջացած էր խայտառակ կերպով: Սակայն այս բոլորը տեղի ունեցան նախքան գերեզմանի քարին զլորիլը, որ պիտի դառնար ամենահամոզիչ պատասխանը բոլոր անոնց՝ որոնք առաջնորդուած էին ու տակաւին կ'առաջնորդուին աւելի կասկածներով՝ քան թէ հաւատքով. կարելիին հաւանականութեամբ՝ քան թէ անկարելիին:

Հրէական սովորութեան համաձայն խումբ մը կիներ, թաղումէն երեք օրեր ետք, զխաւորութեամբ Յիսուսի մօր՝ Մարիամի, գերեզման գացին օժելու անոր մարմինը. ու այդ ծանր խոհերու մէջ կը մտածէին նաև թէ ո՞վ պիտի զլորէր գերեզմանին ծանր քարը, որ իբր զուտ կը ծառայէր: Մագդաղենացի Մարիամ -որ գերեզմանին ծանր քարը, որ իբր զուտ կը ծառայէր՝ Մագդաղենացի Մարիամ -որ մեծագոյն բարեբարեալը եղած էր Քրիստոսի, քանի ներուած էր անոր

անբարոյութեամբ հարուստ անցեալը- առաջինն էր որ հասած էր գերեզման և հսկայ քարը մէկդի գտած, ու ներսը գտնուող սպիտակագգեստ անծանօթ երիտասարդ մը տուաւ անոր անհատատալի ու անսպասելի աւետիսը. «Ձէ աստ, այլ յարեաւ որպէս ասացն»։ Կրնա՞ք երեակայել իւղաբեր կիներուն և ապա անոնցմէ վերջ իրենց Տիրոջ գերեզմանը վազող աշակերտներուն ուրախութիւնը. ուրեմն ան տակաւին կ'ապրէր ինչպէս որ ըսած էր։ Ուրեմն մահը այլևս վախճանը չէր ամէն ինչի։ Այդ վայրկեանէն սկսեալ, Քրիստոսի հետեւորդներուն համար մահը այլևս կը դադրէր սարսափելի և տգեղ իրականութիւն մը ըլլալէ ու կ'առնէր նոր իմաստ մը. մահով էր որ իրա՛ւ հաւատացեալին համար կը սկսէր նոր ու աւելի փառաւորեալ կեանք մը։

Զատկական առաւօտեան այդ գլորած քարը կու գար Հիմնովին յեղաշրջելու մարդուն դիրքաւորումը մահուան հանդէպ։ Այդ քարին գլորելէն ի վեր աշխարհ այլևս նոյնը չմնաց։ Ժամանակին, Հին աշխարհի մարդիկ կը խորհէին թէ երկրագունտը հարթ ու տափարակ գետին մըն էր, սակայն Քոլոմպոսի դէպի նոր Աշխարհ ուղևորութեամբ գիտութեան և մարդոց միտքերուն վրայէն քար մը գլորեցաւ և մարդոց մտայնութիւնները Հիմնովին փոխուեցան։ Հին գիտնականներ ու աստուածաբաններ կը հաւատային թէ մեր երկրագունդը կեղրոնն էր տիեզերքին, բայց Կալիլէո գլորեց այդ սխալ կարծիքի քարը և աշխարհ փոխուեցաւ։ Այնպէս ինչպէս իւրաքանչիւր գիտ քար մը գլորած է աշխարհի ու մարդոց միտքերէն և նոր մօտեցում տուած մարդուն դէպի բնութիւն ունեցած իր հայեցակէտին, նոյնպէս և աւելիով, Քրիստոսի գերեզմանի քարին գլորումը եկաւ Մարդուն՝ Կեանքի և Մահուան հանդէպ ունեցած գաղափարները Հիմնովին յեղաշրջելու, և նոր ու աւելի դրական մօտեցում մը տալու մեզի ՄԱՀ և ԿԵԱՆՔ եղբրերուն նկատմամբ։

Աստուածորդին խաչուեցաւ, թաղուեցաւ ու կ'ապրի չատերու սրտին մէջ, ինչպէս մենք կը սիրենք հերոսները ապրեցնել մեր սիրտերուն մէջ։ Սակայն և այնպէս այս չէ Զատկուան իրա՛ւ պատգամը։ Ճիշդ է որ աւետարանները կը նկարագրեն այս բոլորը հոգեխոտով ձևով մը, բայց ամենակարևորը այն է որ աշակերտները գտան **ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆ** մը միայն, ու այդ նոյն թափուր գերեզմանի խորհուրդին է որ հաւատացած է քրիստոնեան դարերով։ Ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Եթէ մենք չենք հաւատար Քրիստոսի Յարութեան -որ է թափուր գերեզմանին- այն ժամանակ մեր հաւատքը անիմաստ է և մենք կը դառնանք մարդիկ առանց Աստուծոյ և առանց յոյսի»։ Այս է Զատկուան պատմութիւնը և իմաստը անոր։

ԺԹ դարու նշանաւոր անգլիացի քարոզիչ մը, հետեւեալ աղու և տպաւորիչ պատմութեամբ կու տայ Քրիստոսի մեղքին ու մահուան վրայ տարած յաղթանակին իսկական իմաստը։ Ան կը պատմէ թէ ինչպէս օր մը չուկան քալած ատեն կը տեսնէ փղերիկ տղեկ մը, ձեռքին հինգած վանդակ մը ու մէջը սովորական ճնճղուկ մը։ Երբ քարոզիչը տղեկին կը հարցնէ թէ ի՞նչ կը մտադրէր ընել այդ ճնճղուկին, տղեկը անհօգօրէն և սինիք ձևով մը կ'ըսէ, «Քիչ մը խաղալէ ետք

անոր հետ պիտի սպանենմ զայն»։ Բարի քարոզիչը մտահոգ ճնճղուկին վիճակով, կը հարցնէ տղեկին եթէ կ'ուզէր ծախել թռչնակը և քանիի՞:

—Երկու ոսկի, կ'ըսէ տղեկը, որ ահեղիօրէն մեծ գումար մըն էր պարզ ճնճղուկի մը համար:

Սակայն և այնպէս, քարոզիչը վճարելով երկու ոսկիի գումարը, կ'անէ վանդակը ու տղեկին ներկայութեան ազատ կ'արձակէ թռչնակը և վանդակը առնելով հետը կը բերէ եկեղեցի և կը դնէ խորանին վրայ:

Յաջորդ օրը Ջատիկ ըլլալով, երբ հաւատացեալները կը սկսին հասնիլ եկեղեցի, խորանին վրայ կը տեսնեն ծոմած ճաղերով, պարապ, հին վանդակ մը: Քարոզի ժամանակ, բարի կրօնականը կ'ընէ տղեկին ու ճնճղուկին պատմութիւնը և կ'աւելցնէ. «Ճիշդ նոյն բանն էր որ մեր Տէրը Քրիստոս ըրաւ մեզի համար: Մեզը կոչուող ախտը մեզ առած էր իր վանդակին մէջ ու մենք կը տուայտէինք մահուան երկիւղէն բռնուած. բայց Քրիստոս զալով հարցուց մեղքին թէ ան ի՞նչ կը մտադրէր ընել մեզի՝ Մարդոց: Մեզքը կը պատասխանէ ըսելով.

—Նախ իրենց պիտի սորվեցնեմ իրար ատել և երբ ձանձրանամ իրենցմէ պիտի սպանենմ զիրենք:

Քրիստոս հարց տուաւ Մեղքին թէ ի՞նչ կը պահանջէր մեզ ազատ արձակելու համար. որուն ան կը պատասխանէ ըսելով.

—Սակայն ի՞նչ պէտք ունիս ասոնց, ասոնք քեզ պիտի ատեն, պիտի թքեն քիտի ու ապա խաչ պիտի հանեն: Սակայն եթէ անպայման կ'ուզես ունենալ զիրենք, ասոնք քեզի պիտի արժեն քու ամբողջ արցունքներդ ու երակներուդ մէջ Հոսող արիւնը. մէկ խօսքով քու ամբողջ կեանքդ»: Ու պատմութեան մնացած մասը ծանօթ է բոլորիս:

Այս է պատգամը Ջատիկին, սիրելի հաւատացեալներ: Մահը պարտուած է ու կեանքը յաղթական: Մենք, պատմութեան ճնճղուկին նման, այլեւ ազատ ենք մեղքի ու մահուան վանդակներու պարփակումէն: Մենք այլեւ կրնանք քալել բարձրագոյնի և արժանապատուութեամբ. մենք կրնանք քալել լեցուած յոյսով և ուրախութեամբ մեր աչքերուն և սիրտերուն մէջ: Բայց մանաւանդ, մենք այլեւ կրնանք մենք զմեզ զգալ զօրաւոր, քանի Քրիստոս աւելի զօրաւոր է քան աշխարհի բոլոր մեղքերն ու զերեզմանները: Ջատիկը սիրելի եղբայրներ և քոյրեր այսօր և յաւիտեան մեր Փրկչին հրաշափառ Յարութեամբ մեզի տրուած Նոր կեանքն է:

Թերահաւատին կամ անհաւատին համար մահը վախճանն է ամէն ինչի, մեր կեանքերուն, մեր երազներուն, մեր բարեկամութիւններուն և մեր սէրերուն, որ իր հետ կը բերէ միայն վերջալոյսեր, տխրութիւն ու սուգ: Սակայն, բոլոր անոնք՝ որոնց սիրտերը լեցուն են Աստուծոյ և Անոր Որդւոյն՝ Քրիստոսի հաւատքով, անոնց համար Մահը կը դառնայ նոր արշալոյս մը, նոր սկիզբ մը, նոր կեանք մը լայնատարած Հորիզոններով: Թող այս խոհերով, զգացումներով ու սիրով ողջունենք իրար ըսելով. «ՔՐԻՍՏՈՍ ՑԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

ՆՈՒՐԶԱՆ ԵՊՍ.

ԼՍԵՆՔ՝ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

Մեր ետեւ կը թողումք վախերով,
յուսախարութիւններով եւ անստուգու-
թիւններով խռովաշոյզ տարի մը:

Անհաշուելի թիւ կը կազմեն
հաւատքէ ու ծագած ամբարիշտները,
որոնք՝ անցնող երկու հազար տարիներու
ընթացքին, չուզեցին լսել այն միւս
արեւաշող ՃԱՄՐՈՒՆ մասին, որ իր
յաւիտեանկան շողարձակումով կը
զատորոշուի երկրի միւս մոլորեցուցիչ
ճամբաներէն:

Խաւարաշունչ թերահաւատներուն
համար՝ բոլոր ճամբաները նոյնն են,
յատկապէս այն ճամբան, ուրկէ
սովորաբար կը քալեն օրուան բոլոր
ժամերուն, ուշադիր ականջ տալով իրենց
սրտի նիւթապաշտ քարախումներուն,
հանրային պատրալից կարծիքներուն եւ
իրենց բնագոյային բերումներուն, որոնք
կը հարթեն իրենց քայլերուն առջեւ
մոլորութիւններու, փուլումներու եւ
սայթափումներու մահուան ճանապարհը:

Անոնք՝ ըստ իրենց մոլար
հայեցողութիւններուն, նկատի ունեցան
միայն ժամանակի ապականացու
կլիմային տակ կատարուող քարերու
քարքարոսութիւնը, եւ ասկէ առաջ ու
վեր՝ մարդկային լսողութիւնը փայփայող՝
սիրային ու սեռային լպիրշ
բարոզութիւնները:

Անհասկնալի է մեզի համար, թէ
ի՞նչու այս անաստուածութեան
մունեցիկները, դեռ կը յամառին մնալ
պայթուցիկ վտանգներով ականուած նոյն
ճամբուն վրայ, ուրկէ քալեցին երէկ, ու
կը քալեն այսօր, եւ պիտի քալեն վաղը,
ու անկէ անդին շարունակաբար,
նաշակելով մէկը միւսէն ծանրակշիռ

դառնութիւններ, եւ առաւել կսկծալի
դառնութիւններ, մինչեւ անխուսափելի
ու անբաղձալի մահուան ժամանումը:

Ինչո՞ւ կը նախընտրեն վտանգնե-
րով խոչընդոտուած երիւնկի սարսա-
փազդու ճանապարհը, երբ անդին կայ
արեւափառ ցերեկով եւ աստղազարդ
գիշերով ապահով ճամբան, զոր ցոյց
տուաւ մեր Տէրը իմաստուն Մոգերուն:

Միթէ Քրիստոնեայ աշխարհին
հաւատացեալներուն համար նախընտրելի
չէ՞ քալել այդ ճամբէն, որ կը սկսի
նորածին Յիսուսի մատուցելու կը յանգի
Գողգոթայի զոհողութեան գագաթը:

Աւետարանի հաւատքով ապրող
ու պայմարող քրիստոնեաները՝ լաւ կը
հասկնան, որ իրենց պայմարը մեղքին
դէմ, սուրբ է ու յաւիտեանական: Անոնք
վստահ են, թէ այդ սրբազան պայմարը
պիտի հասնի իր վճռական աւարին
վերջնական յաղթանակով:

Եթէ պահ մը՝ մեր աչքերը ուշադիր
տարածենք մեր առօրեայ վշտալի
պատահարներուն վրայ, որոշ պիտի
տեսնենք, որ մարդկային նախապա-
շարումները, աւելորդապաշտութիւնները,
բռնատիրական քարքարոսութիւնները եւ
ֆստմեղի ռեիւրներու անհատում շարքը,
հեզմութեան վերածած են առաքիճութեան
եւ քարեպաշտութեան արտայայտութիւն-
ները ու տուած են ժամանակի
իրադարձութիւններուն մանկասպան
Հերովդէսի ռերախանձ ոգին:

Ի՞նչ ի՞նչ ճառագայթող արժէքներ
ու արժանիքներ կը շրջուին, յաւերժաշու
սրբութիւններ կ'արհամարհուին,
ստոհմաշէն աւանդութիւններ ժամանակա-
վրէպ կը հոգակուին ու ճշմարտութեան

դէմ սուտին շղթայագերծած պայքարը կը ստանայ օրըստօրէ անյաղթահարելի սաստկութիւն:

Կարծես, երկնային հրաշագործ գօրութիւն մը միայն կրնայ չարին գրողը կասեցնել եւ բանալ մարդկութեան նակատագրին առջեւ՝ ԱՅՆ ՄԻԻՍ ՃԱՄԲԱՆ, որ ճամբան է ճշմարտութեան, արդարութեան հաւատով լուսաւորուած քրիստոնեայ հաւատացեալին:

Ժամանակը հիմա է, որ ամէնքս ալ՝ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան յոյսերով՝ մտնենք ազգովին այս անգուգական ճամբէն ներս, որ պիտի առաջնորդէ մեր կեանքը խաւարէն դէպի թոյս եւ քարձրացնէ երկրէն երկինք:

Ժամանակի հրամայական պահանջն է բոլոր հաւատացեալ հայերէն, որ չլենցնէ այս սրբազան պայքարը, կ'ըսենք պայքարը եւ ոչ թէ յաղթութիւնը, որովհետեւ, Աստուած չուզեր մեզմէ յաղթութիւններ: Ան կու տայ մեզի յաղթանակը: Կ'ուզէ մեզմէ միայն պայքար, յաղթութիւնը՝ իր նուէրն է:

Հին տարուան յուսալիչ օրերը կուտան մեզի ապացոյցը, թէ մեր կեանքը դէպի փրկութիւն ուղեւորող միակ վստահելի ճամբան, Փրկչին շնորհագարդ կեանքով քահաւորուած ճանապարհն է, աշխարհի բոլոր միւս ճամբաները սուտ են ու կը բռնեն մեզ դէպի փլուզում ու եղբրական մահ:

Բարեպաշտ ու քարեհոգի քրիստոնեան, որ Բեթլեհէմի ճառագայթող ԱՍՏՂԷՆ կ'առնէ իր հաւատին ճերշդչումը, չ'երկնջիր ո՛չ խաւարակուռ գիշերէն եւ ոչ ալ խաւարի սեւ ուժերէն:

Ան լաւ սերտած է, թէ ինչպէս պիտի զինուի ու պայքարի Մեղքին Բռնակալին սաղարմններուն դէմ, առանց իր կեանքին ապահովութիւնը վտանգելու, առանց քայլ մը նահանջելու եւ անձնատրուութեան ճերմակ դրօշակը պարզելու:

Լոյսին ընական յատկութիւնն է, ընդմիջող յաղթել ու փարատել խաւարը: Պայման է սակայն, որ հաւատացեալը, չթողու, որ Բեթլեհէմի Աստղին շողերը շիջին իր շուրջը եւ իր մէջ:

Ո՞ր է խաղաղութիւնը կը հարցնեն, ո՛չ միայն մետաղացած իտէալներով նիւթապաշտ մարդիկ, այլ նաեւ անոնք, որոնց մէջ կը նշուեն Բեթլեհէմի Աստղին շողերը:

Այսօր անպարագիծ մարտադաշտի մը վերածուած է ամբողջ աշխարհը: Եթէ ամէն տեղ նակատամարտ չկայ, կայ սակայն, ամէն հողամասի վրայ գօրաբնակ մը, յարձակողական եւ պաշտպանողական պատնէշներու վրայ:

Տիեզերական Հոգիէն խզուած մարդը՝ ընկերային կեանքի մէջ, ուրիշ բան չի կրնար ըլլալ, եթէ ոչ քառոյզաւորկ արարած մը, անբան անասունի չափանիշով:

Ինչ կերպով ալ հաւատան դարուս թերահաւատները, մենք որպէս Քրիստոսի հետեւորդներ՝ լայն բանամք մեր սիրտները եւ տանք առաջնակարգ տեղը Անգուգական Խաղաղարարին, որ իր հրաշալոյս յայտնութեամբ հիմը դրաւ նոր խաղաղութեան, նոր իտէալներու, նոր կեանքի, քառոյզական նոր չափանիշներու եւ նոր թուականի, որ կը կոչուի Փրկչական:

Դժբախտաբար, կայ ամէն բան իր եսին ենթարկելու մարդկային փառատենչութիւնը, որ խաղաղութիւնը կը հեռացնէ ժողովուրդի կեանքէն եւ պատճառ կը դառնայ աշխարհացունց պատուհասներու:

Հինաւուրց ժողովուրդները, առաւել կամ նուազ լուսաւորեալ կը համարուէին իրենց Վիրգիլիոսներով, Հոմերոսներով, Սոկրատէսներով, Պլատոններով եւ քաղաքապետացի

իմաստասերներով: Բայց ժամանակը եկաւ, անոնք ալ բռնեցին բարոյական փլուզումներու ճամբան եւ իրենց ստեղծած բիւրաւոր լոյսերուն մէջ, չուզեցին տեսնել այն ԱՐԵՔԱԿՆԱՓԱՅԼ ԱՍՏՂԸ, որով ջահաւորութեան բարեհոգի հովիւները եւ արեւելի գիտուն Մոզերը:

Պատմութիւնը կը հաստատէ, թէ ամէն հանճարեղ մտաւորական իր բարձրարժէք երկերով, գիտնականներ իրենց զարմանահրաշ գիտելով եւ աշխարհահռչակ կրօնապետներ իրենց հոգեւոր հարուստ ստեղծագործութիւններով, պահ մը միայն խանդավառելէ ետք, իրենց դարաշրջանի սերունդները, անցեր են պատմութեան: Բայց Քրիստոս՝ իր ծնած օրէն անբաժան է մեր կեանքէն: Մեզի հետ է օրուան բոլոր ժամերուն: Կը քալէ մեր առջեւէն ու մենք կ'երթանք իր ետեւէն: Հաւատարմօրէն կը հետեւինք իր լուսաւոր հետքերուն, այն անտարակուսելի հաւատով, որ այս մեր երկրաւոր ուղեւորութիւնը՝ օր մը պիտի յանգի փառալոյս հանգրուանի մը, ուրկէ անդին կը պարզուին յաւիտենական կեանքի աներեկոյ հորիզոնները:

Մարդկութեան հռչակուած մեծութիւններէն միայն ԻՆՔՆ է, անգուգական օրէն ԻՆՔԸ, որ թանգարաններէն, մատենադարաններէն ու պատմութեան էջերէն դուրս, տրոփող իրականութեան հետ կը շնչէ ու իր պերճիմաստ պատգամներով՝ կը յուսադրէ լիւաժը, կը սփռէ սգաւորը, կը զօրացնէ տկարը, կը խաղաղեցնէ խռովեալը, կը սրտապնդէ հիւանդը եւ կ'ըլլայ անձնապէս վստահելի ընկեր մը եւ իմաստուն խորհրդատու մը, որպէս հարազատ եղբայր մը, անբաժան մեր երկրի ու երկնքի կեանքէն:

Հայ ժողովուրդին եւ համայն մարդկութեան խաղաղութիւնը, առանց ԽԱՂԱՂԱՐԱՐԻՆ (գործածելով ճշմարտութեան վերջին ԲԱՌԸ) ցնորք ու ինքնախաբէութիւն է:

Աշխարհ պիտի չխաղաղի եւ ոչ մէկ երկիր պիտի ճանչնայ իսկական ու տեւական խաղաղութիւնը, մինչեւ որ մարդիկ լուսաւորեն իրենց հոգիները Ա. ԾՆՆԴԵԱՆ ԱԻԵՏԱԲԵՐ ԱՍՏՂԻՆ ՇՈՂԵՐՈՎԸ:

ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

ԲԵՐՆԵՍ ՊՏՈՒՂ ԿՈՒ ՏԱՅ

**"Ով տեր, տարի մը եւս ժամանակ տուր ինձ,
այդ ծառին շուրջը փորեմ եւ աղբ դնեմ,
թերեւս պտուղ կուտայ, եթէ չտայ
յաջորդ տարին կտրէ զայն"**

Ահա այնքան պարզ խօսակցութիւն մըն է այս այգեպանին եւ իր գործատիրոջ միջեւ որ մեր օրերու կացութեան ալ կը յարմարի: Երբ դուրս եւ ես ժամերով, շաբաթներով եւ կամ տարիներով գործենք, կը սպասենք որ մեր աշխատանքը իր արդիւնքը տայ եւ մենք ալ անկէ օգտուինք: Այգեպանն ալ թգենիի ծառ մը տնկեց կ'ըսէ Յիսուս, երեւ տարի սպասեց անոր պտուղը վայելելու, բայց աւաղ, իր յոյսը պարապ ելաւ: Հրամայեց իր գործատրին որ արմատախիլ ընէ այդ ծառը:

Գործատրի պատասխանը հետաքրքրական է անով որ կը թելադրէ համբերութիւն եւ ժամանակ տալ վերջնական փառքի գործ մը ընելու տուալ: **"Տարի մը եւս ժամանակ տուր ինձի,"** կ'ըսէ ան, **"որպէսզի քիչ մը աւելի խնամք տանիմ անոր, արմատի մօտերու հողերը գրգռեմ եւ աղբ դնեմ, (այսինքն սնունդ տամ), եւ եթէ գալ տալի ալ պտուղ չտայ, այն ատեն արմատախիլ կ'ընեմ զայն:"**

Կ'երեւի այգեպանը համաձայն գտնուեցաւ այս թելադրութեան: Բայց թէ յաջորդ տարին պտուղ ստացա՞ւ կամ ոչ այդ յայտնի չէ, եւ թերեւս ալ անկարելի է գիտնալը: Վասնզի անպտուղ թգենիի առակին նշանակութիւնը՝ մէկ կամ միւս ձեւով, չփոխուիր խնդրանքին պատասխանը գիտնալով եւ կամ չգիտնալով: Ուրեմն, ի՞նչ կը սոր վեցնէ առակը:

Թգենիի ծառը իր փաղցր պտուղով հանոյք կը պատճառէ զայն նաշակողներուն - ունի իր որոշ նկարագիրը՝ մեղրի նմանող իր համով: Թուզը կը գործածուի զանազան տեսակի անուշեղեններ պատրաստելու: Թգենիի ծառը հասարակ ծառ մըն է միջին արեւելի մէջ, մանաւանդ Պաղեստինի մէջ: Կը բուսնի քարեխառն կլիմայ ունեցող երկիրներու մէջ: Ունի խոշոր ծաւալով տերեւներ որոնց տուած շուքը կրնայ յոգնած գործատրին նպաստել որ զայն նստի անոր տակ եւ հանգստանայ:

Վայրկեան մը մտածենք այն ծառին մասին որ տերեւ ունի եւ պտուղ չտար: Զէ՞ք կարծիք որ պարապ տեղը հողի մէկ մասը կը գրաւէ եւ արգելի կ'ըլլայ որ ուրիշ պտղատու ծառեր հանդացնեն մարդիկ: Այսպիսի անպտղաբեր ծառեր կը նմանին այն մարդոց որ մարդկային ընկերութեան մէջ կ'ապրին, անկէ կ'օգտուին, սակայն իրենք ոչ մէկ կերպով իրենց նպաստը կը բերեն այդ ընկերութեան յաջողութեան եւ բարեկաման համար: Անոնք կ'ապրին, կ'ուտեն եւ կը վայելեն ամէն բարիք, եւ կ'ընեն մէկ բան միայն, մարդկութեան թիւը կ'աւելցնեն: Իրականին մէջ այսպիսիներ բոլորն են ընկերութեան վրայ, ինչպէս անպտուղ թգենին պարապ տեղը հողի մէջ տեղ կը գրաւէ:

Եկէ՛ք այս ծառը քաղդատենք մարդկային ընկերութեան մէջ այն մարդոց որոնք կազմակերպութիւններու մէջ պաշտօններ կը վերցնեն, բայց իրենց հասակը ցուցնելէ անդին ոչինչ կ'ընեն: Կան այսպիսիներ

հաղափական, բարեգործական, եկեղեցական եւ այլ կազմակերպութեանց մէջ: Նթէ այսպիսիներ իրենց գրաւած աթոռներէն վար իջնեն, շատ հաւանական է որ աւելի արժանաւոր եւ պտղատու անհատներ խղճմտօրէն պիտի աշխատին եւ իրենցմէ սպասուած արդիւնքը պիտի տան: Նախորդիւ յիշուած մարդոց ըրածը եւ վարուելակերպը հաւասար է ժամականառութեան եւ անխղճութեան:

Ի՞նչ ըսել քոյոր այն անուանապէս ֆրիստոնեայ անհատներու մասին, որոնք Քրիստոսի անունը շապիկ հագնելու պէս վրանին կ'առնեն, սակայն երբ նկատես անոնց կեանքի պատկերը, բարոյական կենցաղավարութիւնը, եկեղեցական կանոններու հպատակութիւնը եւ ժամապաշտութեանց մասնակցութիւնը, պիտի տեսնես որ ա'յնքան ետ մնացած են որ պատիւ չեն բերեր Քրիստոսի անունին: Այսպիսիներ կը գտնենք մեր ժողովուրդի անդամներուն ինչպէս եւ եկեղեցականներու շարքերէն ներս:

Ի՞նչպէս պիտի դատուին այս քոյորը: Պատասխանը յստակ է, ըստ Յիսուսի խօսքին. **"Ես եմ որթատունկը եւ դուք անոր ճիւղերն էք: Ով որ իմ վրայ հաստատուած է պտուղ կուտայ: Իսկ այն որ չէ հաստատուած, այդ ճիւղը կը չորնայ, մարդիկ կը հաւաքեն զայն եւ կրակի մէջ կ'այրեն:"** Ահա թէ ինչու իբր ծառ, իբր Աստուծոյ կողմէ ստեղծուած մարդ արարած սմէն մէկս կոչուած ենք պտղատու ըլլալու: Ի՞նչ կ'արժէ ապրիլ, բայց ոչ մէկ օգուտ ունենալ մարդկութեան, կամ մեր՝ հայերուս պարագային, չնպաստել մեր ազգային եւ հոգեւոր նպատակներու զարգացման եւ յառաջդիմութեան:

Ճիշտ է որ Աստուած, ինչպէս եւ այս այգեպանը, համբերութիւն ունենալու էին քիչ մը եւս ժամանակ տալ, որպէսզի անհատը ինքզինքին, եւ կամ գործաւորը ծառին, հոգ տանի: Ահա այդ ժամանակն է որ այսօր կը տրուի մեզի, ուղղելու մեր հոգեւոր կեանքը, եթէ սխալ կը գործենք ուղղենք զայն ապրած ժամանակ, ինչպէս քօիշկը մասնաւոր դեղեր կուտայ մեզի երբ ֆիզիքական մարմինը հիւանդանայ: Ան ժամանակ կուտայ որպէսզի դեղերը իրենց գործը կատարեն եւ մեզ առողջացնեն:

Ահա թէ ինչպէս Քրիստոսի ուսուցումները պէտք է ի մտի բերենք եւ օգտագործենք, որպէսզի ժամանակ շահինք եւ ընդունելի դառնանք մեր երկնաւոր Հօր, ընդունուելու Իր արքայութեան մէջ եւ ստանալու խոստացուած աստուածային ներկայութիւնը: Ամէն:

ՇԱՀԷ Ա. ԲԶՆՅ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ՄԵՂՔԻՆ ԴԻՄԱԳԻԾԸ

Հիւսիսային Ափրիկէի բանակներուն ընդհանոր հրամանատար՝ Մոնդկոմըրի, իր յաղթական բանակով, աւազմորիկներու մէջէն, աննահանջ կը յառաջանար դէպի վերջնական յաղթութիւն գրաւելով գերման դիրքերը: Իր թշնամի բանակի հրամանատար Ռոմէլին նկարը ան կախած է իր ժողովավրանին մէջ:

Գերման վերի հրամանատար Ռոմէլին դիմագիծը, որուն կը սեւեռէր Մոնդկոմըրի իր աչքերը վրանին մէջ, չէ՛ր այն նկարը, որուն ծանօթ էր Անգլիոյ ժողովուրդը: Դաշնակից ազգերու ֆաղափացիներ, պրոպականտի դիտումով տարբեր դիմագիծով ներկայացուցած էին մարաջախտ Ռոմէլը: Անոնք կը տեսնէին *Քազան* մը կամ հրէշ մը այդ դիմագիծին ներքեւ: Մինչ հրամանատար Մոնդկոմըրի որ կը պատերազմէր յաղթելու և նուաճելու համար իր թշնամին, պարտաւոր էր գիտնալ ու ճանչնալ իրական թշնամին՝ իր իսկական հակառակորդ՝ Ռոմէլը:

20 երկար դարեր անցած են այն նկարագրութենէն, երբ Յիսուս, որպէս յաղթահարողը ու նուաճողը մեղքին ու մահուան, նկարագրած ու պատկերացուցած է հարազատ ու իսկական մեղքը:

Մովսէս՝ իր ազգին հովիւ, առաջնորդ և օրէնսդիր, մեղքը ներկայացուցած էր որպէս օրինազանցութիւն և անօրէնութիւն: Իսրայելի և Յուդայի թագաւորութիւններու շրջանին, մարգարէական Շուսլը փչեց համեստ կղերականներու հոգւոյն, որոնք դարձան հոգեւոր առաջնորդները խաբխափող ու խղճահար մարդոց: Այս աշխարհական հոգին ստացողները կը *վախնային* Աստուծմէ ու կ'ուզէին արդարութեամբ ապրիլ ու հաճեցնել զԱստուած:

Եսայայ եղաւ այն մարգարէն, որ ունեցաւ տեսիլք և ստացաւ աստուածային առաքելութիւն:

Երեմայ ստացաւ մարգարէութեան օծում, երբ տակաւին իր սաղմնային վիճակին մէջն էր. *«Քեզ որովայնի մէջ չստեղծած, քեզ գիտցայ, ու դուն քու մօրդ արգանդէն չելած քեզ սրբեցի»*--Երեմ. Ա. 5: Երեմիայ եղաւ *արտասուաթոր* մարգարէ ու ոչ հրամայող օրէնսդիր:

Եզեկիէլ՝ 26 տարեկան ասորեալ մը, կրցաւ տեսնել աստուածային ներկայութիւնը իր խորհրդապաշտական պատկերացումներով: Ուրիշ տասնեակ մը աշխարհական մարգարէներ եւս եկան անյայտութենէ՝ լեցնելու համար հոգեւոր պարապութիւնը և լուսաւորելու մարդկային գիտակցութիւնը, և անվերապահօրէն ցոյց

տուրին աստուածային բարի կամեցողութիւնը:

Աստուած մեղքի զգացումի ծանաչումը, ու մեղքին դիմագիծը միայն հրեայ ցեղին չյայտնեց, այլ՝ բոլոր ժողովուրդներուն և ազգերուն: Սակայն ամէն ազգ իր նախապաշարումով և իր հասկացողական կարողութեամբ կրցաւ ըմբռնել ու ծանչնալ մեղքը: Յոյներ՝ *իմաստասիրակա՛ն* հայեացքով որոնեցին, Չինացիներ՝ *բարոյակա՛ն* հասկացողութեամբ, Հնդիկներ՝ աշխարհը և մարդկային փափաքները *ուրանալո՛վ*, Եգիպտացիներ՝ զԱստուած *հաճեցնելով* ու Փիւնիկեցիներ՝ իրենց զաւակները զոհաբերելով և *այրելո՛վ* կարծեցին Բաբել իրենց մեղքը և արդարանալ:

Քրիստոսի Մնունդը յեղաշրջեց մարդկութեան կրօնական ըմբռնումը և տիեզերքի աշխարհայեցողութիւնը: Մարդկային մտքի և հոգեկան գիտակցութեան հասողութիւնը երբ մօտեցաւ աստուածային տնօրինութեան սահմանին, Աստուած աշխարհ զրկեց Մարդեղեալ Յիսուս Քրիստոսը դիմակազերծելու համար մեղքը, որպէսզի մարդիկ ծանչնան իրենց բուն թշնամին, որ իրենց անձի՛ն, իրենց ապրելակերպին, իրենց վարժութեան և իրենց հոգիի՛ն մէջն է:

Յիսուս շատ քիչ անգամներ յանդիմանեց, *մե՛ր* ըմբռնումով, մեղաւոր կարծուած անձերը, մինչդեռ որոտընդոստ գոռոռումով դատապարտեց բարեպաշտ կարծեցեալները՝ կեղծաւորները:

Մովսիսական օրէնքով մահուան դատապարտեալ պոռնիկ մը՝ Յիսուս արձակեց հետեւեալ բուժիչ արտօնագիրով.

**«Ե՛ս ալ չեմ դատապարտեր Բեզ, գնա՛յ,
ու այսուհետեւ մի՛ մեղանչէր»**---Յով. 8.11:

Հաւատացեալներ և հոգեւոր կարծեցեալներ նոյնիսկ չեն ուզեր խօսակցութիւն մը ունենալ հանրային կարծուած անձի մը հետ: Իսկ Յիսուս Քրիստոս պաշտպան կը կանգնի ո՛չ թէ *մեղանչումին*, այլ մահուանէ կ'ազատէ *մեղաւորը* ու յետոյ կ'արձակէ զայն որ երթայ ու այնուհետեւ չմեղանչէ:

Այստեղ կը տեսնենք սիրոյ առարկայական կիրարկումը ո՛չ թէ *մեղքի՛ն* հանդէպ, այլ *մեղաւորին*: Դէպքերը դիտուած են ծակատէն՝ ճշգրիտ և անկողմնակալօրէն: Աստուած Իր ամենուղորմ գթութեամբ կը մօտենայ մեղաւորին, առանց յանդիմանելու և դատապարտելու զայն, որովհետեւ մեղաւորը *հոգեկան արկածեալ* մըն է և կարիքը ունի ո՛չ թէ դատապարտութեան, այլ *բժշկութեան*: Հին Կտակարանին մէջ Մովսէս մարգարէն, օրէնսդրական, գործ

ունի յանցանքի և պատիժի հետ. «Ատամն ընդ ատաման» նշանաբանով: Աւետարանին մէջ, Յիսուս գործ ունի հոգւոյ մեղանշումի՝ն հետ, որ կը մաքրէ ու կը ներէ սիրով:

Անդին, հոգեւոր ու բարեպաշտ, Տէրունական Օրը սուրբ պահող ու իրենց եկամուտին տասանորդը վճարող Փարիսեցիներուն, Յիսուս իր զայրոյթը կը յայտնէ ու անվերապահօրէն կ'ըսէ.

«Ով յիմարներ ու կոյրեր,
Վայ ձեզի կեղծաւոր դպիրներ ու Փարիսեցիներ,
Կոյր առաջնորդներ, որ մօզուկը կը քամէ և ուղտը կը կլլէ.
Դուք դուրսէն մարդոց արդար կ'երեսնաք
Կը նմանիք ծեփած գերեզմաններու:
Օձեր, իժերու ծնունդներ»...:

Արդեօք ինչո՞ւ համար Յիսուս այսպիսի բռն և պոթկումներով յանդիմանեց դպիրներն ու Փարիսեցիները: Զէ՞ որ դպիրներն ու Փարիսեցիներն էին պաշտպանը և մատակարարը ցեղաժառանգ Օրէնքին ու մարգարէներուն: Ինչո՞ւ համար այսֆան դատապարտութիւն ու ծանր պատիժ հոգեւորական ուսեալ դասակարգի մը, որ կը կազմէր օրուան և դարուն ականաւոր մտաւորականութիւնը:

Յիսուսի սաստիկ միակ պատճառը, որ կրնանք գտնել, կը գտնուի Ղուկասու Աւետարանին 12րդ գլուխ և երկրորդ համարին մէջ ուր Յիսուս կը պատուիրէ իր պարզամիտ աշակերտներուն ու իրեն յաջորդող առաջնորդներուն, ըսելով.

«Նախ դուք ձեզ զգոյշ պահեցէք Փարիսեցիներու խմորէն, որ կեղծաւորութիւնն է»:

Այս "համեստ" կարծուած կեղծաւորութեան մեղքը, որ հաւատացեալներու մեղքի ցուցակին յետինն է կամ աննշան մէկ անկիւնը թաւալած է, Յիսուս Զրիստոսի հայեացքով ամենազազրելի և գարշելի մեղքն է:

Ինչո՞ւ:

Ինչպէս որ, նախապաշարումը մարդկային բանականութիւնը և տրամաբանութիւնը կ'եղծանէ, ու կը խանգարէ, նոյնպէս ալ կեղծաւորութիւնը ձեւազեղծումն է գեղեցիկին, բարոյականին ու սրբութեան: Ինչ որ հակառակ է ճշմարտութեան՝ իրականութեան և նպատակ ունի մոլորեցնել և խաբել՝ **կեղծաւորութիւնն է:** Կեղծաւոր մարդը դիմակաւոր է շարունակ: Երբեք կարելի չէ

գիտնալ թէ դիմակին ետեւ գտնուող անձը Ճշմարտախօս մըն է թէ ստախօս, պատուաւոր է թէ՞ անպատիւ, Բեզ սիրող մըն է թէ՞ չողոճող, Յուդայի մահուա՞ն համբոյր մըն է թէ Մարիամ Մագդաղենացիի կրօնական ջերմեռանդութիւնը և հաւատքը արտայայտող համբոյր:

Յիսուս Զրիստոս կը հանդուրժէ և կը բուժէ մարդկային գրեթէ բոլոր տկարութիւնները, բայց չի կրնար ներել կեղծաւորութեան: Որովհետեւ կեղծաւորութիւնը բնագոյաշարժ մեղք մը չէ՝ որ հողաշէն մարդ ժառանգած ըլլայ իր երկրածին հանգամանքին պատճառով: Կեղծաւորութիւնը անասնական չէ՛, այլ դիւային:

«Ասկա զարմանալի չէ, քանի որ Սատանան ինք ալ լուսեղէն հրեշտակի կերպարանք կ'առնէ: Տարօրինակ չէ ուրեմն, որ անոր պաշտօնեաներն ալ (իրենք զիրենք հոգեւոր կոչող Փարիսեցիներ) կերպարանաւորուին իբրեւ արդարութեան պաշտօնեաներ, որոնց վախճանը իրենց գործերուն համաձայն պիտի ըլլայ»:

Այսօր Բաղաբական ասպարէզին մէջ բռնութիւնը փրկութեան դիմակ հագած է: Աստուծոյ Թագաւորութեան մէջ մարդոց դէմքերը դիմակ պիտի չունենան: Յակոբ Պարոնեանն ալ կ'ատէր կեղծաւորութիւնն ու նենգամտութիւնը: Իր ամբողջ գրականութիւնը պայքար մըն էր կեղծաւորներուն և կեղծաւորութեան դէմ:

Դիմագիծ բառին արմատն ու ակունքը "դէմք և դիմակ" բառերն են: Կը տեսնէ՞ք որ մեղք ըսուածը առանց դիմակի չի մօտենար մարդու: Միշտ ծպտեալ է: Միշտ գեղծուած պատմութեանով կ'երեւի: Ծափարապատոյտ թոյն է ու մեղրալեզու խաբէութիւն:

Անցեալ դարերու մէջ, եկեղեցին վճռական որոշումներ առած էր և մահացու մեղքերը դասաւորած, որոնք էին՝

1. Կռապաշտութիւն
2. մարդասպանութիւն
3. շնութիւն

Մեղքը՝ մարդկային կեանքի ամբողջականութեան գոյն և շաքար կու տայ: Յիսուսի առաքեալները, մանաւանդ Պօղոս առաքեալ, շատ բացատրութիւններ կու տայ մեղքին և անոր սկզբնապատճառին, ըլլայ յունական կամ եբրայական տեսանկիւնէն դիտուած:

Սակայն երբ Յիսուսի՝ նայինք, հոն կը տեսնենք, որ Ան աւելի մեղաւորներով զբաղեցաւ քան թէ մեղքի մասին տեսաբանութիւն-

յնք րնելով: Յիսուս մեղքին հորիզոնը ընդարձակեց և ընդլայնեց. Մեզի ցոյց տուաւ, թէ մեղքը միայն «օրինազանցութիւն» մը չէ, «անօրէնութիւն» մը չէ, այլ մարդկային հոգեկան ու մտածումի շեղում մը, խոտորում մը և ծուռ շարժառիթ մըն է, իրագործելու մե՛ր կամքը, փոյթ չէ թէ ծուռ և սխալ, ծուռ կամ վնասակար ըլլայ ան Բանի որ մե՛զ կը փառաբանէ: Օձապտոյտ և սողոսկող կեղծաւորութիւնը միշտ ծպտեալ կ'երեւի ու ոչ երբեք հոլանի կամ ակներեւ:

Որքա՛ն անտեղի է ու վնասակար, որ Բրիստոնեաներ մեղքը որակեն կամ համեմատեն ծխելու, խմելու, շպարուելու, թատրոն երթալու և զգեստաւորուելու հետ: Մինչ անդին, որպէս յաջող առեւտրական, եկեղեցական անդամը, յաճախ, վաշխառու, ագահ, տմարդի ու անզգայ, սակայն աղօթող ու բարեպաշտ ցոյց կու տայ իրենք զիրենք:

Կրօնական ու հաւատալիքներու այս շփոթ ու դիմակաւոր շուարումին մէջ, Յիսուս Բրիստոս բացաւ իր օրհնեալ Բերանը և տիեզերքի օդային ոգեւորեալ ալիքներուն զօրութեամբ խօսեցաւ.

«Նախ դուք ձեզ զգոյ՛շ պահեցէք Փարիսեցիներու խմորէն, որ կեղծաւորութիւնն է»:

Ունի՞ս հոգեկան ընդունելիութիւն ըմբռնելու թէ ի՞նչ կ'ըսէ Յիսուս Իր անսպառ տիեզերքի ալիքներուն ընդմէջէն Բեզի: Գործօ՞ն է Բու մտաւոր և հոգեւոր ընկալուչդ իմանալու և զանազանելու Յիսուսի ձայնը օտար ու նախապաշարեալ ձայներէ:

Նայէ՛ Յիսուս Բրիստոսի:

Լսէ՛ Յիսուս Բրիստոսի:

Տե՛ս Յիսուս Բրիստոսը:

ԱԼԹԵՒ ՆՈՐԱՏՈՒՆԵԱՆ



ԲԱՆԱՏԵՂԵԱԿԱՆ

ՅԻՇԻՐ, ՄԵՌՆՈՒՄ ԵՍ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յիշի՛ր, զինուորն Ես Օրհնեալ Յիսուսի,
 Նրա անունից համարձակ խօսիր,
 Որ Տէր Յիսուսը կեանքն է ամենի,
 Որ Տէր Յիսուսը թանկ է ամենից,
 Որ նրանից ջոկ ապրելը զուր է,
 Որ նրա խօսքը ամենագոր է:
 Որ Յիսուսով է կեանքը խղճաւորում,
 Արհամարհուածը՝ կամաց բարձրանում,
 Որ մեղաւորը դառնում է արդար,
 Ապրում Յիսուսով՝ յաւերժ, դարեդար:
 Էլ ի՞նչ Ես մահին նայում սարսափով
 Կամ էլ վախենում ահ ու տագնապով.
 Զէ՞ որ կանչուել Ես հենց դրա համար
 Եւ դու մեռնում Ես... ապրելու համար:

Տես, մահի թելով սարսափն է սուրում,
 Բայց մահից այն կողմն դըրախտն է բուրում,
 Մարմին-պատեանից ելիր ու գնա,
 Դըրախտի զմրուխտ պարտէզում մնա:
 Կը տեսնես այնտեղ հըրեշտակներին,
 Կը տեսնես այնտեղ Տիրոջդ փառաց,
 Սիրոյ կանթեղը՝ Իր ձեռքում վառած:
 Այնտեղ կ'իմանաս արժէքը խաչի,
 Արձագանքները ախ ու հառաչի:
 Կը տեսնես նաեւ Փրկչիդ վերքերը:
 Որ պիտի պատմեն Յիսուսիդ սէրը:
 Եւ արժէ մեռնել այդ սիրոյ համար,
 Բայց մենք մեռնում ենք... ապրելու համար:

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ

ԴՐՕՇԱՐՇԱԽ

Դրօշարշաւի փայտի՛կն է, պիտի յամձմեա գայն գաւկիդ,
Հեւժոտ վագէէն ետք յոգմած, այս սերունդէն՝ յաջորդին,
Եթէ պիտի պահպանուի չաքչարեալ ա՛զգոյ յաւիտեան:
Փայտակերպ ձողն ոսկեճոյլ, խորհուրդ մըն է սրբազան:

Իսկ ա՛մ որ ձողն այդ ոսկի, կը փոխանցէ յաջորդին,
Յաջորդներուն, լրջութեա՛մբ, գութագութալո՛վ, դողալո՛վ,
Կը կատարէ լիովին ազգային պա՛րտքը իրեն:
Զողիկը այդ կը կըրէ խորհու՛րդը խո՛ր մեր ազգին,

Փառքը լեզւին, մըշակո՛յթ, աւանդութի՛ւն ու հէ՛քեա՛թ,
Մեր պատմութի՛ւնը դժուար, գեղեցկութեամբ գգըլի՛չ,
Եւ գիծերո՛վը յռո՛ւ. բայց որ մե՛րն է, մի՛միայն,
Իմաստութի՛ւնը ինչպէս՝ ջիղե՛րը հին՝ անխորտա՛կ,

Մե՛րն են, եւ յոյժ քացառիկ, ու դեռ այնքա՛ն սրտագրաւ:
Իր տրամութեան մէջ խորունկ, ուրախութեան մէջ թեթեւ,
Արդ ամէ՛ն հայ, ամէն տե՛ղ, պէտք է ըսել կարեւոյ՛
«Նորէ՛ն, նորէ՛ն Աստուած իմ, նորէ՛ն զիս հա՛յ ըստեղծէ՛»:

ԱՆԵԼ

Խ Ա Զ Ը

Թէ պաշտումի թափն ունենաս՝
 Տէրն զոյգ մը թեւ քեզի կուտայ՝
 Որպէսզի Իր Ուժը անհաս
 Սաւառնացնես երկրի վըրայ։
 Թէ տեսիլներ ունենաս դուն՝
 Յայտնութիւն մ'ալ քեզի կուտայ,
 Որպէսզի Իր Կամքը արթուն
 Հանդիսացնես երկրի վըրայ։
 Թէ բարձունքէ մ'խօսիս իր հետ՝
 Ինքը քեզի շնչո մը կուտայ,
 Որպէսզի Իր Խօսքը յաւէտ
 Արձադանգես երկրի վըրայ։
 Թէ վերացած յառիս իրեն՝
 Հուր լեզու մ'ալ քեզի կուտայ,
 Որպէսզի Իր Կայծը վերէն
 Սահեցընես երկրի վըրայ։
 Եթէ մըտնես իր ամպին մէջ՝
 Ինքը քեզի շանթ մը կուտայ,
 Որպէսզի Իր Վրէժը անշէջ
 Փայլատակես երկրի վըրայ։
 Իսկ Իր լոյսին թէ երթաս մօտ՝
 Ինքը քեզի ջաշ մը կուտայ,
 Որպէսզի Իր Փառքն անաղօտ
 Վարդավառես երկրի վըրայ։
 Եթէ նետուիս Իր գիրկն անուշ՝
 Ինքը քեզի երգ մը կուտայ,
 Որպէսզի Իր Ծնորհն երկնայուշ
 Թըրթոացընես երկրի վըրայ։
 Թէ համբուրուիս հետ իր վէրքին՝
 Ինքը քեզի կեանք մը կուտայ,
 Որպէսզի Իր Ծունշը անդին
 Ոգեւորես երկրի վըրայ։
 Իսկ թէ թաղուիս իր շուքին տակ՝
 Ինքը քեզի շող մը կուտայ,
 Ոչխիւիս դէմ յոյսին անփակ
 Ծառադայթը երկրի վըրայ։

Ու այդ Ուժը, այդ Կամքն ու Խօսք
 Այդ Կայծն ու Վրէժ, այդ Փառքը սոսկ,
 Այդ Ծնորհն ու Ծունշ, այդ Յոյսն համայն
 Քեզի տըրուած ինքն է միայն։



THE CROSS

If thou were in moment of worship,
The Lord shall give a pair of wings
That shall make thee, His **Power** above
To soar on high, upon this earth.
 If you're to have visions divine,
 He shall give thee epiphany
 His ever-present **Will** to obey
 Thou shall make known upon this earth.
If you discoursed with Him on mount,
He shall give thee a new accent
Everlasting His **Word** divine
Thou shall echo upon this earth.
 If thou were in Him in ecstasy,
 Fiery tongue shall He grant thee,
 So His **Kindle** from above
 Thou shall bring upon this earth.
If thou entered in His cloud,
He shall give thee roaring lightening,
So His Holy **Vengeance** unquenched
Thou shall thunder upon this earth.
 If you're to go to His light near,
 He shall give thee to carry a torch,
 So His **Glory** ever shining
 Thou shall reveal upon this earth.
If you're embraced in His bosom,
He shall give thee a song to sing,
So His **Grace**, Lo, heaven sent,
Thou shall spread upon this earth.
 If thou kisseth His healing wounds,
 He shall give thee new life to live,
 So His **Breath** priceless indeed
 Thou shall stir upon this earth.
If you're buried under His shadow,
He shall give thee a shining ray
Against the abyss, a boundless **Hope**
Thou shall spread upon this earth.

And that **Power**, that **Will** and **Word**,
That **Kindle** and **Vengeance**, and that **Glory**,
The **Grace**, the **Breath**, the entire **Hope**
It is the Cross given to thee.

Abp. Yeghishe Tourian,
Patriarch of Jerusalem -

1905

Translated by Fr. Vertanes Kalayjian - 2000
digitised by A.R.A.R.@

ՅԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔ

Եւ Մաշտոցի հետ երբ եկան,
 406 ոսկի թուի՛ն՝
 Երբ հայերէն տառերն եկան
 Վաղարշապատ,
 Կարծես յանկարծ
 Հայաստանեայց
 Աշխարհին վրայ շուշան - շուշան
 Թափթփեցան
 Լոյս երամներ՝
 Աղանիի աւետաբեր:
 Ու թառեցան
 Անոնք ամէն սիրտ ու երդի
 Ու գմբէթի,
 Եւ շինեցին
 Ոսկեհիւս բոյն Մշակոյթի:

Եւ երբ մտան Ոստանն հայոց,
 Տառերն այս նոր ու հայագոծ՝
 Ամէն յարկի տակ վառեցին
 Հայ մատեանի թոնիր մ'անշէջ.
 Զարերն որոնք կային շատոնց՝
 Չունէին բոց.
 — Ի՞նչպէս եփէր
 Իմացական հացը Հայուն,
 Երբ փուռին մէջ չկար կրակ:
 Զանգակատունն ի՞նչպէս կանչէր
 Ու կարկաչէր՝
 Հայ զանգը երբ չունէր լեզուակ:
 Ի՞նչպէս բուրէր հայոց ածուն,
 Երբ հող կար՝ բայց չկար շափրակ:

Բայց երբ մտան հայ հողէն ներս
 Տառերը հայ,
 Հայ դպրոցներ բռնկեցան
 Հուրով մը վեհ,
 Եւ հայ գիրքի եղաւ հրդեհ՝

Ու հայկակի միտքեր դարձան
 Անոր ճարակ:
 Օ՛ր, մէկ-մէկ ջա՛հ եղան հայկակ
 Ու հայկունհի,
 Եւ Հայուն հողը դարձուցին
 Տաճար լոյսի...:

Գմբէթներուն տակ հայկական,
 Հայոց լեզուն զանգակատուն՝
 Լեզուակի պէս ա՛լ թնդացուց
 Հայու սաղմոս ու շարական,
 Մինչ մշակեալ ծաղկաստանի
 Մը կը փոխուէր
 Անգոյ ածուն հայ դպրութեան:
 Եւ գիրերուն հետ հայերէն՝
 Կարծես ամէն
 Հայ տունէ ներս
 Մտնէր նոյն ինքն
 Մեսրոպ Մաշտոցը սլացիկ
 Ու վեհափառ՝
 Իբր Ամենայն Հայերու Պապ
 Եւ իր սրտէն բաժակածեւ
 Պարպէր բարեւ՝
 Որպէս գինի,
 Բաշխէր արեւ՝
 Որպէս ոսկի:

Եւ ան մտնէր կարծես նաեւ
 Իբր Ամենայն Հայոց Արքայ՝
 Ու տար ընծայ.
 Ինչե՛ր չտար՝
 Որ դարերով չեն սպառիր,
 Որ բառերով՝ ալ չեն ճառուիր:

Եւ ան մտնէր դեռ հոն ու հոս
 Իբր Ամենայն Հայոց Հերոս՝
 Ռազմէն յաղթո՛ղ դարձողի պէս,
 Եւ իր գոգէն՝ ծաղիկ որպէս՝
 Մէն մի հայու իր սի՛րտը տար,
 Սիրտն անսպառ
 Ու սիրահար...:

ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ



- Ա. Թո՛ղ աշխարհ առնէն
Նայելով ինձի՝
Կարեցկի ինձմէն.
- Բ. Շուրթերս կը շարժեմ
Որ լեզուովս բողոք
Բառնամ անձին դէմ.
- Գ. Մեղքի գող մ'եմ, ո՛վ,
Կորուստըս գըտայ
Գուք մը փորելով.
- Դ. Դաւ գըրի ինձի,
Ու խորդաւանքով
Քակարդ լարեցի.
- Ե. Լոյս էի երբեմն,
Ու հիմա մահուան
Ըստուերին մէջ եմ.
- Զ. Ի՛նչպէս պատմեմ ես
Մեղքերս բազմաթիւ,
Մեղքերս պէսպէս.
- Է. Երկինք եւ երկիր,
Եկէ՛ք ողբացէք,
Անձըս ախտակիր.
- Ը. Չարն սեպեցի լաւ,
Ու մեղքերն առնէն
Թանձն առի կամաւ.
- Թ. Անոնց մէջ թաւալ՝
Տիգմով թաթախուած՝
Հնար չէ ինձ դուրս գալ.
- Ժ. Երկար միջոցի
Ախտով ես լըցուած՝
Ժանտ հոտ բուրեցի,
- Ի. Մէկդի ես ըրի՝
Անբիծ խորհուրդներն
Ու գործերն բարի.
- Լ. Ուղելով անշէջ
Լոյսէն հեռանալ՝
Մնացի մութին մէջ.
- Խ. Երբ հոգիս խաբուած
Չար խորհուրդներէ՝
Կը սուզուի անդարձ
- Մ. Անդունդներն ի վար,
Վըրաս կը խնդան
Ծաղրելու համար.
- Կ. Կամաւ կորացած՝
Չեմ կրնար կանգնիլ,
Կարկամ ու հոգած.
- Հ. Մեղքի կրսկն էր որ
Այրեց իմ բոլոր
Բարիքս հոգեւոր.
- Ձ. Մեղքը ձաղկեց զիս.
Տեսնողն այպանեց,
Չանձրացաւ հոգիս.
- Ղ. Լեղին դառնաջուր
Սիրտս ողողելով՝
Ճրագիս մարեց հուր:
- Ճ. Մեղքն ու մահն անջատ
Ճաշակելով ճոխս՝
Այգատացայ շատ.
- Մ. Հոգիս անկենդան
Ու միտքս է մոլոր,
Մարմնով կամ միայն.
- Թ. Ցանցը մեղսամած
Ինկայ որսողին,
Ախտերով ընկճած.
- Ն. Նըշաւակ դըրուած
Թըշխամոյն նետին՝
Կ'առնեմ նոր հարուած.
- Շ. Շուներուն վոհմակ
Մի՛շտ կը շաղախուի
Արիւնովս անյագ.
- Ո. Չարին որս եղայ,
Մեղքի ուռկանով
Անձըս որսաց նա.
- Չ. Վիշտեր չարաչար
Ձիս կը տագնապին
Ու չունիմ դադար.
- Պ. Մեծ յանցաւորի
Պատժովն եմ ինկած
Մեղքերու գիրի.
- Ջ. Կը ջանամ զըղջալ,
Բայց կիրքի կրակով
Կ'ախտանամ դարձեալ.
- Ռ. Ռաբբի կոչուեցայ,
Այլ վարքս է ռաֆիկ,
Անունս է ռակայ.
- Ս. Բարկութեան բոցէն
Վառուած ցանկութիւնք
Սիրտըս կը խոցեն.
- Վ. Թանցանքի վէրքեր
Ծաւ կուտան հոգւոյս,
Ժուռ կուգամ վար վեր.
- Տ. Չարերն կը զըրկեն՝
Վըրաս տրեւելով՝
Ձիս Տիրոջ զըրկէն.
- Ր. Բաբունոյն բարի
Չուարթարար ձայնին
Ականջ ես չը դրի.
- Ծ. Ծանկութիւններս սին
Ծանկայի տեսքով
Այքերս ցաւցուցին.
- Ի. Ու բազմապիսի
Ախտերու հիւսքով
Հոգիս կը հիւծի.
- Փ. Անձն իմ, փութա՛ ալ
Չարիքէն փախչիլ,
Բարիին ցանկալ.
- Ք. Մահուան քուռից երբ գայ՝
Քեզի մօտ գիտցիր
Դատաւորն անմահ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. Յանգը, Տունը, Հանգիստութիւնը
Նարեկացու Ստեղծագործութեան

Դրականութեան տեսութեան մէջ յանգ կոչուում է ուսանաւորի մէջ «տողերի համահնչին վերջաւորութիւնը, որ կրկնուում է երկու կամ ւաւի անգամ»(1): Յանգն ընդգծում է տողերի ռիթմական աւարտը. տունը եւ տողերը կապում է միմեանց, խօսքին հաղորդում է երաժշտականութիւն: Յանգը յայտնի է թէ հիմագոյն ժողովրդական երգերից եւ թէ գրական ստեղծագործութիւններից: Այլ հարց է, որ յանգի կանոնաւոր գործածութիւնը գերակշիռ է դարձել ւաւի ուշ:

Ընդունուած է ասել, որ յանգի գործածութեանը հայ գրականութեան մէջ առաջին անգամ գիտակցաբար դիմել է Գրիգոր Նարեկացին: Իսկապէս, ինչպէս արդէն ասուել է, Նարեկացին Մատենաւում յամայն է դիմել ամենաբազմազան յանգերի կիրառութեան: Ասուել է նաեւ, որ Մատենան Ձերդ գլխում Նարեկացին խօսում է յանգերի յուզական ներգործութեան մասին՝ յենուելով ժողովրդական ողբի արուեստի վրայ: Նարեկացին բացատրում է, որ լայականները ողբի մէջ տողերն աւարտում են նոյն հնչիւնի կրկնութեամբ՝ սրտերն առաւել յուզելու եւ աչքերից ւաւի արցունք փամփու համար:

Յանգի պատմութեան վերաբերեալ միշտ տեսակէտ ունի Վ. Ներսիսեանը: «Յանգը - գրում է նա - հայ բանաստեղծութեան մէջ վերջնականապէս հաստատուել է Արդ դարի սկզբներից: Մինչ այդ, մեր բանաստեղծութիւնը հիմնականում եղել է անյանգ: Բայց ինչպէս ամեն մի երեսոյթ, այնպէս էլ յանգը միանգամից երեւան չի եկել, այլ ծագել ու կազմաւորուել է չափածոյ խօսքի ռիթմիկ զարգացման

պահանջով, ապրելով ձեւաւորման երկարաձիւ պրոցես:

«Ի գուր չէ, որ յանգաւորման որոշ երեսոյթներ նկատուում են եւ հեքամոսական շրջանի երգերից մնացած փշրանքների, եւ 5-10-րդ դարերում յօրինուած հոգեւոր ու աշխարհիկ ստեղծագործութիւնների առանձին մասերում»(2):

Աս կարեւոր դիտողութիւն է: Ինչպէս հայոց հին, այնպէս էլ Յունա-Հռոմէական անտիկ բանաստեղծութիւնն անյանգ էր: Բայց յանգը իբրեւ մարտասանական խօսքի զարդ՝ յայտնի էր արձակում: Յանգը ստեղծում էր արտայայտչական համեմի զուգահեռականութիւն: Նման համահնչունութիւն յանախակի կիրառել է Յովհան Մայրաբաժնեցին իր նաոներում, այսպէս, օրինակ՝ «Ջերբան իմ բամբասամօճ պղծեցի, եւ զլեզու իմ դատար բանիւճ աղոթեցացուցի»: կամ «Մարմնովս զուզացն ծանիցուք, եւ երեսնաւս զաներեսոյթն գիտասցուք»(3): Ի հարկէ, բուն իմաստով, սա յանգ չէ: Բայց յանգ եղել թէ՛ ժողովրդական եւ թէ՛, մասամբ հոգեւոր երգերի մէջ: Ահա թէ ինչու Արեղանի այն ենթադրութիւնը, թէ «Հաւանաբար արարական բանաստեղծութիւնից է անցել հայերէնին եւ յանգը, որի գործածութիւնը չկայ մեր հոգեւոր երգերը մէջ»(4) եւ թէ «Նարեկացու Ողբերգութիւնից իմանում ենք, որ 10րդ դարում արդէն յանգի գործածութիւնը եղել է մեր աշխարհիկ բանաստեղծութեան մէջ»(5), կարօտ է նշգրտման: Հայերը, ինչպէս նաեւ յոյները եւ եւրոպական միւս ժողովուրդները, յանգը չեն վերցրել ոչ արաբներից եւ ոչ էլ մէկ այլ ժողովուրդից: Յանգը

գրականության գարգացման օրինաչափ արդիւնք է եւ առաջ է եկել ազգային բանաստեղծության դիքմական հնարաւորութիւնների բնական տարբերից:

Նարեկացին համարեղ բանաստեղծ էր, եւ բնական էր, որ հայ իրականութեան մէջ առաջինը նա զգար յանգի նշանակութիւնը բանաստեղծութեան յուզականութեան, զգացմունքային լարուածութեան բարձրացման գործում: Թէեւ Նարեկացու ստեղծագործութիւնն ընդհանրապէս ունի խառն ու ազատ տողերի համակարգ, իսկ յանգի գարգացումն աւելի շուտ կապուած է կանոնաւոր տողակարգ ունեցող ոտանաւորի հետ, այնուհանդերձ, Նարեկացու յանգաւորման արուեստն առանձնանում է բարձր վարպետութեամբ: Նա ուղեւնշել է միջնադարեան տաղերգութեան յանգաւորման գրեթէ բոլոր տեսակները: Նոյնաշանգութիւնը մեծ տեղ ունի տաղերգութեան մէջ: Նարեկացին տուել է նոյնաշանգութեան բազմաթիւ օրինակներ եւ յաճախ նրա օգտագործած նոյն յանգերին եւ դիմել թէ՛ Գրիգոր Մագիստրոսն ու Ներսէ Շնորհալին, թէ՛ Ֆրիկն ու Կոստանդին Սրգնկացին եւ հետագայ տաղերգուները:

Նարեկացու նոյնաշանգ հատուածները հասնում են մի քանի տասնեակ տողերի, մինչդեռ նրա յետորդները՝ Մագիստրոսը, Շնորհալին, Սիւնեցին, Բաղդեցին, եւ այլն, ունեն նոյնաշանգ հարիւրաւոր տողեր: Նարեկացին կանխում է միապաղաղութեան ձանձրոյթը: Ի յանգով գրուած ամենածաւալուն մասը՝ ԻԶ գլխի ք, գ, դ հատուածները միասին, բաղկացած է 64 տողից: Ըստ որում 40 տող ունի տաղաչափական մէկ կառուցումով, գրուած է հիմնականում հայրենի չափով, իսկ 24 տող գրուած է հիմնականում 20-վանկանի հնգաչանկ շառանդաւ չափով, ուր երկու դէպքում էլ վանկերի անհասարարութիւնը անդամների մէջ հաւասարուում է

ամանակով: Այնուհետեւ, չնայած բոլոր տողերն աւարտուում են չ յանգով, բայց միշտ չէ, որ թոյլ յանգը յաջորդում է թոյլին, այլ կան նաեւ ուժեղ յանգեր՝ կից կամ խաչաձեւ, որոնք հեշտութեամբ ցրում են նոյնաշանգութեան միօրինակութիւնը: Ահա, օրինակ՝

Անքերեւոյք կրակարան տապոյ
բորբոքմամբ մեծաւ անգովանալի,

Անտեսական իմն քրայս հալոցաց
սաստիկ եռացմամբ անշիջանելի,

Սլաքս մետից պատկանեալ դեղովք
ի շտեմարան խորութեան սրտի,

Խիթք ցաւոց խոցոտման մահու ի
գնացս երակաց գոյութեան լերդի:

(Բան ԻԶ,գ)

Միջնադարում խիստ յարգի էր դերբայական -*եայ* յանգը: Մատենանի ԻԳ գլխի մի հատուած, 42 տող, գրուած է այդ յանգով: Բայց եթէ Շնորհալին, օրինակ, այդ յանգը կիրառել է 8-վանկանի կարթ տողերի մէջ, ապա աւելի ցայտուն է զգացում յանգի յանախականութիւնը եւ անխուսափելի տաղտուկ է յարուցում, մինչդեռ Նարեկացին այդ յանգը գործածել է հիմնականում հայրենի տողակարգում, ուր յանգը հնչում է աւելի տեղին ու բնական: Նոյն յանգով է գրուած նաեւ ԻԵ գլխի դ հատուածից 18 տող, ուր 20 վանկանի տողի մէջ առաւել ազատ է ծաւալում նոյնաշանգութիւնը՝ առանց դուրս-իմէ միօրինակութեան:

ԻԴ գլխի ա (10 տող) եւ ք (18 տող) գրուած են բայի սահմանական եղանակի անցեալ կատարեալ ժամանակի առաջին դէմքով՝ -*ցայ* յանգով, այսպէս՝

Թէ փառա՞ցդ վայելութեան՝ յորմէ
գրկեցայ,

Թէ կենա՞ցդ անմահականաց՝ յորմէ
հեքեցայ,

Թէ ընդ՝ հրեշտական պարակցու-
թեան՝ յորմէ տրոհեցայ,

Թէ ընդ արդա՞րսն մասնակցութեան՝
յորոց նեղեցայ:

(Բան ԻԴ, ա)

Առաջին երկու յանգերն, անշուշտ, հարուստ յանգեր են, եւ մման յանգերի առկայութիւնը բազմերանգութիւն է հաղորդում նոյնայանգութեանը: Ի՞նչ գլխի գ հաստուածը / 45 տող / գրուած է -աւ եւ -եաց խառն յանգաւորմամբ, որոնք փոխ առ փոխ բեքեւացնում են միօրինակութեան տպաւորութիւնը: Ի, եալ, ցալ, աւ, եաց եւ մի քանի մման ձեւեր՝ աւելի շուտ, յանգի նախնական ձեւեր են, քան իսկական յանգեր: Նարեկացին տուել է իսկական եոխ յանգերի գործածութեան բազմաթիւ օրինակներ: Տաղերգութեան մէջ սակաւադէպ է -ոյս յանգը՝ կայ Ֆրիկի եւ Կոստանդին Երզնկացու մօտ: Նարեկացին տուել է այդ յանգի կիրառութեան առաջին օրինակը: ԼԹ գլխի 18 տող գրուած է այդ յանգով, այսպէս՝

Իւղընձիւղ փայտս պտղակորոյս,
Հատանելի ծառս ունայմարոյս,
Կրկնամեծ խաւսուն տունկա անյոյս,
Ամենաշէջ երազարանս անյոյս:
(Բան ԼԹ, ք)

Բազմայանգութեան օրինակներն աւելի յաճախադէպ են մատնանում: Ոչ ոք չի անդրադարձել այս հարցին: Բազմայանգութեան քաւականին համակարգուած օրինակ է ԺԲ գլխի Գ հաստուածը, ուր -թիւնս / տխրութիւնս, / ծանրութիւնս, կրթութիւնս, հանութիւնս / յանգին յաջորդում է -մունս / ընթացմունս, գտմունս, դիմեցմունս /, իսկ սրան՝ -իս յանգը / յարկիս, տաճարիս, սենեկիս, մարդողիս /, սրան էլ՝ -ոյս յանգը / անկողնոյս, ոգոյս, մարմնոյս / եւ այլն: Նարեկացին տուել է նաեւ տողամիջի կամ ներքին յանգի կիրառութեան օրինակ՝

Մանաւանդ գի դու լոյս ես եւ յոյս,
Եւ ես՝ խաւար եւ յիմար,
Դու՝ իսկութեամբ բարի, գովելի,
Եւ ես՝ համայնին չար, ապիկար,
Դու՝ տէր ստորիցս եւ երկնից,
Եւ ես՝ անիշխան շնչոյս եւ հոգոյս,

Դու՝ բարձրեալ, ի կարեաց գատեալ,
Եւ ես՝ տաժամաւոր եւ վտանգաւոր:
(Բան ԶԳ, ք)

Ինչ խօսք, յանգը Նարեկացու ստեղծագործութեան մէջ չունի ո՛չ տաղերգութեան զարգացած շրջանի, ոչ դասական հայ բանաստեղծների եւ ոչ էլ արդի բանաստեղծների / Հ. Սահեան, Յ. Միրազ, Վ. Դաւթեան, Պ. Սեւակ, Գ. Սարեան, Ս. Կապուտիկեան եւ այլն եւ այլն / յանգերի եոխութիւնը, հենցեղութիւնն ու կատարելութիւնը: Նարեկացու յանգը յանգաւորման արուեստի մանկութեան շրջանի արտայայտութիւնն է եւ իբրեւ կիրառութեան առաջին օրինակներ՝ ունի ինքնատիպ գեղեցկութիւն:

Տուճը բանաստեղծական երկի կառուցումով միաւոր է: Նա կազմում է իմաստով եւ յանգաւորմամբ կապուած տողերի ռիթմական եւ շարահիւսական ամբողջութիւն: Բանաստեղծական տները բազմազան են ու, թէեւ ազգային ամեն մի գրականութեան մէջ նրանց տեսակները կարելի է բերել ընդհանուր յայտարարի, այսուհանդերձ, ամեն մի բանաստեղծ ունի իր նախասիրութիւնները, երբեմն էլ՝ իր իսկ ստեղծած բանաստեղծական տան ձեւը: Տուճը հայոց հին բանաստեղծութեան մէջ հանդէս է գալիս որպէս ռիթմիկ կազմակերպման կարեւոր գործօն: Հին բանաստեղծութիւնը երգ էր, եւ երգն ունէր իր միանման տների կառուցումով՝ ձայնեղանակին համապատասխան: Հոգեւոր երգերը, շարականները, գանձերը, տաղերը, իբրեւ կանոն՝ ունէին դարձ կամ կրկնակ, որ տալիս էր տնատնան սահմանը: Նարեկացու քերթածներն ունեն կրկնող, եռատող, քառատող, հինգատող եւ աւելի տողերով տներ, իսկ գանձերում մի դարձից միւսի միջեւ ընկած սահմանը, ուր տողաքանակը կարող է անցնել 20-ից, միայն պայմանականօրէն կարելի է տուն համարել: Երկտող տներով է գրուած

Նարեկացու «Տաղ սրբոց Քառասնից եւ այլ վկայից» քերթուածը, որի բանակապը յօդում է ' «Գրիգորի է երգս այս»։ Ահա առաջին երկու տները.

Գունդէ՛ սուրբ վկայիցն, ի սոսկալի
պատերազմին,

Հանդիսաւորեալ հասին ի գլուխ
ասպարիսին:

Բոպէից պաշտաւն բարեմշան
երանութեամբ,

Բանաւոր գեմմունմ' ողջակիզեալ
աստուածութեան:

Աւելի յստակ են տնատուած
Նարեկացու եռատող տներով քերթուած-
ները, որոնց մի մասի տնատման համար
հիմք է հանդիսացել պատասխանի ձեւը:
Օրինակ՝

ա- «Էին աշոյ աշոյ ձեռին» սկզբնատողով
տաղից.

Ծաղիկ ծոցոյ, ծոց հայրենի,
Ամպոյ նման իջեալ յերկնից,
Ձւեր իւր ի մեզ քաղցրիկ ցաւոյն:
(ԳՆՏԳ, 78)

Բ- «Ար յառաւաւտ» սկզբնատողով տաղից.

Ար յառաւաւտ,
Ար յառաւաւտ մեմեալ
Իւր անձուկ ծագմամբ:
(ԳՆՏԳ, 97)

գ- «Էն՝ ի միշտ էնն անեղապէս ծնունդ»
սկզբնատողով տաղից.

Լոյսն զհիւրական ստեղծեալն տիպ.
Պատկեր տպաւորեալ լուսոյն,
Ծածկոյ՞ հողանիւք արփիական
կերպին:

(ԳՆՏԳ, 108)

Քառատող տներով Նարեկացին գրել
է ինչպէս տաղեր, այնպէս էլ Մատենանի
առանձին հատուածներ: Քառատող տներ
ունի «Երկինքն ի յերկիրս եւ երկիրս ի
յերկինքն» սկզբնատողով տաղը եւ մի
հանի այլ փոխեր՝ «Այն փոքրիկ հաւտին

տրտմեալ», «Սեաւ եմ, գեղեցիկ», եւայլն:
Քառատող տան սահմանը յստակօրէն է
գծուած Մատենանի շատ հատուածներում
ուր այդ դերը կատարում է յանգը: Ահա
մի այդպիսի քառատող տուն.—

Եթէ լինիցի՞ խաւարասնունդս
մթացելոյ ծագման առաւաւտ

Եթէ հասցէ՞ տեսնել զտագնապալս
մշտասատոյց յեղանակս գարնանն մաւտ

Եթէ տեսի՞ց զցաւոյ անձրեւոյն
կանաչացուցանողն հոգւոց ինձ արաւտ,

Եթէ իցէ՞ արդեօք նկատել
զգագնաբեկ հերքելի ոչխարս վերստին
կամաց գթութեան քո հաւտ:

(Բան ԻԾ, դ)

Ի հարկէ, անսովոր է տողերի մէջ
վանկերի թուի այս անհասարութիւնը,
քայց իսկապէս սա քառատող է եւ խիստ
յատկանշական է Նարեկացու համար:
Անհասարար տողաբանակով տներ
խառն կարգ ունեն Նարեկացու «Այլն այն
իջանէր ի լեռնէն ի Մասեաց» եւ «Աւետիս,
մեծ խորհրդոյ, խորհուրդ ծածկեալ մեզ
յայտնեցաւ» տաղերը: Տների տողաբանակն
այստեղ տատանում է 4-12 տողերի
միջեւ: Ծաւալուն տներ ունեն գանձերը:
Նրանց տները աւելի շուտ մասեր են՝
պայմանաւորուած գանձի կրկնակով եւ
բանակապի տնագլուխ տառերով:
Նարեկացու գանձերի տողաբանակը
տատանում է 9-18 եւ աւելի տողերի
միջեւ: Դա պայմանաւորուած է նաեւ
գանձերի մէջ պատմողական տարրի
գերակշռութիւնից: Նարեկացու բոլոր
գանձերը անյանգ են եւ գրուած ազատ
ոտանաւորով: Հետագայ գանձասացները
միայն մշակեցին եւ յղկեցին գանձի
ժանրը՝ տնատման մէջ էլ հետեւելով բնա-
րական քերթուածների քառատող ծաւալին:
Պատկերացում կազմելու համար Նարեկա-
ցու գանձերի տան մասին՝ այստեղ տալիս
եմ մի օրինակ Քրիստոսի ծննդեանն ու
վկրութեանը նուիրուած գանձից.—

Իարուն Յշմարիտ, լուսոյ թագաւոր, անկէ
 եւ անսկիզբն.

*Անբաժանելի զարուբիւն, անբաժան
 միութիւն,*

*Ջոր իսկապէս ամտանելի
 զարուբեամբ յորովայնի ժուլ կրեցեր,*

*Ջոր ոչ բոցակիզեաց հուր աստուա-
 ծութեանն.*

*Մորենի անկիզբի, բարձող մեղաց,
 լուծիչ յանցանաց, սո՛ւրբ Աստուածածին,*

*Այսաւր յայրին ընծայեալ եւ ի
 մոգուցն երկրպագեալ,*

*Որք զընծայս մատուցին աստուա-
 ծութեանն խորհրդոյ,*

*Հովուացն յայտնեալ եւ ի
 խանձարուրս պատեալ,*

*Ընդ դասս երջանիկ զարացն
 երգակցեալ հողեղենքս՝*

- Փա՛ռք ի բարձունս, - ասելով
 ծնիցելոյդ ի Էէն, ամենաւրինեալդ ի
 կանայս.

Արդ, բարեխաւսեա՛ առ Քրիստոս
 թագաւորն՝

Հասանել մեզ ի յաւգնութիւն,
 աղաչե՛մք:

(ԳՆՏԳ, 182-188)

Առաջին հայեացքից կարող է թուալ,
 թէ Նարեկացու ստեղծագործութիւնը
 հարուստ չէ տների տեսակների
 բազմազանութեամբ: Բայց նա հանդէս է
 եկել գրականութեան զարգացման մի
 փուլում, երբ ինքն էր որոնում եւ բացում
 նոր ճանապարհ: Այս մօտեցմամբ նրա

ստեղծագործութիւնը հարուստ է
 որոնումների այն արդիւնքներով, որ նա
 է ներդրել հայոց բանաստեղծութեան
 զարգացման պատմութեան մէջ: Նա ստեղ-
 ծել է տաղաչափական նոր ձեւեր,
 բանաստեղծական յանգաւոր տունը՝ լինի
 երկտող, եռտող թէ բառատող: Նարեկացին
 ուսուցիչ է եղել միջնադարեան
 տաղերգուների համար թէ՛ հաւասարատող
 ու յանգաւոր եւ թէ՛ ազատ, խառն
 տողակարգով եւ անյանգ բանաստեղ-
 ծութիւններ գրելու նրանց ստեղծագոր-
 ծական որոնումների ճանապարհին: Նա
 բարերար ազդեցութիւն է ունեցել դասական
 հայ բանաստեղծների բանաստեղծական
 արուեստի կատարելագործման վրայ, եւ
 զարմանալի չէ, որ այսօր էլ դեռ մեզ է
 հասնում նրա ազդեցութեան լոյսի
 շառաւիղը:

(Շարունակելի)

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՂԳԻԻՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Էդ. Ջրբաշեան, գրականութեան տեսութիւն, էջ
 818:

2.- Վ. Ներսիսեան, Հայ միջնադարեան
 տաղերգութեան զեղարուեստական միջոցները,
 Երևան, 1976, էջ 289:

3.- Տեառն Յովհաննու Մանգակունւոյ հայոց
 իայրապետի ճառք, Վննտիկ, 1860, էջ 16 եւ 23:

4.- Մ. Արեղեան, հ. Գ, էջ 815:

5.- Նոյն տեղում:

Գրախոսական

Ներսես Լամբրոնացին Հրապարակախոս

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն 1995-ին լոյս տեսած է բանասէր Գառնիկ Անանեանի Ն. Լամբրոնացոյ Ատենաբանութեան մասին հատորը, առանց ոեւէ յառաջաբանի, բացատրութեան կամ հեղինակի մասին ոեւէ տեղեկութեան, թուականներու կամ ատենաբանութեան տուն տուող պատմական իրադարձութիւններու:

1981 թուականին Մոյն Դաստատութեան տպարանէն լոյս տեսած էր Արմաշի նախկին միաբան, Կլարնոյ Առաջնորդ, ապա նահատակուած Ամբատ Եպսկ. Սատտէթեանի Ներսէս Լամբրոնացի լուրջ ուսումնասիրութեան հատորը որ կընդգրկէ պատմական, մատենագրական եւ վարդապետական պրպտումներ:

1956-ին Դ. Ներսէս Ակինեան, Տարսոնի Արքեպսկ. Ներսէս Լամբրոնացոյ ծննդեան 800-ամեակին առթիւ, անոր կեանքին եւ գրական վաստակին մասին հատոր մը ի լոյս ընծայած էր, վիեննայի Մխիթարեան Ուխտի տպարանէն 472 էջ Պաշկաւունեաց եւ լամբրոնի Դեթումեանց ազգաբանութեամբ: Լուրջ, բժախնդիր, գիտական հիմունքներով գործ մը, եւ արժէքաւոր յաւելում մը Դայ բանասիրութեան:

Մենք բանասէր Գառնիկ Անանեանի նման, ձեռագրատան ճոխ հաւքածոներէն օգտուելու հնարաւորութիւնը չունինք, ուստի կը գոհանանք միայն տպուած հատորներ ի նկատի ունենալու:

Հայ Մատենագրութեան մէջ Արծաթ դար կոչուած ժամանակահատուածի ամենէն ակնառու մատենագիրներէն մին էր Ն. Լամբրոնացին: Ծնած 1153-ին, Կիլիկիոյ տոհմական լամբրոն բերդին մէջ, Օշին Բ. եւ Շահանդուխտ Պաշկաւունեաներու ուրջ զաւակներուն երրորդը: Մայրը Ս. Ներսէս Շնորհալիի եղբոր դուստրն էր:

Ուսումնատենչ, սրբակենցաղ, պայծառափայլ իմացականութեամբ օժտուած, 16 տարեկանին կուսակրօն քահանայ ձեռնադրուած Դռնվլայի մէջ Ս. Ն. Շնորհալի հայրապետի ձեռամբ: 22 տարեկանին Եպիսկոպոս ձեռնադրուած է Գրիգոր Տղայ Կաթողիկոսէն, Տարսոնի թեմին վրայ Առաջնորդ ըլլալու համար: Կատարելապէս տիրապետած Զումարէն լեզուին, Դայ եկեղեցւոյ դաւանութեան եւ ուղիղ վարդապետութեան մասին բանավէճի մտած է Բիւզանդական Կայսեր եւ Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարքին առջեւ, զարմացնելով իր շուրջիները:

Սորված էր նաեւ լատիներէն եւ Ասորերէն: Լատիներէնով նամակներ յղած եւ թարգմանած է Գիրք կարգաց եկեղեցւոյն Հռովմայ, Ծիսարանը: Թարգմանած է Ասորական դատաստանագիրք, կանոններ:

Եղած է Դայ եկեղեցւոյ բարեկարգիչ: Դռնտոր ու ճարտասան: Իր նշանաւոր Ատենաբանութիւնը հրատարակուած է ըստ " ընտիր օրինակաց ի լատին բարբառ, Անկիւրացի Յարութիւն վրդ. Աւգերեանէ, ի վանս Սրբոյն Պլզարու ի Վենետիկ 1812-ին ": Դայերէն հանդիպարութեամբ լատիներէնի:

Գրած է տաղեր, ճառեր, ներբողներ, շարականներ: Նկատառման արժանի են մեկնութիւնները: Մեկնութիւն Սրբոց երկառասան Մարգարէից, արարեալ երանելոյն Ն. Լամբրոնացոյ Արքեպս-ի Տարսոնի Կիլիկեցւոյ, ուղղափառ վարդապետութեամբ եւ լուսաւոր բանիւք: Տպագրեալ ըստ ընտիր օրինակաց, ի Կ. Պոլիս յամի Տեառն 1825:

Նոյնքան անուանի է իր Մեկնութիւն դատարագի գործը, տպուած Երուսաղէմ 1842-ին: Մեկնութիւն Յայտնութեանն Յովհաննոս, տպուած դարձեալ Երուսաղէմ 1855-ին:

Վախճանած է քառասուն վեց տարեկանին, հանճարային կանխահաս փայլատակումներէ ետք:

Արդ՝ հասկնալու համար Ատենախօսութեան Լիիրաւ արժեքը, անհրաժեշտ է որ բացատրուին, իր ապրած դարաշրջանի տնտեսական, ընկերային, եկեղեցական պայմանները, մանաւանդ քաղաքական վերիվայրումները որոնք տուն տուին Ն. Լամբրոնացիի պայքարներուն:

Յոյն բիւզանդական եւ լատին ճշգրտական եկեղեցիներու հետ երկխօսութեան ժամանակաշրջանն է, երբ Հայ եկեղեցին կը պաշտպանէ իր դաւանութիւնը ընդդէմ այսպէս կոչուած Երկաթնակներուն, միշտ պնդելով ~ մի բնութիւն բանին մարմնացելոյ ~ տեսակէտը կամ դաւանութիւնը: Ատենաբանութեան մէջ պարզապէս Ն. Լամբրոնացին կը հիացնէ իր ունկնդիրները, տրամաբանական, հռետորական միջոցներ օգտագործելով եւ անշուշտ անխափան առաջնորդուելով Քրիստոնէական սիրոյ առաքինութենէն: Սակայն այս բոլորը պատճառ հանդիսացան որ մեր պատմութեան մէջ ծանօթ Արեւելեան վարդապետները, որ ի վառն Հաղբատու, դարձեալ ծանօթ որպէս վարդապետը Չորագետի, բողոքեն առ Լեւոն Ա. թագաւոր Հայոց: Այլապէս վերին աստիճանի հետաքրքրական են Արեւելեան, Չորագետի վարդապետներու պահպանողական դիրքերէ գրուած թուրքերը առ Լեւոն թագաւոր, ղեկավարութեամբ Դաւիթ Վրդ. Քոբայրեցոյ եւ Տուտեղոյի:

Այս բոլորի մասին իրազեկ լինելու համար անհրաժեշտ էր որ Ներսէս Լամբրոնացին Հրապարակախօս հատորի հեղինակ, բանասէր Գառնիկ Անանեան, ի լոյս ընծայէր նաեւ Ատենաբանութիւնը: Ի վերջոյ Ատենաբանութեան մասին ամբողջ հատոր մը կարդալ, առանց Ատենաբանութիւնը ի ձեռքին ունենալու, կրնայ տաղտուկ պատճառել անընտել ընթերցողին:

Ժամանակ մը առաջ, հասկնալի պատճառներով, այսինքն երբ Հայաստանի Հանրապետութեան վարչաձեւը չէր արտօներ որ հայ մատենագիրներու գործերը հրատարակուին Երեւանի մէջ, կը տրտմէինք եւ կ'ապաստէինք աւելի բարենպաստ պայմաններու: Այժմ մատենագրին բուն գործը չի հրատարակել, այլ առանց թէքսթ ունենալու, ամբողջ հատոր մը հրաձգելով ընթերցողին, անըմբռնելի է:

Լեւոն թագաւոր, Արեւելեան վարդապետներու ամբաստանութիւններու ծանրութեան տակ, չափաւորութեան կոչ ըրաւ Ներսէս Լամբրոնացոյ: Ներսէս Արքեպսկ. Իշխանական ծագումով եւ մանաւանդ ապահով ըլլալով իր պաշտպանած դատին, Քրիստոնէական սկզբունքին, այնքան յառաջ գնաց որ մեղմօրէն յանդիմանեց թագաւորը: Ժամանակին պահպանողական վարդապետներ նոյն բանը ըրած էին նաեւ Եզր Կաթողիկոսին, ծանրօրէն ամբաստանելով զայն, ըսելով. ~ դու հասուցիր գեկեղեցիս մեր առ եզր անդունդի ...

Լամբրոնացին պայքարեցաւ հերձուածներու դէմ, Նեստորի որ Քրիստոսի մէջ երկու անձ դաւանեցաւ: Սակեղոսի դէմ որ կը ժխտէր Ա. Հոգւոյ Աստուածութիւնը կամ Դատիքի դէմ որ Սարդացեալ Քանն Աստուծոյ մարդկութիւնը կ'ունայնացնէ:

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ

Դժուարին է Բանի մը տողերով պատկերացնել կամ նկարել այս երկու մեծ դեմքերը՝ որոնց վրայ ամէն տարի նոր նոր ճառագայթներ կ'անելանման գանձնէ գեղեցկապէս այլապէս չափ: Սակայն եւ այնպէս՝ յոգնան ալ ժամանակը հեռացնէ զանոնք մեզմէ, միշտ միեւնոյն ընտանի թերափներն են անոնք մեր սրտին պաշտելութեանը մէջ, ու հիմա իրեն սուննին յիշատակովն հպարտացած ուժգին քարախումբերով կ'ողջունենք զիրենք:

Իրենց կեանքն ու գործը ազգայնութեան մը գերազանց արտափայլումն ունեցաւ: Իրենց կը պարտինք մեր դպրութեան ամենէն պերճախօս շէնքեր. իրենք եղան մայրենի եկեղեցւոյն կրկնակ սիւներն՝ Յաւումն ու Բողոք՝ հաստատութիւնն ու գործընկերը: Մէկն հայրապետական աթոռի, միւսը նահապետական արօրի մօտ ծնած՝ ա՛հ, ինչպէս յաջողեցան վերանալ հաւասար քարճրութեան մը՝ ուր Սինայի մը չափ որոտում կայ եւ Թաքորի մը չափ սքանչացում:

Գաղտնիքն ա՛յն է որ երբեմն երկուքն ալ տաք տաք արցունքներով իրարու հետ լացին, հո՛րք հո՛րք երազներով մէկտեղ հմայեցին, սու՛րք սու՛րք մըմուռներով մէկտեղ աղօթեցին. եւ ինչո՞ւ այս ամէնը.՝ որպէս զի Աստուած հայերէն խօսի. որպէս զի օտար լեզուներու (յունարէն եւ ասորերէն) խղուրդսինէն թմրած՝ չորս հարիւր տարիներէ ի վեր Աւետարանին ծառայող ժողովուրդը Աստուծոյ տաճարէն դուրս չեղնէ ա՛յնպէս՝ ինչպէս իր նախնիքը՝ Եղնէին Արմաշիի սօսիներուն անտառէն, սօսափիւն ու

սարսափ տանելով իրեն հետ Բան թէ սիրոյ երկնային ազդում մը. որպէս զի Լուսաւորչի գաւակները հոգեկան զմայլումով ողջունէին Յախտեմականին մէկ նոր Յայտնութիւնն ալ՝ հայեցի քառերով ու շէտերով, ու անոնց համար նորագոյն Ուխտի մը չափ արժէք մը ունենար այն: Ա՛յ այնուհետեւ թերեւս օտարոտի բան մը պիտի չունենար Աստուած:

Այս խորհուրդով եւ համոզումով մեծ ընտանիքին գոհարար այդ հայրերն՝ հայ գրիհասքաներ՝ իրենց գրչին արանիններ իրարու շփելով կրօնքի սրբազան կրակը անգամ մ'ալ վառեցին, ու անոր լոյսէն շլացած՝ իրաւունք ունեցան ա՛յնպէս երեւելու ինչպէս կը նկարագրէ զիրենք մօտէն դիտող երջանիկներէն մին՝ Կորիւն. «Ո՛չ այնպէս գուարճանայր Մովսէս յէջս Սինեական լեռին»: - Ի՛նչ անպատում խնդութիւն ամենուն սրտէն կը յորդէր, երբ երկնատուր հանճարներուն դիւթութեամբը «Մովսէսը մարգարէական դասով, Պօղոսը առաքելական գունդով հայարարբառ եւ հայրենախօս եղան»:

Այս գեղեցիկ յաջողութեան արդիւնքը տակաւին նոյն այն բերկրանքով կը համակէ զմեզ. ամէնքս ալ փորձն առած ենք այդ գերագոյն վայելքին. Գրի գիւտն ու Աստուածաշունչի թարգմանութիւնը մոգական արուեստն եղաւ այդ երկու Մեծ հոգիներուն:

Հոս պահ մը կանգ առնենք սակայն, եւ երկու կարեւոր կէտերու վրայ դարձնենք մեր ուշադրութիւնը:

Նախ՝ չկարծենք թէ իրարմէ անբաժան յիշատակուող այս երկու

անձնատրուքիւնները՝ պիտի կարենային առանձին մնալով օգտակար ըլլալ ա՛յնպէս՝ ինչպէս կը գնահատենք այսօր իրենց մատուցած ծառայութիւնը:

Պէտք է խոստովանիլ թէ առանց Մեսրոպի՝ գուցէ Սահակ իր տոհմին բոլոր ազնուականութեամբը, իր հայրապետական պաշտօնին բովանդակ պատկառանքովը, մշակուած մտքին լա՛յն սաւառնումներովը, անբիծ հոգիին ջերմ խանդաղատանմաներովը, չկարենար նորանշան լոյս մը սփռել իր դարուն վրայ. այլ՝ իր տեսիլքին համեմատ՝ Վաղարշապատի եկեղեցւոյն սեղանին վրայ ծալուած «քեհեզէ նափորտ»ը փոշիներու մէջ թողլով՝ իր պարկեշտ մարմինը հանգչեցնէր օր մը Աշտիշատի հողին տակ: Այն աստե՛ն իր հօրմէն՝ Ս. Ներսէսէն՝ սա տարբերութեամբ միայն ապրած պիտի ըլլար որ՝ ժողովուրդին ճակատագրին առջեւ՝ հայրը միշտ Գեորգիին կողմը դարձաւ՝ իսկ տղան՝ Գարգիին. նա իր արդար գայրոյթներուն մէջ անէծք ունէր, սա իր արցունքներուն մէջ օրհնութիւն: Այո՛, առանց Մեսրոպի՝ հայ դպրութեան ընձեռած բարիքէն կէս բաժին մ'ունենալու փառքը պիտի պակսէր Սահակին:

Միւս կողմէ՝ առանց Սահակի՝ Մեսրոպն ալ իր «անլոյս արգելանքի» բովանդակ հայեցողութեամբը, «աշխարհական կարգերու» բոլոր հմտութեամբը, անկեղծ կամքին պինդ մաքառումներովը, տրտում հոգեբուն անվերջ ցաւերովը՝ գուցէ առ առաւելն՝ պարզ կրօնաւորի մը անուշ բուրումը ծաւալէր մեր պատմութեան քանի մը թափփած թերթերուն մէջ, ու ինքը՝ տեսական քարին վրայ թողլով գիրն ու գրոյրը, իր կենդանութեան «գետնատարած անկողիներ» տանէր փռէր Օշականի մութ քնարանին խորը:

Երկուէն ալ՝ որ հիմա ա՛յնքան

խորին հիացումով կը թրթռացնեն մեր գիտակցութեան ձայնը ու երախտապարտ զգացումներու բուռն արտայայտութիւններ կը խլեն մեզմէ, երկուէն ալ՝ առանց իրարու՝ հասարակ մահկանացուի մը կեանքը ապրած պիտի ըլլային. թերեւս իրենց նմաններ շա՛տ պիտի գտնէինք, հիմա որ միայն իրարու նման են, եւ անմահ՝ ուրիշներու:

Յիշե՛մք Սահակի անձն ու պաշտօնը ներկայացնող պատմական նշանաւոր պարագայ մը: Մի՛տք բերենք ուրեմն այն անմխիթար սուգը՝ որով համակուած երբեմն իր դժբախտ հօտի տխուր վիճակին ու մեծամեծներու անմիտ խորհուրդին համար՝ շա՛տ մը օրեր իր խուցը քաշուած լացաւ ու հեծկտաց, յետոյ իր շուրջը գոռացող անիրաւներուն տեղի տալով՝ իջաւ այն աթոռէն զոր փառասէր եղեցներ կամ կնասէր ասորիներ բռնակալեցին: Եթէ ամէնն ա՛յս ըլլար, գուցէ իրաւունք պիտի ունենայինք - իր արցունքները չմոռնալով հանդերձ - տարտամ գաղափար մը շինելու իր մեծութեանը վրայ:

Յիշե՛մք նաեւ Մեսրոպի կեանքէն պատմական իրողութիւն մը: Ինքն աշխարհայինն ու գործնականը թողած՝ առանց մեծ պատճառի՝ կը հեռանայ վեհաշուք հաստատութեան մը յարկէն եւ աւագ պաշտօնէ մը, երթալ խառնուելու համար «ի կարգ միայնակեցաց», լլկելու համար իր մարմինը քաղցով ու ծարաւով, անհուն հսկումներով գոհելու համար գիշերներու հանգիստը: Եթէ ամէնն ա՛յս ըլլար, գուցէ իրաւունք պիտի ունենայինք - քարեպաշտ հոգին մեծարելով հանդերձ - թեթեւ գաղափար մը կազմելու իր ամբողջ հանճարին վրայ:

Ինչ որ ալ ըլլար ուրեմն, երկուէն ալ Մեծ տիտղոսին անարժան պիտի մնային, եթէ Պարթեւ ազնուականն ու Տարօնի

գիւղացիներն Աւետարանի բնմիւն առջեւ իրարու չհանդիպէին, եւ իրարու չգործակցէին այն չճանաչ արուեստով՝ որով Տիրի մեհեհանին բոլոր նարտարութիւնը Տիրոջ տաճարին մէջ փոխադրեցին:

Երկրորդ կէտը՝ որուն մտադիր պէտք է ըլլալ՝ ո՛չ այնչափ Աստուածաշունչի թարգմանութեան գործն է՝ որչափ այն լեզուն՝ որով թարգմանեցին զայն Սահակ եւ Մեսրոպ: Ստո՞յգ է արդեօք ումանց կարծիքը՝ թէ այդ լեզուն առաջին օրէն անիմանալի մնացած ըլլայ նոյն իսկ Ե. դարուն մէջ ապրող հայերուն՝ ինչպէս հիմա: Ո՛չ մէկ ապացոյց կարելի է գտնել այդպիսի ենթադրութեան մը հաստատութիւն տալու համար: Բայց՝ եթէ հակառակն եղած ըլլար՝ այդ մեծ վարդապետներն իրենց համբաւէն ու հրապոյրէն շա՛տ բան պէտք էր որ տուէին, եթէ իրօք չկրցան հասկնալ՝ որ ժողովուրդին կրօնական զարգացումը իր մայրենի լեզուին քնական քացատրութիւններովը միայն կրնար իրականութիւն գտնել: Սակայն՝ աւելորդ է տարակուսիլ, այդ իսկ էր «երկուց հաւասարելոց» իդճն ու նպատակը: Այդ թարգմանութեան լեզուն արուեստ ունէր, բայց ո՛չ երբեք արուեստակութիւն: Գուցէ շա՛տ ետըն ծախող քայլեր առնուէին անոնց կողմէն՝ որոնցմէ մին համարձակեցաւ գրելու թէ «մեր արուեստին անտեղեակ էին Սահակ եւ Մեսրոպ»: Աղեհանդիպող նմարանական մակարութեանց վրայ պարծող ու մեծ թարգմանիչներէն գեր ի վերջոյ ներկայանալու յաւակնութիւնն ունեցող այդ ծածկանուն գիտնականը ո՛վ որ ալ ըլլայ (հաւանաբար Սիւնեաց դպրոցին վերաբերող մը), թէ՛ ինքն ու թէ՛ իրեն տեսութիւններովը սնած միտքերը՝ Աստուծոյ խօսքը ժողովուրդին ամէն դասակարգին յարմար ու հասկնալի գործելէ գուցէ

շա՛տ հեռանային, սեբեւեբալ ու խառնակ լեզուի մը յօդաւորոյ ձեւերուն տակ՝ անոնց ձեռքով թարգմանուած Ս. Գիրք մը նոյն օրին պէտք կրնար ունենալ նոր թարգմանիչներու: Իսկ Սահակ եւ Մեսրոպ՝ ընդհակառակն՝ խօսուն լեզուին համակ պարզութեամբը - շատ էիջ քացատրեամբ թերեւս - ի գլուխ հանեցին իրենց հսկայ ձեռնարկութիւնը՝ հին թարգմանիչներու հարիւրամեայ դպրոցին աւանդական ուղղութեանը հետեւելով:

Իսկ հիմա՞, գոհ կրնա՞ն ըլլալ Սահակ եւ Մեսրոպ էանի որ այդ լեզուն ա՛յ խուժուժ բան մը դարձեր է հայ ականջներու, եւ դժուարեղ պղնձի մը պէս կը հնչէ այն. ա՛յ դադրեցա՞ն ուրեմն իրենց պաշտօնը. - բայց ինչո՞ւ մոռալ ստուեր մը կը սահի անոնց դէմքին վրայէն: Մի՛, մի՛ խռովի՛ք դուք, ո՛վ պատուական գլուխներ, ո՛չ մէկը կրնայ կապտել ձեր ճակտին շողերը՝ որոնք ամէն տարի պէ՛տք է որ աւելնան, վասն զի դուք բնականն ու իրականը գործեցիք. այսուհետեւ ձեզի հաւատարմութեամբ հետեւողներուն ու ձեր փառքին նախանձաւորներուն կը մնայ՝ Զեր ու իրենց սիրած եկեղեցիին պէտքերուն համաձայն մտածել՝ ինչպէս դուք ըրիք՝ ա՛յն է՝ ժողովուրդին ընտանի ընել կենդանի Գիրքը, Աստուծոյ գիտութեան աղբիւրները բանալ ամենուն, մէկ խօսքով՝ շարունակել ձեր գործը՝ առանց մատնելու զայն մոռացումի եւ ալլալութեան, ու անվախեան դարերու հնչեցնել ձեր անունը - ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ:

ԵՂԻՇԷ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ՝

10 ՊԱՏՈՒԻՐԱՆԵՐՈՒ ՀԵՏԵԻՈՂՈՒԹԵԱՄԲ

Մեր անգուգական հայրապետներեն Ս. Ներսէս Օնորհալի (1102-1173) ճշմարտոր եղած է որպէս երաժիշտ եւ բանաստեղծ: Բազմապիսի կարողութիւններով օժտուած էր հոգեւոր բնագաւառին մէջ, գեղով բազմաթիւ շարականներ, տաղեր եւ երգեր, մեծաւ մասամբ ալ այրութեան կարգով: Ասոնց մէջ աստուածաշնչական պատմութիւնները՝ կենդանի պատկերներու վերածուած՝ կը տողանցեն զմայլելի ու գեղեցիկ բանաստեղծական թռիչքներով, կարդացողին կամ երգողին մէջ այն տպաւորութիւնը զգացնելով՝ թէ ուղղակի Աստուծոյ հետ կը յարաբերի: Եւստ մը շարականներու եղանակներն ալ ինչ յօրինած է:

Իր բազմաթիւ յօրինուածքներուն մէջ (որոնց շարքը շատ երկար է), օրուայ 24 ժամերուն համեմատ եւ նոյնքան համարներով ալ գրուած «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը շատ ընդհանրացած ու սիրուած է մեր ժողովուրդին կողմէ: Բազմաթիւ հաւատացեալներ զայն իրենց վրայ կը կրեն ու կը կարդան, որպէս պաշտպանութեան վահան՝ քոյր տեսակի չարքներուն դէմ: Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ Մեծ Պահքի քառասնօրեայ շրջանի երկկոյտեան խաղաղականի ժամերուն՝ այս աղօթքը անպայման կը կարդացուի իր 24 համարներով, որուն իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ ժողովուրդը՝ խոր հաւատքի գիտակցութեամբ: Հոս համառօտ կերպով պիտի ներկայացնեն այդ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքին 9-րդ համարը, որ Տասնաբանեայ Պատուիրաններուն հետեւողութեամբ գրուած է.

— Ամենք խնամող Տէ՛ր, քու սուրբ երկիւղդ պահապա՛ն դիր իմ *աչքերուս* որպէսզի ցանկութիւն յառաջ բերող բաներու չնայիմ, *ականջներուս*՝ որ չար խօսքեր լսելէ չախորժին, *բերանիս*՝ որ ստուրբութիւն չխօսի, *սրտիս*՝ որ չարութիւն չխորհի, *ձեռքերուս*՝ որ անիրաւութիւն չգործեն, *ոտքերուս*՝ որ անօրէնութեան ճամբաները չերթան. հապա ուղղութիւն տուր այս բոլորին շարժումներուն, որպէսզի միշտ քու պատուիրաններուդ համեմատ ըլլամ:

Ահա՛ւասիկ շատ գեղեցիկ աղօթք մը, որ շարադրուած է Աստուծո՛ւ տրուած 10 Պատուիրաններու հիման վրայ: Մե՛նք ալ նոյն ձեւով կը կնքենք նոր մկրտուող երախան՝ զայն Ս. Միլոնով օծելու ժամանակ...

1 — *Յիսուս Քրիստոսի անունով աչքերը կը կնքենք, որպէսզի լուսաւորուի* եւ մահուան քունը չքնանան, այսինքն յախտեանական կորուստի չմատնուին: Ներսէս Օնորհալի իր գրած աղօթքին մէջ մեզի կը տրվեցնէ. «Իմ աչքերուս դի՛ր քու սուրբ վախդ, որպէսզի ցանկութիւն յառաջ բերող կամ անվայել բաներու չնայիմ»։ Իսկ Տասնաբանեայ Պատուիրանին մէջ գրուած է. «Դ՛ր արցիկդ ունեցածիմ աչք մի՛ տնկեր, անոր կնոջ կամ արտին եւ կամ որեւէ բանին մի՛ ցանկար» — Ելից Ի. 17: Սողոմոն իմաստունն ալ կը գրէ. «Քու աչքերդ ուղի՛ղ թող նային» — Առակ. Գ. 25:

Աչքերը մեր մարմնին պատուհաններն են. եթէ պահ մը գոցենք, մութի մէջ կը մնանք ու խարխափելով կը քալենք: Կը մտա-

ճիճք ճիշդ այն սենեակին, որում պատուհանները եթե գոցենք՝ կը մթննայ, իսկ եթե բանանք՝ կը լուսաւորուի: Աչքերը մեզի տրուած են՝ որպէսզի կարենանք Աստուծոյ ստեղծած այս գեղեցիկ աշխարհի բնութիւնը դիտել ու զայն վայելել, ինչ տեսնելով արարչութեան փառքը: Անոնք կը ծառայեն մահւոյ գիրար տեսնելու, ճանչնալու, իրարու յարաբերելու, բարեկամներ ունենալու, ընտանիք կազմելու, եւ գոհանալու: Իսկ եթե մեր աչքերը գէշ բաներու դարձնենք՝ որոնք մեր մէջ մոլութիւններ եւ ցանկութիւններ յառաջ կը բերեն, եթե մեր բարեկամին, ընկերոջ կամ դրացիին ունեցածին աչք տնկենք, այն ատեն մեր մէջ նախանձ կ'արթննայ, ազատութիւնը բոյն կը դնէ, կիրքերը կը բոցավառին, ատելութիւնն ու կոհուր կը սկսին, ու մեզ դէպի մահուան քունը կը տանին: Արդարեւ գրուած է. «Նախանձը ոսկորները կը փտեցնէ» - Առակ. ԺԴ. 30: Իմաստունը մահւոյ կ'ազդարարէ. «Ո՛վ երիտասարդ... աչքերուդ նայուածքով քալէ. բայց գիտցի՛ր թէ ասոնց ամենուրեք համար Աստուծոյ քեզ դատաստանի պիտի կանչէ» - Ժող. ԺԱ. 9:

Հոս կը տեսնենք թէ մեր մարմնին գլխաւոր կառավարիչը՝ ուղեղէն ետք՝ աչքերն են, որոնք ուղեղին միջոցաւ միւս բոլոր անդամները կ'աշխատեցնեն, ու շատ անգամ չարութիւն եւ ոգի կը մտածեն: Մեր Տէրը իր քարոզութեան ընթացքին ըսաւ. «Եթէ քու աչքիդ մէկը քեզ կը գայթակղեցնէ՝ հանէ՛ զայն. անելի լաւ է մէկ աչքով արքայութիւն երթալ, քան թէ երկու աչք ունենալ եւ դժոխք երթալ» - Մատթ. Ե. 29: Այս խօսքը իր մէջ ուրիշ կարեւոր իմաստ մըն ալ կը պարունակէ. եթէ քու աչքիդ լոյսին պէս սիրած ընկերդ, հետ բարեկամդ ուզէ քեզ դէպի գէշ ճամբաներ առաջնորդել, հեռացի՛ր իրմէ եւ խզէ՛ յարաբերութիւններդ. անելի լաւ է առանձին հանգիստ ապրիլ, քան թէ ընկերովի զանազան տեսակի փորձանքներու ենթարկուիլ ու կեանքդ կորսնցնել, թէ՛ այս աշխարհին եւ թէ հանդերձեալին մէջ:

2 - *Երախային ականջները կ'օծենք, որպէսզի անոնք Աստուծոյ պատուիրանները լսեն:* Ս. Հայրապետը մեզ կը խրատէ՝ աղօթելով. «Իմ ականջներս պահէ, որ չարութեան խօսքեր չլսեն»: Քանի մեր ականջները ամէն տեսակ խօսքեր կը լսեն, լաւ կամ վատ, զգոյշ ըլլանք չար խրատներէն, մտիկ չընենք այնպիսի աղտոտ խօսակցութիւններ, որոնք մեր ականջներուն հաճելի կը թուին բայց մեզ Աստուծմէ կը հեռացնեն ու մեղքի մէջ կը ձգեն: Մարդկային բնութեամբ մենք միշտ ականջ կու տանք այնպիսի խօսքերու, որոնք կրնան մեր մարմինը ու հոգին ապականելով մեզ մահուան եւ կորուստի առաջնորդել: Ուրեմն հեռո՛ւ մնանք ատոնցմէ, ու միայն լսենք ինչ որ բարի է եւ Քրիստոսի Ս. Աւետարանէն մեզի կը քարոզուի, որպէսզի յաիտենական կեանքին արժանանանք:

Սողոմոն իմաստուն կը գրէ. «Խրատ սիրողը գիտութիւն կը սիրէ, բայց յանդիմանութիւն ատողը անմիտ է...: Խոհեմին սիրտը գիտութիւն կը վաստկի, եւ իմաստուններուն ականջը գիտութիւն կը փնտտէ» - Առակ. ԺԲ. 1, ԺԸ. 15:

3. *Երախային բերանը կը կնքենք, որպէսզի շրթունքները ամուր սը գոցուին եւ պահեն բերանը՝ գէշ կամ սուտ խօսքեր խօսելէ, եւ զգոյշ ըլլան: Օնորհալին մեզ կը խրատէ՝ աղօթքով. «Բերանս ստութիւն թող չխօսի»: Իսկ Պատուիրանները մեզի կ'ըսեն. «Սուտ մի՛ խօսիր, սուտ վկայութիւն մի՛ ընէր»: Նոյնպէս Առակաց գրքին մէջ կը կարդանք. «Արդարին լեզուն ընտիր արծաթ է...: Արդարին շրթունքները շատերուն առաջնորդութիւն կ'ընեն...: Մարդիկ կան որոնց անմիտ խօսքերը սուրի պէս կը խոցոտեն, բայց իմաստուններուն լեզուն բժշկութիւն է...: Մահն ու կեանքը լեզուին ձեռքն են» - Առակ. Ժ. 20, 21, ԺԲ. 18, ԺԸ. 21:*

Մենք պէտք է զգուշութիւն ընենք մեր բերանին, որպէսզի գէշ խօսքերով, բամբասանքներով ռելէ մէկը չվշտացնենք, զիրար չխաբենք, չհայհոյենք, հապա աղօթենք եւ իմաստութեամբ խօսինք՝ որ Ս. Հոգին չտրտմեցնենք: Թակոթու Առաքեալ կը գրէ. «Ո՛չ ոք կրնայ նուաճել լեզուն, որ անզուսպ չար է եւ մահաբեր թոյնով լեցուն...: Միեւնոյն բերանէ կ'ելլեն օրհնութիւն եւ անեծք: Եղբայրներս, պէտք չէ որ այս այսպէս ըլլայ» - Թակ. Գ. 8-10: Ուրեմն տէ՛ր ըլլանք մեր լեզուին ու Սաղմոսերգութիւն հետ ըսենք. «Տէ՛ր, եթէ շրթունքներս բանաս, բերանս քու օրհնութիւններդ պիտի երգէ» - Սաղմ. ՄԱ. 15:

4. *Երախային սիրտը կը կնքենք, որպէսզի իր մէջ մաքուր սիրտ մը եւ ուղիղ հոգի մը հաստատուին: Ս. Հայրապետը մեզ կը խրատէ՝ աղօթքով. «Պահէ՛ իմ սիրտս, որ չարութիւն չխորհի»: Պօղոս Առաքեալ մեզի կ'ըսէ. «Ձեր մէջէն դո՛ւրս վանեցէք... բարկութիւնը, սրտմտութիւնը, չարութիւնը... պղծութիւնը, կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահոութիւնը՝ որ կռապաշտութիւն է, որոնց համար Աստուծոյ բարկութիւնը անհնազանդութեան որդիներուն վրայ կու գայ...: Ձեր վրայ հազէ՛ք գութը, ողորմութիւնն ու քաղցրութիւնը... իրարու համբերելով եւ իրարու ներելով» - Կող. Գ. 5-15: Իմաստունը կը գրէ. «Դրացիիդ հանդէպ չարութիւն մի՛ մտածեր, որովհետեւ ան քեզի վատահելով է որ հետդ կը բնակի» - Առակ. Գ. 29: Մենք՝ հայերս շատ անգամ կ'ըսենք թէ մօտիկ դրացին հեռուի եղբորմէն աղէկ է: Թերեւս հարեանդ քեզմէ տկար կամ աղքատ է. բայց կրնայ ըլլալ որ օր մը դուն ալ իրեն պէտք ունենաս: Եթէ յանկարծ գիշերով մեղ դրութեան մատնուիս, դրացիդ է որ քեզի օգնութեան պիտի հասնի: Յիսուս ըսաւ. «Բերանը սրտին անեցութիւն կը խօսի» - Մատթ. ԺԲ. 34: Ուրեմն ինչ որ Տէրոջ հաճելի է՝ զայն կատարենք, որպէսզի անոր օրհնութիւնը ստանանք:*

5. *Երախային ձեռքերը կը կնքենք, որպէսզի բարիք գործէ, եւ ամէն տեսակ առաքինի ու մաքուր գործերու պատճառ ըլլայ:* Ս. Հայրապետը մեզ կը խրատէ՝ աղօթելով. «Ձեռքերուս պահապան դիր, որ անհրաժեշտութիւն չգործեն»: Մեր ձեռքերը ստեղծուած են՝ մարմնին պէտքերը հոգալու: Եթէ մեր սրտէն գէշ մտածումներ հասնին ուղեղին, հրաման կը տրուի մեր ձեռքերուն՝ որ չարիք գործեն – գողնան, մարդ ծեծեն, մոլորակ սպաննեն, միջնդեռ Պատուիրանը կ'ըսէ. «Սպանութիւն մի՛ ըներ»: Առակաց գրքին մէջ կը կարդանք. «Մոյլ ձեռքով բանողը աղքատ կ'ըլլայ...: Ո՛վ մոյլ, գնա՛ մրջիմին. տե՛ս անոր ճամբաները եւ իմաստուն եղիր...: Աշխատասէր մարդուն ծրագիրները իրաւամբ առատութիւն կը բերեն» – Առակ. 2. 6, Ժ. 4, ԻԱ. 5:

Երբ կ'աշխատենք, կրնանք մեր ընտանիքին պէտքերը հոգալ, նաեւ կարօտեալներու օգնել եւ ազգին ալ օգտակար ըլլալ: «Մարդ կայ, որ իր ունեցածը ցրուելով կը շատցնէ. մարդ ալ կայ, որ չափէ դուրս կը խնայէ, բայց կարօտութեան կը հասնի» – Առակ. ԺԱ. 24: Եթէ կրնաս բարիք ընել, բնա՛ւ մի՛ զլացար: «Աղքատին ողորմութիւն ընողը Տէրոջ փոխ կու տայ, եւ Ան իրեն հատուցում պիտի ընէ» – Առակ. ԺԹ. 17: Ուրեմն պէտք է որ մեր ձեռքերը սրտէն եկած բարի եւ օգտակար խորհուրդները իրագործեն՝ կարելիութեան սահմաններուն մէջ. այն ատեն Տէրն ալ մեզի հետ պիտի ըլլայ:

6. *Երախային կոնակը կ'օծենք՝ ըսելով. «Վահան ամրութեան, որով կարենաս չարին նետած բոլոր այրող նետերը մարել»:* Արդարեւ Աստուծոյ խօսքն է ճշմարտութեան, արդարութեան եւ սրբութեան զէնքը: Երբ անոր վստահելով մեր կեանքի ճամբան քալենք, այն ատեն ամուր պաշտպան մը կ'ունենանք՝ մեզի թիկունք կանգնող: Կարող կ'ըլլանք չորս կողմէն եկած զանազան չարութիւններուն դիմադրել, որովհետեւ գիտենք թէ «մեր կոնակը շատ ամուր է»: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Եթէ Աստուած մեզի հետ է, ո՞վ կրնայ մեզի հակառակ կենալ» – Հռով. Ը. 31: Եթէ պարզ մահկանացու մարդոց վստահելով մեր դիրքը զօրաւոր կը զգանք, ինչո՞ւ մեր անմահ Արարչին չվստահինք, որ ամէն ինչի կարող է: Ան է որ մեզի կեանք կու տայ, ամէն տեսակ խոչընդոտ կը վերցնէ մեր ճամբաներէն, ու մեզ դէպի յաւիտենական կեանք կ'առաջնորդէ: Սաղմոսերգուն կը թելադրէ. «Մի՛ յուսաք իշխաններուն, մարդու որդիին՝ որուն քով փոկութիւն չկայ...: Երանի՛ անոր... որուն յոյսը իր Տէր Աստուծոյն վրայ է» – Սաղմ. ԺԵԶ. 3-5:

7. *Եւ վերջապէս՝ երախային ոտքերը կը կնքենք, որպէսզի ուղիղ ճամբու մէջ քալէ իր կեանքի ընթացքին, եւ չսասանի:* Ս. Հայրապետը մեզ կը խրատէ՝ աղօթելով. «Պահապան դիր իմ ոտ-

քերուս, որ անօրէնութեան ճամբան չերթան»։ Առակախօսը կը գրէ. «Որդեա՛կ իմ... ամբարիշտներուն ճամբայէն հեռացի՛ր...։ Ամբարիշտներուն ճամբան խաւարի պէս է, ու չեն գիտեր թէ ի՛նչ բան իրենց ոտքը պիտի սահեցնէ» - Առակ. Դ. 14, 19։ Ուրեմն զգո՛յշ ըլլանք, որ ուղիղ ճամբաններու հետեւինք. հեռո՛ւ մնանք չար ընկերակցութիւններէ, խռովարար մարդոցմէ, որոնք կ'ուզեն մեզ ոլոր-մոլոր ճամբաններուն մէջ առաջնորդել՝ դէպի կորուստ եւ մահ։ Մենք Յիսուսը ունինք որպէս առաջնորդ. իրեն վստահինք, որ մեզ առաջնորդէ կենաց ճամբուն մէջ, այս աշխարհի խաբուսիկ փառքերէն ու փորձանքներէն հեռու պահելով։ Ունինք նաեւ Աստուծոյ խօսքը, որ «մեր ոտքերուն ճրագ է, ու մեր շաւիղներուն՝ լոյս» - Սաղմ. ԺԺԹ. 105։

Որպէս քրիստոնէայ հաւատացեալներ, երբ փոքր երախան կը մկրտենք եւ Ս. Միռոնով օծելով կը դրոշմենք, այս գլխաւոր աղօթքներն են զորս կը կարդանք, հիմնուած Ս. Գրքին մէջ գրուած Տաւր Պատուիրաններուն եւ Նոր Ուխտի ուսուցումներուն վրայ։ «Տէրոջ առջեւ եօթը բաներ պիղծ են. ամբարտաւան աչքեր, ստախօս լեզու, անմեղ արիւն թափող ձեռքեր, չար խորհուրդ հնարող սիրտ, չարութիւն ընելու համար շուտ վազող ոտքեր, ստութիւն խօսող անիրաւ վկայ, ու եղբայրներու մէջ կոխներ ցանող մարդ», կ'ըսէ Առակախօսը, եւ կ'աւելցնէ. «Կրթ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը, որպէսզի ծերութեան ատենն ալ անկէ չխտորի» - Առակ. Զ. 16-19, ԻԲ. 8։ Ուրեմն դաստիարակե՛նք մեր զաւակները Աստուծոյ վախով, որպէսզի իրենք ալ Դաւիթ Թագաւորին պէս ըսեն. «Կ'որսխանայի երբ ինծի կ'ըսէին. “Տէրոջ տունը երթանք”» - Սաղմ. ԺԻԲ. 1։

Պօղոս Առաքեալ կը գրէ. «Ձեր անդամները մեղքի մի՛ ընծայէք՝ անիրաւութեան գործիք ըլլալու համար, հապա՛... Աստուծոյ...։ Քանզի մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտեանական կենանք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով» - Հռով. Զ. 13, 23։ Խորհեցէ՛ք այն բաները՝ որոնք ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի, բարեհամբաւ, առաքինի եւ գովելի, ու գործո՛ւ վատարեցէ՛ք այն՝ ինչ որ սորվեցաք» - Փիլյ. Դ. 8։ Ուրեմն խոստովանի՛նք մեր մեղքերը Տէրոջ առջեւ, ներո՛ւմ ստանանք, եւ ինչ որ իրեն հաճելի է՝ զա՛յն ընենք։ *Ժամանակը ծախո՛ւ առնենք*, որ իր օրհնութիւնները ստանանք։ Մեզի տրուած խելքն ու դատողութիւնը գործածե՛նք դէպի լաւ եւ բարի, որպէսզի մեր անունները Կենաց Գրքին մէջ արձանագրուելով՝ Տէրոջ կողմէ պատրաստուած երկինքի ուրախութեան մասնակցելու արժանի ըլլանք։

Վարդապետ Քահանայ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՅՈՒՇԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՕՐԵՐ

Չորեքշաբթի 27 Հոկտ. 99

Առաւօտեան ժամը 10ին, Ազգային-եկեղեցական ժողովի հանդիսաւոր բացումը կը կատարուի վեհարանի հանդիսութեանց դահլիճին մէջ, Հայր Մերով եւ Զգործս Ձեռաց Մերոցով: Վաչէ Սրբազանը, երկիր առ երկիր տեղաւորուած պատգամաւորներուն ներկայութիւնը կը ստուգէ: Հայաստանի Հանրապետութեան նախագահի տեղակալը եւ Ազգային-եկեղեցական ժողովի նախագահութիւնը պաշտօնապէս մուտք կը գործեն եւ Հայաստանի հիմըն ու էջ Միածին ի Հօրէն յոռակայս կ'երգուին: Կաթողիկոսական Տեղապահը կը ներկայացնէ Հ.Հ.ի նախագահի տեղակալը որ կ'արտասանէ նախագահի ողջոյնի խօսքը: Ապա, Կաթ. տեղապահը կը կարդայ համառօտագրութիւնը իր զեկոյցին: Հ.Հ.ի նախագահի տեղակալը հրաժեշտ կ'առնէ: Շշուկներ կը շրջին, որ Հ.Հ.ի նախագահը վիրաւորուած է իր անձին ուղղուած ինքնադատութիւններէն եւ մերժած է անձամբ ներկայ ըլլալ:

Վաչէ Սրբազանին Ազգային-եկեղեցական ժողովի մասին կազմակերպական տեղեկութենէն ետք, Թորգոմ Պատրիարք օժանդակութեամբ Մեսրոպ Պատրիարքի կը հրաւիրուի ձեռնարկելու Ազգային-եկեղեցական ժողովի Դիւանի երկու Ատենապետներուն եւ երկու ատենադպիրներուն ընտրութեան աշխատանքին: Պատրիարք Սրբազանը կը կարդայ ժողովական հիմնական կանոնները, որոնց համաձայն կարգապահօրէն պիտի ընթանայ ժողովը: Կը բացատրէ ֆուէները համարելու

դրութիւնը եւ կ'առաջարկէ որ հերթով՝ երկու Ատենապետի եւ ապա երկու Ատենադպիրի թեկնածութեան համար գրաւոր առաջարկներ ներկայացունեն: Հատուածական կողմնորոշումներէ թելադրուած, կարգ մը տարակարծութիւններէ ետք՝ բաց ֆուէարկութեամբ Ա. Ատենապետ կ'ընտրուի Ակադեմիկոս Սեբգեյ Համարաձումեան եւ Բ. Ատենապետ՝ Դոկտ. Սիմոն Պալեան եւ Ա. Ատենադպիր՝ Տ. Արաքիւս Եպս. Մկրտչեան եւ Բ. Ատենադպիր Տ. Եզնիկ Եպս. Պետրոսեան:

Վաչէ Սրբազանը կը տեղեկացնէ թէ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի որոշումով՝ մի առ մի տրամադրութիւնը շօշափած է քոլոր Սրբազաններուն՝ իրենց թեկնածութիւնը դնելու առընչութեամբ եւ կը կարդայ անոնց անունները: Ի յայտ կու գայ, որ միայն Ներսէս Արք. Պօգապալեան եւ Գարեգին Արք. Ներսէսեան յօժարած են իրենց թեկնածութիւնը դնել. իսկ, Յուսիկ Արք. Սանթրուհեան դեռ չէ պատասխանած: Կ'որոշուի ստուգել այս պարագան ընտրութեան գործընթացին ձեռնարկելէ առաջ: Պատգամաւորներէն ռմանք արտաստվոր կը գտնեն Վաչէ Սրբազանին այս միջաւտութիւնը, որ կը հակասէ օրակարգի յաջորդական երեք ֆուէարկութեանց նշումին: Իմ առաջին փորձառութիւնս է եւ կը մտածեմ թէ աւելի լաւ պիտի ըլլա՞ր եթէ նախկին ձեռով ամէն եպիսկոպոս թեկնածու նկատուէր առաջին ֆուէարկութեան՝ փոխանակ. ընտրութենէն առաջ իրենց ուղղուած հարցումէն խրտչելու:

Ուրիշներ կը դժգոհին այս սահմանափակումէն եւ կը նախընտրեն՝ գէթ հինգ թեկնածուներէ քաղկացեալ ցանկ մը. կը ցաւին որ կատարուած իրողութեան մը առջեւ դրուած են: Գերագոյն հոգեւոր խորհուրդը ունի՝ իրաւասութիւնը նման քալ մը առնելու. հարց կու տամ ես ինծի:

Կէսօրուայ դադարին, անակնկալ հանդիման կ'ունենամ ողջագոյնելու երուսաղէմի աշակերտներէս՝ Եգիպտահայոց Առաջնորդ՝ Զաւէն Արք. Զինչիմեանին եւ պատգամաւոր Ստեփան Վարդանեանին, դպրոցական ընկերոջս՝ Կիւրեղ Եպս. Գարիկեանին: Իսկ Կիպրոսի աշակերտներէս՝ Ռուսահայոց Առաջնորդ՝ Տիրան Արք. Կիւրեղեանի ու իր եղբոր՝ Վանաձորի պատգամաւոր՝ Սահակին: Միասին կը քրքրենք անցեալի քաղցր յիշատակները: Աշակերտներ կան որ հպարտ են իրենց ուսուցիչներով, եւ ուսուցիչներ ինծի պէս՝ որոնք հպարտ են իրենց ազգանունը աշակերտներով:

Ժամը Զ-ին յ.մ. կը սկսի կաթողիկոսական ընտրութեան աշխատանքը: Տաճարին մէջ: Բարձրախօսով մի առ մի կը կանչուին պատգամաւորները. տաճարի մուտքին՝ ցոյց կու տան իրենց ինքնութեան քաղցրը եւ կը գրաւեն իրենց նշանակուած աթոռները: Բոլոր 451 պատգամաւորներու տեղաւորումէն ետք, կը կղպուի Տաճարին մայր դուռը եւ հաւաքական եղբմահոտութեան արարողութենէն ետք, իւրաքանչիւր պատգամաւոր կը հրաւիրուի ստանալու իր քուէքաղցրը, որուն վրայ հայերէնով պաշտած են Ներսէս Արք.ի եւ Գարեգին Արք.ի անունները. նկատի ունենալով որ Յուսիկ Արք.ն ալ հրաժարած է իր թեկնածութիւնը դնելէ: Անթերի կանոնաւորութեամբ, Բ. Ատենապետի հսկողութեան տակ, իւրաքանչիւր պատգամաւոր Ա. Խորան կը յառաջանայ, քուէքաղցրին

վրայ երկու անուններէն մին կը ջնջէ, թուղթը կը ծալէ եւ զայն անձամբ կը դնէ երկու Պատրիարքներուն առջեւ գետնաշաղկապէն: Գաղտնի քուէքաղցրէն որ կը կատարուի երեք քուէքաղցրէն աշխուրջ հսկողութեան տակ՝ կու տայ հետեւեալ արդիւնքը. Գարեգին Արք. ԶԵՅ քուէ. Ներսէս Արք. 176 եւ 12 քուէներ ալ անվաւեր կը նկատուին: Ծափողջոյններու տարափին տակ Գարեգին Արք. կը հուշակուի որպէս 132րդ Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Կը վերցուին իշման սեղանի սեւ վարագոյնը եւ հայրապետական Աթոռին վրայ նստած սեւ փողը: Մինչ լէշմածնի զանգակները կ'աւետեն 132րդ կաթողիկոսին ընտրութիւնը, նորընտիր հայրապետը, յայտնապէս յուզուած, իշման սեղանի առջեւ դրուած ամպիոնէն իր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնէ Աստուծոյ. իր ծնողներուն, Պատրիարք հայրերուն եւ սրբազաններուն՝ Ազգային ժողովի կազմակերպման առթիւ իրենց բարեջան գործունէութեան համար եւ կը պատրաստուի մաղթանքով մը փակել իր խօսքը, երբ սրբազան մը թուղթի կտոր մը կը յանձնէ հայրապետին որ կը կարդայ. կը սահմուկի եւ խեղդուկ ձայնով կ'ըսէ. «Տխուր մի լուր ունեմ հաղորդելիք. բայց չեմ հաւատում: Խորհրդարանի մէջ Ազգային ժողովի վրայ յարձակում գործուել է. Վարչապետ Վազգէն Սարգսեան սպաննուել է եւ Ազգ. ժողովի Նախագահ Կարէն Դէմիրճեանը ծանրօրէն վիրաւորուել է. Ուրիշ սպաննուածներ էլ կան: Շէնքը պաշարումի տակ է»: Մեր զգացած ուրախութիւնը յօդս կը ցնդի ու խոր սուգի կը մատնուիմք: Բոլորս ալ միաբերան կ'աղօթենք զոհուածներուն հոգիներուն համար: Փշրուած տրամադրութեամբ եւ ապագայի ծանր

հետեւանքներու հաւանականութեամբ մտահոգ սրտով էջմիածնէն կը հետանանք: Երեսանի հրապարակներուն եւ պողոտաներուն վրայ մարտական զգեստով հայ զինուորներ հրասայներու վրայ դիրք բռնած են: Արտասովոր հանդարտութիւն մը կը տիրէ:

Հիւրանոցի սենեակիս հետտեսիլէն զանազան երկիրներ տարբեր լեզուներով մանրամասնօրէն կ'անդրադառնան Երեսանի մէջ գործուած ռիսիկն, միւս չէր, հայկական քաժնէն՝ Առողջապահութեան նախարարը շատ սահմանափակ տեղեկութիւն մը կու տայ: Շա'տ անհանգիստ եմ: Ինչպէ՞ս հայ մը կրնայ ուրիշ հայ մը սպաննել: Ինչպէ՞ս զինուած հայեր կը յաջողին Ազգային ժողովի շէնքէն ներս մտնել առանց բռնուելու: Ինչո՞ւ այս ռերագործութիւնը, իշխանութիւնը տապալելու փորձ մը: Հին հայկական հիւանդութիւնը դարձեալ գլուխը կը ցցէ: Ե՞րբ պատահեր է մեր պատմութեան մէջ որ հայ բազաւոր մը անխռով եւ անարգել գահակալէ: Գիշերը ամբողջ անհուն կ'անցնեն:

Հինգշաբթի 28 Հոկտ. 99.

Ազգային-եկեղեցական ժողովի Բ. նիստը կը սկսի ընկնուած տրամադրութեամբ: Երեկուայ ռիսիկն մասին տարաձայնութիւններ կը շրջին. պատգամաւորներէն նկատելի թիւ մը կը բացակայի. Ատենապետը կը յայտնէ որ Ա. նիստի ատենագրութիւնը պատրաստ չէ ընթերցման եւ վաւերացման համար: Կ'որոշուի Ազգային-եկեղեցական ժողովի անունով ցաւակցական գիր մը յղել Հ.Հ.ի նախագահին՝ ստորագրութեամբը ժողովի նախագահ ընտրեալ կաթողիկոսին, Ատենապետին եւ Ատենադպիրին: Կը կարդացուի եւ կը վաւերացուի Ատենադպիրներուն կողմէ խմբագրուած գրութիւնը:

Անդրադառնալով Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնադրութեան վերջնական վերամշակումի եւ վաւերացումի հարցին, կ'որոշուի էջմիածնի մէջ գումարել բացառիկ ժողով մը՝ ոչ աւելի ուշ քան Հոկտեմբեր 2000 թուականը, որուն պիտի մանակցին՝ եպիսկոպոսներ եւ իւրաքանչիւր թեմէ մէկ ներկայացուցիչ: Ժողովի Ատենապետը, ընտրեալ կաթողիկոսի թելադրանքով կը փակէ Ազգային-եկեղեցական ժողովը, առանց ճշտելու կաթողիկոսին օծման եւ գահակալութեան թուականը: Պատգամաւորներէն ոմանք իրենց յուսախարութիւնը կը յայտնեն Վաչէ Սրբազանին՝ կարգ մը կարեւոր հարցերու առկախումին համար: Վեհաբանին առջեւ Վեհափառին հետ պատգամաւորներու լուսանկարումէն ետք, կը վերադառնանք Երեսան: Առիթը կը գտնեմ վեհափառը շնորհաւորելու եւ յայտնելու քրիստոնեայութեան սրտագին շնորհաւորութիւնները եւ հաւատարմական զգացումները: Միեւնոյն ատեն կ'ողջագուրուիմ վաղեմի բարեկամիս՝ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքին հետ եւ քանի մը անոյշ խօսքեր կը փոխանակենք:

Շատ մեծ է հիասթափութիւնս:

Ահագին ժամանակի վատնում եւ ծախք մէկ ու կէս նիստի համար: Նորոգ հանգուցեալ պետական զոհերու յիշատակը լաւագոյնս յարգած պիտի ըլլայինք եթէ ժողովը լրջութեամբ շարունակէր իր օրակարգը: Ընտրէր նոր գերագոյն հոգեւոր խորհուրդը, կազմուէին մասնաւոր յանձնախումբեր՝ զբաղելու համար մեր եկեղեցիին բարեկարգութեան հետ կապուած կենսական կարեւորութիւն ունեցող հարցերով՝ նոր հազարամեակի սեմին: Միասնաբար խորհրդակցելու եւ դրական եզրակացութեանց յանգելու առիթէն զրկուեցանք: Ճարահատ՝ Բ.Ա.ի գրասենեակը կ'երթամ

Երեւանի մէջ կեցութիւնս կրճատելու նպատակով: Համակրելի հայուհի մը, իմ հայերէն հարցումիս, ինքնաբերաբար, սահուն անգլերէնով կը պատասխանէ: Կատակով կ'ըսեմ. «Հայերէն կը հասկնամ. եթէ կ'ուզէ՛ք ձեր անգլերէնը փորձել, սիրով մտիկ կ'ընեմ, բայց կը նախընտրեմ՝ ձեր գեղեցիկ արեւելահայերէնը ունկնդրել»: Անուշ ժպիտով մը կը քացատրէ թէ չի կրնար փոխել վերադարձի թռիչքին թուականը:

Երեկոյեան կ'այցելեմ Զավադեան ընտանիքին: Մութ մուտէ՛ք մը անցնելով, դրացի տիկնոջ մը օժանդակութեամբ կը բարձրանամ երկար հասակ շէնքի մը բարձրագոյն յարկը. որուն հիւրասենեակի պատշգամբէն՝ Երեւանի գեղեցիկ համայնապատկերը աչիդ առջեւ կը փռուի եւ հեռուն՝ երկու Մասիսները կը կանգնին իրենց ամբողջ վեհութեամբ: Զիս կը դիմաւորեն Տիկ. Զավադեանը՝ պեղծ մը անոյշ սիրտ հայուհի մը եւ իր կրտսեր զաւակը՝ Լեւոնը: Հակառակ գաւաթ մը սուրճ միասին խմելու խնդրանքիս, տամ տիկինը ահագին յոգեած է եւ ճոխ սեղան մը շտկած: Շուտով մեզի կը միանան Սերգեյը, Արտաշէսը, Լեւոնի տիկինը՝ Անահիտը եւ իրենց ծագուկը՝ փոքրիկն Սերգեյը: Կը խմեմ մեր հայրենիքին եւ ազգին, մեր ընտանիքներուն եւ սիրելի քացականերուն կենացը եւ ստեղծուած շերմիկ մթնոլորտին մէջ, կը խօսինք սրտքացօրէն, զուարթ եւ լուրջ նկրթբոլորէ:

Սերգեյը տպաւորութիւններս կը հարցնէ Երեւանի մասին եւ ինձի առիթը կ'ընծայէ կրկին գովքը հիւսելու Երեւանի ինքնատիպ գեղեցկութեան: «Մայրաքաղաքին ծրագիրը յղացողները եւ շինարարները քացայայտօրէն մեծութեան եւ գեղեցկութեան զօրաւոր զգայարանով օժտուած ու իրենց ըրածին պատմական

արժէքին գիտակցութիւնը ունեցող մարդիկ եղած են. որոնք յարողած են ամէն շէնքի կառոյցի ճակատին, պողոտայի վրայ եւ այգիի արձանին մէջ՝ մնալուն գեղեցկութեան դրոշմը դնել»: Կ'ըսեմ եւ շինարարներ Սերգեյի եւ Աիտայի կենացը քաժակ կ'առաջարկեմ: «Սովետական շրջանում այդպէս էր» կ'ըսէ Սերգեյ, «խորհրդային միութեան միւս հանրապետութիւններին հետ միշտ մրցակցութեան մէջ էինք եւ շատ լաւ կապեր ունէինք Մոսկուայի հետ, յատկապէս Անտոն Բոչինեանին եւ Կարէն Դեմիրճեանին ղեկավարութեան օրերին: Բոչինեանին Պրիլիանդ Անտոն էինք կոչում, որովհետեւ իր անուշ լեզուով եւ տարած նուէրներով հսկայական գումարներ էր ապահովում մեր հայրենիքին: Նոյն քաղաքականութիւնը վարեց նաեւ Դեմիրճեանը: Այդ հոյակապ շէնքերը, Մեթրոն՝ որ տեսար, կարողացանք կառուցել, Մոսկուայից՝ դէպի մեր երկիր հոսող դրամի շնորհիւ: Իսկապէս հայրենասէր եւ քարի մարդ էր Բոչինեանը: Իր մասին, բեզի համար մի պատմութիւն պատմեմ: Երեւանից ոչ շատ հեռու մի գիւղի մօտ, տեղի է ունենում մի հսկայ համալիրի քացումը, որին հրաւիրուած էր նաեւ Բոչինեանը: Երբ որ հանդիսութիւնը վերջանում է եւ երեկոյեան պատրաստուում են Երեւան վերադառնալու, նկատում են որ գիւղը վերանորոգուած է եւ կերպարանափոխուած, իսկ տների կտուրները՝ արեւի լոյսի տակ փայլում են: Յայտնի է, որ գիւղացիները ինչ որ ձեռով օգտուել են համալիրին յատկացուելիք շինանիւթերից: Պատասխանատուներից մէկը Բոչինեանին յայտնում է որ արդէն իսկ այդ մասին քննութիւն է սկսուել: Բոչինեանն էլ ասում է. «Ա՛յ մարդ, ինչ քննութեան մասին է խօսքը: Ուրախացիր որ գիւղացիները իրենց կեանքի պայմանները

բարեկամել են»։ Այդպիսին էր Քոչինեանը։ Ցաւն այն է որ այդ աղբիւրը այսօր ցամաքել է։ Երեւանի համար մեր մշակած ծրագրերի իրագործումը, դժբախտաբար, այլեւս չպիտի տեսնեմ։ Հիմա, դրամ ունեցողները, առանց քաղաքացիական ռեւէ էսթեթիկական (գեղագիտական) նկատառումի՝ շէնքեր են կառուցում եւ խանգարում են Երեւանի երկնքի ներդաշնակութիւնը»։

Արտաշէսը կը հետաքրքրուի Լոնտոնահայ համայնքի կեանքով եւ կ'ուզէ կապ հաստատել անգլիարմակ հայ բժիշկներու հետ։ Կը յայտնեմ որ թրիտանահայ բժիշկներու գործունեայ Միութիւն մը ունինք, որ արդէն իսկ կ'օգնէ հայրենիքին եւ կը հաւաստիացնեմ որ անոնք անվերապահօրէն պիտի գործակցին երբ կապը ստեղծուի։ Այս առիթով նիւթը կը բանակ կարօտեալ ազգակիցներու բժշկական դարմանումի հարցին եւ կը յիշեմ դպկադէմ երիտասարդ կնոջ հիւանդ մոմսնին պարագան։ Կը յայտնէ թէ ինք ալ շատ մտահոգ է այդ մասին եւ կը մտածէ ծրագիր մը ներկայացնել առողջապահական նախարարին, ըստ որում, Երեւանի մէջ չորս հիւանդանոցներու մէջ առիթը տրուի հաւասար դարմանումի՝ դրամ ունեցողներու կամ չունեցողներու։ Կը յիշեցնէ որ ներկայիս, Պետութիւնը նւթական շատ ծանր կացութեան մէջ է եւ պարտադրուած է շուկայի տնտեսութեան պայմաններուն հետեւիլ։

Կը յայտնեմ բարեկամիս, որ կը հասկնամ միջազգային դրամատան եւ Արեւմտեան երկիրներու դրամական փոխառութեան պարտադրանքները եւ սակայն շուկայի տնտեսութիւն կոչուած դրութիւնը շատ անգութ է եւ անարդար։ Հարուստը աւելի կը հարստանայ իսկ աղքատը ուղղակի կը նգմուի։ Մեր հայրենիքը կարելի եղածին չափ շուտ

պէտք է պատրաստուի կիրարկելու խառն Տնտեսութեան (Mixed Economy) դրութիւնը ուր Պետութիւնը կը քաջալերէ դրամատէրերուն առաւելագոյն չափով շահիլ եւ իրենց շահածին վրայ՝ եկամուտի տուրք վճարել Պետութեան, որպէս զի, ան ալ՝ կարենայ ձրի ընդհանուր կրթութիւն, բժշկական դարմանում, ընկերային ապահովութիւն հայրայթել ժողովուրդին՝ նման սովետական շրջանի դրութեան, առանց սակայն անոր ամբողջատիրական սկզբունքին։

Լեւոնը իր կարգին կը խօսի հայրենի երաժիշտներու ներկայ դժուարութիւններուն մասին եւ կ'առաջարկէ հայրենիք-սփիւռք մշակութային գետնի վրայ կապելու սերտացումին մասին, որպէս զի հայրենի արուեստագէտներ կարենան դուրս գալ հայկական եւ օտար շրջանակներու մէջ երեւալու համար։ Կը յայտնեմ թէ հայկական շրջանակներու մէջ կարիքը կայ հայրենի արուեստագէտներէն ներշնչուելու եւ խանդավառուելու. միակ դժուարութիւնը նւթական միջոցներու սահմանափակումն է։ Զիշտ ատենն է կը խորհիմ ստեղծելու Հայաստանի հետ մշակութային կապի համաշխարհային կոմիտէ մը, որ իւրաքանչիւր երկրի Հ.Հ.ի դեսպանատան հովանաւորութեան տակ սիւղեմաթիք կերպով կազմակերպէ հայրենի արուեստագէտներու հիւրախաղերը, նաեւ սփիւռքահայ արուեստագէտներու այցելութիւնը հայրենիք։ Դեսպանատուներու օժանդակութիւնը անհրաժեշտ կը նկատեմ որպէս զի չկրկնուին Լոս Անջելէսի մէջ պատահած խայտառակութեան նման դէպքեր։ Օտար շրջանակներու պարագային կը դժուարանայ հարցը, որովհետեւ, տեղական արհեստակցական միութիւններու արտօնութենէն կախեալ է, եւ անոնք յաճախ կը մերժեն՝ տեղւոյն

արուեստագետներուն անգործութեան պատրուակով:

Տանտիկինը, որ անընդհատ շարժման մէջ է, մեզի թէյ կը հրամցնէ կը նստի եւ շունչ մը կը փաշէ: Ինքն է Անհատը՝ իր հարսը, լալն հետաքրքրութիւններ ունին եւ հարցումներ կը հարցնեն Լոնտոնահայ համայնքին մշակութային կեանքին մասին, բրիտանական վարչաձեւին. Արքայական կեանքին, իշխանուհի Տայանայի եղբրական կեանքին. կրնօ ժապաւնի աստղերու մասին, որոնց կ'աշխատիմ գոհացուցիչ պատասխաններ տալ: Ջալադեանները գաղափարապաշտ, հաւատաւոր, գործունեայ հայեր են եւ իւրաքանչիւրը իր մարզին մէջ անդամուկ լծուած է հայրենակերտումի գործին: Ուշ ատեն կը բաժնուիմ իրենցմէ անմոռանալի գիշերուայ մը գեղեցիկ յիշատակը սրտիս մէջ: Արտաշէսը եւ Լեւոնը ինքնաշարժով գիս Արմենեա հիւրանոց կը հասցնեն: Դուռը հազիւ բացած չորս կինը գիս յանկարծ կը շրջապատեն եւ դրամ կը մուրան: Երկու թիկնապահներս խստիւ կը յանդիմանեն եւ կը սպառնան զանոնք ռստիկաններու յանձնել: «Ասոնք մուրացկաններ են, որոնք հաւանաբար մի մարդու համար գործում են», կ'ըսէ Արտաշէս: Երբեք պէտք չէ փաշալիքել, որովհետեւ հիւրանոց եկող տարներէն ալ կը մուրան եւ մեր ազգին անունը կ'անպատուեն:

Ուրբաթ 29 Հոկտ. 99

Առաւօտեան, ընդառաջելով Աշոտ Ղազարեանի հրաւերին, կ'այցեցիմ ՀՔԸՄ-ի Երեսանի գրասենեակը՝ շարունակելու համար Բարեգործականի մասին մեր խօսակցութիւնը: Երբ կը հասնիմ Հայաստանի Ամերիկեան համալսարանի շէնքը, Պր. Ղազարեան ինքնաշարժով դուրս կ'երթայ: Առաջնորդս՝ Պր. Վարդան Մուկիկեան, համակրելի եւ բարեկիրք

երիտասարդ մը, գիս կը տանի ՀՔԸՄ-ի կեդրոնատեղին որ կը գտնուի շէնքին ետեւի անկիւնը. լաւ կահաւորուած աշխատասենեակ մը՝ օժտուած արդիական յարմարութիւններով: Ինքն է ֆարտուղարուհի մը ամէն օրուայ լրաքաղը կը պատրաստեն հայերէն եւ անգլերէն լեզուով եւ Նիւ-Եորքի Հ.Բ.Ը.Մ-ի կեդրոնը կը ղրկեն: Շահեկան տեղեկութիւններ կու տայ Հայաստանի մէջ բարեգործականի գործունէութեան, ինչպէս նաեւ համալսարանին մասին ուր համալսարանականներ Մագիստրոսական Աստիճանի (M.A.&M.S) երկամեայ դասընթացներու կը հետեւին չորս միւթերու մէջ, որոնք քմական զարգացումով մը պիտի բազմանան, սկսելով առեւտրական վարչագիտութիւն, ֆաղաֆագիտութիւն, ճարտարագիտութիւն միւթերէն եւ ընդգրկելով առողջապահութիւն, իրաւաբանութիւն եւ քնապահպանութիւն միւլդերը: Կ'այցեցիմ համալսարանի գրադարանը որ մասնագիտական եւ գեղարուեստական գիրքերու օգտագործումի արդիական մեթոտով օժտուած է: Հանելի է տեսնել երկանո հայ ուսանողներու ներկայութիւնը սերտողութեան պահուն:

Հ.Բ.Ը.Մ.ը Երեսանի մէջ բացած է կարօտեայ հայրենակիցներու եւ որբերու համար ապուրի-խոհանոցներ (soup-kitchen) որոնց կ'նկատու, Լոնտոնի մէջ ալ տարի մը առաջ հանգանակութիւն եղաւ: Անհամբեր եմ տեսնելու թէ ինչպէս կը գործեն այս ապուրի խոհանոցները: Երեսակայութեանս մէջ արդէն իսկ Տիֆընգեան պատկեր մը յօրինուած է, իրենց պնակներով պոչ բռնած աղջատներու: Առաջնորդս գիս կը տանի Երեսանի Արարկիի շրջանի ճակիկն պիտներական պալատը, որ Հ.Բ.Ը.Մ-ի կողմէ գնուած, նորոգուած եւ կահաւորուած է: Շէնքին մէջ սրահ մը,

շնորհիվ ճաշարանի վերածուած է, ուր ամէն օր, բացի կիրակիէ, շրջանին կարօտեալ ազգակիցները եւ որբեր երկուսեռ՝ մաքուր սեղաններու շուրջ նստած կը ճաշեն: Որքան սխալ եւ անարդար է ապուրի-խոհանոց որակումը: Սրահին ապակեայ դուռէն, խորունկ գոհունակութեամբ եւ յուզումով կը դիտեմ այս տեսարանը եւ վերակացուն չի հասկնար թէ ինչո՞ւ չեմ ուզեր սրահէն ներս մտնել. իմ ճանջցած եւ սիրած Բարեգործականս՝ դարձեալ իր նախախնամական դերին մէջ է:

Կ'այցելեմ նաեւ այս Հայորդաց Տան մնացեալ մասերը - լողարան, մարզարան եւ դասարաններ ուր շրջանի երկսեռ դպրոցականները, հինգէն մինչեւ տասնութը տարեկան, դպրոցական սովորական ժամերէն վերջ, երկուէն մինչեւ եօթը, մանկավարժներու հսկողութեան տակ, կը զբաղին մարմնակրթականով, ձեռնակն աշխատանքներով - լուսանկարչութիւն, ատաղձագործութիւն, կար եւ ձեւագիտութիւն, նատրակի, երաժշտութեան, դաշնակի, լեզուի եւ պատմութեան դասերով: Ներկայ կ'ըլլամ դաշնամուրի դասի մը ուր ուսուցչուհի մը կը մարզէ խոստմնալից աղջնակ մը: Այս աշխատանքներու վարիչներուն կը բացատրեմ, որ քանի մը ամիս առաջ՝ Անգլիոյ կրթական նախարարութիւնը 50 միլիոն սթերլինգի (\$80 միլիոն Ա.Տ.) յատկացում մը ըրաւ՝ Անգլիոյ դպրոցականները փրկելու համար փողոցի ապականիչ կեանքէն:

Բարեգործականը կ'օգնէ նաեւ ձմեռուան եղանակին ֆաղափապետարանի դպրոցներու ջեռուցումին: Այս շէնքին մօտ է նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի վերանորոգման գեղահատական կեդրոնը. (Plastic Surgery) իր 70 հոգինոց անձնակազմով ուր ճրիարար կը դարմանուին Հայաստանի

Աղէտի շրջաններէն եւ տարբեր կողմերէն՝ հաշմաւածներ եւ վնասուածներ: Կը վնարեն անոնք, որոնք բարեհաճութեան համար գործողութեան կ'ենթարկուին:

Կը հարցնեմ թէ Հայաստան Համահայկական Հիմնադրամը մարդասիրական ինչ օգնութիւն կ'ընծայէ: Տարտամ պատասխաններ կուտան եւ կ'ըսեն թէ Հ.Հ.Հ.ն իր միջոցները կեդրոնացուցած է նախապահաշինութեան վրայ: Խորունկ ցաւ եւ խարուած կը զգամ: Հ.Հ.Հ.ի Բրիտանիոյ մասնաճիւղին Ատենապետի հանգամանքիս բերումով, Լոնտոնի հիւսիսային թաղամասերուն մէջ, երկու բարեկամներով տունէ տուն պտըտած եմ եւ հաւաստիացուցած որ հաւաքուած դրամը պիտի յատկացուի աղէտեալներուն, որբերուն եւ զրկուածներուն: Մարդկային կեանքի ապահովումը, կարօտեալներուն օգնութեան հասնիլը, տառապեալներուն ցաւին ամոռումը, անյետաճեղիքէն աւելի գերադաս կը նկատեմ քան ճանապարհներուն շինութիւնը: Կը յիշեմ, քանի մը տարի առաջ աղէտի շրջանը այցելած մտերիմի մը փորձառութիւնը՝ Լորտ Պայրըն դպրոցէն ներս: Պզտիկ աղջնակ մը հիւրերուն ի պատիւ Ave Maria կ'երգէ այնպիսի յուզիչ ձայնով որ արցունք կը խլէ շատերու աչքերէն: Երբ բարեկամս կը մօտենայ երգիչին եւ տարիքը կը հարցնէ, կ'ըսէ թէ տանեկինգ տարեկան է: Տասնեկինգ տարու պարմանուի մը՝ տասը տարեկան աղջկայ մարմնով: Կ'արժէ մտածել թէ որքան առողջ երիտասարդ սերունդ պիտի ունենայ մեր ազգը, եթէ հոգ չտանինք այօրուան մեր պարմանքներուն: Անձնապէս, կը խորհիմ, որ Հայաստան Համահայկական Հիմնադրամի անմիջական պարտականութիւնը պէտք է ըլլայ՝ նախ եւ առաջ փրկել Աղէտի շրջանի մեր հարազատները, որոնք երկրաշարժէն

տասն եւ մէկ տարիներ ետք տակաւին մետաղէ ու տախտակէ տնակերու մէջ կը չարչարուին:

Ազնիւ առաջնորդիս շնորհիւ կ'այցելեմ նաեւ Թէֆէեան Մշակութային Միութեան երեւանի կեդրոնատեղին, որուն գոյառուի մին խանդավառ ջատագովը եղած եմ տարիներ առաջ Լոնտոնի Թէֆէեան թրասքի խնամակալութեան մէջ: Կեդրոնի վարիչը՝ Ս. Սարգիսեան, համակրելի երիտասարդ մը, մեզի ցոյց կու տայ շէնքին սրահը, գրադարանը եւ առեւտրական օտար ընկերութեան մը վարձուած բաժինները: Արդիական յարմարութիւններով օժտուած գեղեցիկ շէնք մը, որ դժբախտաբար պարապ է եւ հոգի չունի: Լոնտոնի մէջ կ'երազէիմք որ կեդրոնը երեւանի մտաւորականութեան ժամադրաւայրը պիտի դառնար: Վարիչը կը նկարագրէ թէ ի՞նչ հոգածութեամբ եւ խնամքով, բացառիկ նկարահանողէս մը կազմակերպուած է սրահին մէջ եւ սակայն, քացի քանի մը մասնագէտներէ, չէ յաջողած ներգրաւել գեղարուեստասէր հասարակութիւնը: Կը նկատեմ որ պատին վրայ պատուոյ արձանագրութեան մէջ յիշուած են անունները նուիրատուներուն քայց մոռցուած են անունները Լոնտոնի Թէֆէեան թրասքի խնամակալներուն, որոնք մարմին տուին գաղափարին եւ նախանձախնդրութեամբ հետապնդեցին անոր իրագործումը:

Ժամը 4-ին կ'այցելեմ քաղաքի միջին Ակադեմիկոս փողոց. Կոստանդին Գարակէօզեանին իր տունը: Սանդիաշաբաթի քաղաքի մէջ փայտեղբայրները 1991-94 ժամերու սաստիկ ցուրտին դէմ պաշտպանուելու համար: Կը ծանօթանամ Տիկ. Կոստանդեանին եւ իր ամերկեական դստեր: Փրոֆէսորը, ամբողջովին կլանուած է իր մասնագիտութեամբ՝ մասնիկային

կենսաբանութիւն (Molecular Biology), եւ կը բացատրէ՝ հայկական հիւանդութեան ախտաճանաչումի իր կատարած հետազոտական աշխատանքը: Կը ծրագրէ Միջազգային Ընկերակցութիւն մը (consortium) ստեղծել, որուն կեդրոնը ըլլայ երեւանի Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի իր գլխավորած մասնիկային կենսաբանութեան ինստիտուտը: Մրտի մմումով կը նկարագրէ Ակադեմիայի ծանր դժուարութիւնները ուր նախնական պայմաններու տակ՝ գիտնականներ, կը շարունակեն աշխատիլ եւ շատեր ալ ճարահատ կ'արտագաղթեն: Կը ցուակցիմք իրեն եւ քիչ մը յուսադրելու համար գինք, կը յայտնեմ որ Բրիտանահայ Խորհուրդի խոստացած համակարգչները պատրաստ են եւ շուտով պիտի առաւելին: Փրոֆէսորը, հանելի խօսակից մըն է եւ հոգածու, կենցաղագէտ հիւրընկալ մը: Ամենէն աւելի զիս կը տպաւորէ իր համեստութիւնը եւ շեշտուած հայասիրութիւնը: Ինչ յաջողութիւն որ ձեռք ձգէ կ'ուզէ որ հայութեան վերագրուի եւ պատիւը իր ընկերներուն ու հայ ազգին երթայ: Տիկին Գարակէօզեանին անհամբաւութեան պատճառով կը կրճատեմ այցելութիւնս: Կը խոստանամ Լոնտոն վերադարձէս առաջ կրկին հանդիպիլ:

Հիւրանոցի սենեակիս մէջ օրուայ անցուղարձկներուն կը հետեւիմ հայկական հեռուեսիլէն որ իր Ղօղանջ Թիշատակի յայտագրով կ'անդրադառնայ ուրքը նահատակներու կեանքին եւ գործին, դասական եւ կրօնական երաժշտութեան ընկերակցութեամբ: Արամ կաթողիկոսը ժամանած է մասնակցելու թաղումի արարողութեան: Իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ ՀՀ-ի նախագահին, պետական կազմին եւ ժողովուրդին: Սուգի օրեր են եւ փակ են թաղութները եւ համերգարահները: Խօսնակը կը

յայտարարել որ ռաբը նահատակներու մարմինները օփերայի շէնքը պիտի փոխադրուին Շարաթ օր, քաղաքական յարգանքի համար եւ յաջորդ օրն ալ՝ թաղման արարողութիւնը պիտի կատարուի: Հինգ յանցագործները յանձնուած են իշխանութեան եւ ազատ արձակած են պատանդ բռնուած երեսփոխանները: Օտար պետութիւններու բարձրաստիճան ներկայացուցիչները ներկայ պիտի գտնուին յուղարկաւորութեան:

Շարաթ 30 Հոկտ. 99

Երեւանեան առաջին անձրեւոտ առաւօտը: Տխուր օդ՝ տխուր առիթով: Քայլերս ինքնաբերաբար կ'ուղղուին դէպի օփերայի շէնքը եւ կը միանամ սգաւոր բազմութեան: Ոստիկանութիւնը նրբօրէն կարգ ու կանոն հաստատած է: Նախարար Էշնմարդ Պետրոսեանի բաց դագաղը կը բերանի հանդիսատի կերպով սգաւորներու շփախումքի մը ընկերակցութեամբ: Ատեն մը վերջ, ատոր կը յաջորդէ Վարչապետ Վազգէն Սարգսեանի բաց դագաղը սգաւորներու զինուորական շփախումքով մը: Թանձր տխրութիւն մը կ'իջնէ բոլորիս վրայ: Կիները լուռ կ'արտասուեն: Օփերայի շէնքէն եկեղեցական սրտայոյզ երաժշտութիւն մը դուրս կը հոսի: Կէսօրին երբ հիւրանոց կը վերադառնամ, կը տեսնեմ Արովեանի վրայ՝ հոսք սգաւորներու, առանձին, գոյգ գոյգ կամ ընտանիքով, որոնք օփերայի շէնքը կ'երթան, իրենց յարգանքը յայտնելու:

Հիւրանոցի մուտքին, սպիտակահեր հայ թաւ-շուքակահար մը, աթոռակի մը վրայ նստած՝ հայկական քաղցրաթախած եղանակ մը կը նուագէ: Օտար գոյգ մը, յափշտակութեամբ կ'ունկնդրեն մինչեւ վերջը ու յետոյ, քաղաքավարօրէն գումար մը կը դնեն պնակի մը մէջ: Կը մօտենամ երաժիշտին,

շնորհակալութիւն կը յայտնեմ իր առթած վայելքին համար: Կը հետաքրքրուի Անգլիոյ հայութեան կեանքով: Կը կարծէ որ 100,000 հայեր կան: Կ'ըսեմ. «տասը հազարի մօտ ենք, թէեւ, երբեմն կը կարծեմ թէ հարիւր հոգի ենք միայն»: Պետական օփերայի նուագախումբին մաս կազմած է եւ անհանգստութեան հետեւանքով հրաժարած: Հիմա, օրական քանի մը ժամ նուագելով, պատուաւոր ձեւով իր օրապահիկը կը հանէ: Երեկոյեան դէմ դարձեալ Արովեանէն վեր կը բարձրանամ եւ կը միանամ Ս. Զավադեանին Օփերայի շէնքին առջեւ, հազարաւոր հայերու հետ մեր վերջին յարգանքը մատուցանելու մեր նորոգ հանգուցեալ նահատակներուն: Փողոցը պարպուած է, խանութները փակուած: Քաղաքամայր Երեւանը առգի մէջ է:

Սենեակս կը վերադառնամ ընկնուած սրտով: Կը մտածեմ, ինչո՞ւ այս անիմաստ, վտանգաւոր արիւնահեղութիւնը: Դժբա՛ղդ ազգ ենք: Հայկական հեռատեսիլի Ղօղանջ Յիշատակի յայտագիրը դարձեալ կ'անդրադառնայ սհաւոր պատահարին եւ մի առ մի կը ներկայացնէ՝ անձը եւ հայրենանուէր գործունէութիւնը Ազգային ժողովի նախագահ՝ Կարէն Դեմիրճեանին, վարչապետ՝ Վազգէն Սարգսեանին, Ազգային ժողովի փոխ. նախագահ Եւրի Բախշեանին եւ Ռուբէն Միրոյանին, նախարար՝ Էշնմարդ Պետրոսեանին եւ երեսփոխաններ՝ ակադեմիկոս Միհայէլ Գոթանեանին, Հենրիկ Արոհեանեանին եւ Արմենակ Արմենակեանին: Յայտագիրը, կէս գիշերը անց կ'աւարտի տուտուկի վշտալի, սրտայոյզ նուագով:

Կիր. 31 Հոկտ. 99

Առաւօտուն, Ս. Զավադեանի առաջնորդութեամբ կ'այցելեմ Հանրապետութեան հրապարակի մօտ գտնուող

Վերնիսաժի քաղաքային շուկան որ Շարաբեի հիփոկի օրերը միայն կը բանի եւ որ այլազան ձեռարդուեալներու գեղօրներու, նկարներու, փայտի փորագրումներու, ոսկեղէն զարդերու նոյն ցուցահանդէս մըն է յատկապէս զբօսաշրջիկներու համար:

Կ'այցեցեմք նաեւ նոր կառուցուող Ս. Գրիգոր Լուսաւորիչի կաթողիկէն, որուն պէթոնէ հսկայական կմախքը արդէն իսկ կանգնած է: Կը ծանօթանամ կառուցման գլխաւոր պատասխանատուն Վազգէն Պողոսեանին, ինչպէս նաեւ՝ քարապատումի պատասխանատու ճարտարապետ-հանդակագործ՝ Աշոտ Կարապետեանին եւ իրենց շինարար ընկերներուն, որոնք ինծի կը յիշեցնեն մեր պատմութեան անուանի հսկայ վարպետները: Կ'ուսումնասիրեմք Տաճարի մանրակերտը, որ հաւատարիմ մնացած է մեր սրբազան ճարտարապետութեան ոճին եւ լուրջ նկատառութեան առնուած են՝ աճուողիքի հարցը եւ խորանին գեղազարդումը՝ առաջնալներու քանդակներով: Հպարտութեամբ կը յայտարարեն որ տաճարը աշխարհի մեծագոյն հայկական եկեղեցին պիտի ըլլայ եւ աւելի քան 1700 հաւատացեալներ պիտի կարենան միասին աղօթել: Կը սպասեն երկրորդ մասնավճարին՝ 2001-ին հայաստանեայց եկեղեցւոյ 1700 ամեակին հասցնելու համար կաթողիկէին շինութեան ամբողջական աւարտումը:

Կ'այցեցեմք նաեւ Տաճարին մօտ հրապարակ մը, ուր կը տեսնենք, պատուանդանի մը մէկ կէտին վրայ միայն յենած տպաւորիչ արձանը՝ հռչակապ ձիւ մը վրայ նստած եւ թուրը պարզած Քաջն Վարդանին: Միակ արձանը ամբողջ երեւանի մէջ որուն վրայ տիրոջ անունը չէ փորագրուած: Ս. Գրիգոր Լուսաւորիչի հով պաշտպան Քաջ Վարդանի արձանը՝ շատ

յատկանշական եւ պատշաճ կը գտնեմ:

Հիւրանոցի սենեակիս առանձնութեան մէջ, տխուր սրտով կը հետեւիմ հայկական հեռատեսիլէն ուրբ զոհերու թաղման արարողութեան: Եկեղեցական հոգեպարար երգեցողութիւնը, նորընտիր վեհափառին եւ նախագահ Ռ. Քոչարեանի սրտաբուխ խօսքերը, Անահիտ Բախշեանի վշտալից ելոյթը, օտար պետական ներկայացուցիչներու ցաւակցական արտայայտութիւնները, համաճառագային տխրամած երաժշտութիւնը զիս տարօրէն կը յուզեն եւ մխիթարելու տեղ աւելի կը խորանայ զգացած ցաւս:

Երկուշաբթի 1 Նոյ. 99

Առիթը կ'օգտագործեմ այցելելու Ամիրեան փողոցի վրայ եւ հիւրանոցին մօտ Եղիշէ Զարեանի անուան թիւ 67 երկսեռ միջնակարգը անցկերէն լեզուի թեքումով: Տնօրէնուհին՝ Արտա Ղազարեան, որ 15 տարիէ ի վեր կը պաշտօնավարէ. զիս կ'ընդունի հարազատի զգացումով: Դպրոցի մասին տեղեկութիւններ կու տայ եւ ի միջի այլոց՝ հպարտանով կը յիշէ որ Լոնտոնի ներկայ ՀՀ-ի դեսպան Դոկտ. Ա. Սարգիսեանը դպրոցի նախկին աշակերտներէն է: Ինք ալ British Councilի հրաւերով Անգլիա լեզուարանական դասընթացի մը հետեւած է եւ անցկերէն կը խօսի: Կը խօսինք մեր հայրենիքի կրթական ներկայ վիճակին մասին: Կը հաստատէ թէ ներկայիս կրթութիւնը վճարովի է. կը հարցնեմ թէ արդեօ՞ք անգործ եւ աղքատ ընտանիքներու մասնաւոր շնորհ եւ տաղանդ ունեցողները: Կը հաւաստիացնէ որ ձեւ մը կը գտնեն որ չտուածն: Մտահոգութիւնս կը յայտնեմ մեր հայրենիքին գիտական, գեղարուեստական կրթութեան մակարդակին անխուսափելի անկումին՝ եթէ պետութեան ամբողջական

հոգածութիւնը չվայելեմ: Տնօրէնուհին լաւատես է եւ յոյսը ունի որ պայմանները պիտի փոխուին: Սփիւռփառաշէնքս նուիրական պարտքին տակն ենք սխաղմաթիւք ձեռով եւ յարատեւօրէն օժանդակելու մեր հայրենիքի կրթական գործին, ինչպէս նաեւ, բժշկական դարմանումի միջոցներուն ապահովումին եւ գիտութեան եւ գեղարուեստի պահպանումին եւ զարգացումին, որոնք տարաբախտաբար անտէր մնացած են: Տնօրէնուհին հրաւերով կ'այցեւեմ երկու դասարան եւ կը խօսիմ աշակերտներուն: Առաջին դասարանին մէջ աշակերտները գրած տախտակի վրայ գրուած գրահաշուական հաւասարութիւններ կը լուծեն: Հայ ուսանողներէս ՅՏ տարի բաժնուելէս ետք, առիթը կ'ունենամ հայրենիքս մայրաքաղաքին մէջ հրաշխայ երկսեռ պարմաններու շրջանակին մէջ գտնուելու երջանկութիւնը զգալու, անոնց իմ սէրս յայտնելու եւ ապագային համար սրտատուի մաղթանքներ ընելու: Երկրորդ դասարանին մէջ, հայ գրականութեան դասին ներկայ կ'ըլլամ եւ կը պատմեմ թէ ինչպէ՛ս, շա՛տ տարիներ առաջ, երուսաղէմի Թարգմանչաց Վարժարանին մէջ, առաջին անգամ լսեցի եղիշէ Զարեմց անուրէն եւ սորվեցայ իր «Ես իմ անուշ Հայաստանի բառն եմ սիրում» բերթուածը ու այդ օրէն սկսեալ հայրենիքս եւ հայ բանաստեղծութիւնը կը սիրեմ: Կարօտս առած՝ յուզումով կը բաժնուիմ հայ դպրոցի ջերմ մթնոլորտէն:

Կը վերադառնամ Արմենեա հիւրանոցը: Սպասման սրահին մէջ կը հանդիպիմ գոյգի մը: Ամուսինը ճարտարապետ է, իսկ իր տիկինը բժշկուհի: Երկուքն ալ անգործ են: Իրենց մէջտեղը բազմոցին վրայ նստած է թուի տիկին մը, Սանթօջ Գումարի Արօրա անունով հնդկուհի մը, որ հիւանդիօրէն արեւելահայերէն կը խօսի: Իր զաւակներով

երեւան հաստատուած է, որպէս զի անոնք, իբրեւ հայ մեծնաւ: Իր ամուսինը, եղուարդ Սասուն անունով գեղանկարիչ մըն է, հարազատ եղբայրը՝ ճարտարապետին, որ Պանկօֆի մէջ արուեստանոց ունի եւ հոն կ'աշխատի ու Հայաստան՝ իր ազգականներուն եւ ընտանիքին նիւթապէս կ'օգնէ: Սանթօջ Արօրան հնդկերէն կը դասաւանդէ երեւանի համալսարանի Պարսկերէնի բաժանմունքին մէջ: Կը շշմիմ պարզապէս: Մեր մօտ, երբ հայ երիտասարդուհի մը անգլիացիի հետ կ'ամուսնանայ, ի յարգանս իր ամուսնին, զաւակը իբր անգլիացի կը մեծցնէ. իսկ, հայ երիտասարդ մը երբ անգլիացի օրիորդի մը հետ կ'ամուսնանայ, ի յարգանս իր կնոջ՝ զաւակը իբր Անգլիացի կը մեծցնէ: Շատ յարգելի են քացառութիւնները: Այս հնդկուհին, հայացեր է, հայերէն սորվեր է եւ իր երկրէն հեռացեր, Հայաստան եկեր է իր զաւակներուն հայ ինքնութիւնը ապահովելու համար իր ամուսնոյն քացակայութեան:

Ակադեմիկոս Փրօֆ. Կոստանդին Գարակէօզեան կու գայ ողջերթի. կ'ողջագոլորուինք. կրկին անգամ ջերմ բառերով իր գնահատմամբ եւ երախտագիտութիւնը կը յայտնէ Բրիտանահայ Խորհուրդին եւ ինծի՝ իր գլխաւորած Molecular Biology Institute-ին ընծայուած օժանդակութեան համար: Իր նուիրումին եւ հմտութեան մեծութեան առջեւ այնքան խոնարհ կը զգամ:

Երեւանի մէջ վերջին իրիկունը Զավադեան բարեկամներուս կ'երթամ, իրենցմէ հրաժեշտ առնելու: Ուշ ատեն կը բաժնուիմ իրենցմէ՝ մեծ դժուարութեամբ: Տասը օր առաջ ինծի անծանօթ ընտանիք հիմա հարազատի պէս կը սիրեմ եւ իրենց մասին միշտ

ֆաղցրորեն պիտի մտածեմ: Ազնիւ, տախուկ, անկեղծ հոգիներ:

Հիւրանոց վերադարձիս, վերջին կարգադրութիւններս կ'ընեմ եւ թեթեւ խոռով մը կ'անցնի սրտէս երբ վաղուայ թոխչիս մասին կը մտածեմ: Մեր առաջնորդ Սրբազանը կարգադրեր է յետաճգել իր վերադարձը մինչեւ Հինգշաբթի օր՝ ներկայ գտնուելու ընտրեալ կաթողիկոսին օծման եւ գահակալութեան արարողութեան: Կէս գիշերին, հիւրանոցի երիտասարդ հաշուակալը դուռս կը թակէ եւ ֆաղափարի կը հարցնէ. «հայրիկ, փակե՛լ է՞ք ձեր հաշիւը»: Դրական պատասխանիս վրայ ներողութիւն կը խնդրէ ու քարի գիշեր կը մաղթէ: Սեփականաշնորհումի քարի՞ջը. քայց ինչո՞ւ կարիքը այս մետասաներորդ ժամու ստուգումին:

Երեքշաբթի 9 Նոյ. 99.

Առտուան ժամը վեցին կազմ ու պատրաստ եմ մեկնելու: Վերջին սիրագեղ քարեւ մը կուտամ հանրապետութեան հրապարակին եւ խոնաւ աչքերով կը դիտեմ շրջապատս, կիսալոյսին ճամբայ կ'ելլեմ դէպի Զուարթնոց օդակայանը: Վարորդս սասունցի մըն է չորս գաւակի տէր, որ Ապարանէն Երեւան փոխադրուած է ապրուստը ճարելու համար: Կը պատմէ իր համաֆաղափացիներուն փորձառութիւններուն մասին մինչեւ Ապարան տեղափոխուիլը: Կը յիշեցնեմ իրեն խաչիկ Դաշտենցի Խոզեղան: Երբ կը մօտենանք օդակայանին, երկու երթեւեկի ոստիկաններ ճշան կ'ընեն կանգ առնելու: Վարորդիս կը թելադրեմ յայտնել՝ որ Ազգային-եկեղեցական ժողովի պատգամաւոր մը կը հասցնէ օդակայան: Ոստիկաններուն հետ վայրկեան մը տեսնուելէ ետք, կու գայ ինձնաշարժը տաք մեքո ւալիչ առաջ տանելէ ետք դարձեալ կը վերադառնայ

ոստիկաններուն մօտ: Կրկին կու գայ, ինձնաշարժին ֆանի մը կոճակները կը փորձէ եւ կը վերադառնայ ոստիկաններուն մօտ. եւ վերջապէս կը մտնէ ինձնաշարժին մէջ եւ ճամբայ կ'ելլենք: Երբ կը հարցնեմ թէ ի՞նչ էր խնդիրը, սրտնեղած կ'ըսէ. «Միշտ էսպէս են. պատճառ կը փնտռեն որ մեզցնից դրամ առնեն»: Սիրտս կը ցաւի որ օրէնքի պաշտպանները, իրենք օրէնքը կ'անարգեն:

Օդակայանին մէջ ամէն ինչ կարգին է: Անդորրագիրս (Exit Duty) վճարելէ ետք, ֆանի մը վայրկեանի մէջ անցագիրս, պալուսակս եւ թոխչի տումս ամենայն ֆաղափարութեամբ բնակուելէ ետք, կ'անցնիմ սպասման սրահը: Կը Ծանօթանալ Մտն, Salt Lake City բնակիչ ամերիկուիի մը որ Հայաստան հաստատուած իր բոլորը այցի եկած է եւ Ամերիկա կը վերադառնայ: Մեր րազմագան հարցերէն լուրջ զլխացաւ մըն ալ՝ աղանդներու այս ներխուժումը: Ի՞նչ պիտի ըլլայ անդրադարձ մորմուններու կենցաղին յատուկ րազմականութեան տարածումին մեր հայրենիքին մէջ, կը հարցնեմ ես ինձի եւ մտածումս կը պղտորի:

Սրահին մէջ կը հանդիպիմ Հ.Յ.Դ.ի դեկավարներէն՝ Կարօ Արմէնին, որուն՝ 9 տարի առաջ Լոնտոնի մէջ հմտալից դասախօսութեան ներկայ եղալ: Սրտցաւօրէն կը խօսիմք մեր հայրենիքի տնտեսական դժոյղակ կացութեան մասին եւ սոսկայի ռերագործութեան՝ միջազգային, ֆաղափական եւ ազգային անդրադարձներուն: Կուսակցութիւններու եւ կուսակցականներու գաղափարական համոզումներուն միջեւ տարակարծութիւնները որքա՞ն ենեղած են եւ որքա՞ն հասարակաց գետին մը ստեղծուած է հայրենիքին հանդէպ մեր պարտականութիւններու յանձնառութեան մէջ:

Ակամայ դուրս կը նայիմ լայն պատուհանէն ու ի՞նչ տեսնեմ, անամպ, չինջ մթնոլորտին մէջ վեհապանծ գեղեցկութիւնը մեծ ու փոքր Մասիսներուն աչքս կը շլացնէ: Էջմիածնէն տեսած ձիւնապատ, ալեւոր Մասիսներուն տեղ՝ երիտասարդ, նուրբ, մանիշակագոյն Մասիսներ, որոնց վերջին անգամ մնաքարով կ'ըսեմ, քիչ մը եւս կը յամենամ այս հրաշագեղ տեսարանին առջեւ եւ ապա, կը կորստուիմ զիս օդանաւ տանող փապուղիին մէջ: Օդանաւին մէջ, մեր Սրբազանին տեղը առած է մայրիկ մը որ Լոս Անճելոս կը վերադառնայ, երեսն մնացած աղջիկէն եւ թոռնիկներէն իր կարօտը առնելէ ետք: Ամերիկայի մէջ իրեն կը սպասեն Հայաստանէն գաղթած երեք զաւակները եւ տասը թոռնիկները: Երբ կը խօսի իր ընտանիքին մասին, աչքերը կարօտի արցունքներով կը լեցուին: Մինչեւ ե՞րբ այս ցրումը եւ անշատումը մեր ազգին. մինչեւ ե՞րբ տարուքերումը հայ մայրիկին եւ մայրիկներուն երկու կարօտներու միջեւ:

Հանգիստ ճամրորդութենէ մը ետք Լոնտոն կը հասնիմ: Մայրիկը կը յանձնեմ Լոս Անճելոս թռչող օդանաւի պատասխանատուներու հոգածութեան: Օդանաւի ելքին Ազգային-եկեղեցական ժողովի Ուրուկուէյի պատգամաւոր՝ Արսէն Աւշարեան կը յայտնէ որ հարկադրուած է գիշեր մը Լոնտոն անցնել: Կ'ընկերանամ իրեն մինչեւ պանդոկը: Կը զարմանայ օդակայանէն առանց ֆնտրութեան, խուզարկումի եւ

կաշկանդումի այդքան դիւրութեամբ դուրս գալուն համար:

Հիմա, նստած գրասեղանիս առջեւ, երբ կը գրեմ այս տողերը, աչքիս առջեւէն կը տողանցեն հայրենական տասը օրերուս ուրախ եւ տխուր դէպքեր եւ փորձառութիւններ, հին եւ նոր քարեկամներու դէմքեր, երեսնէն ու էջմիածնէն հոգեգրաւ տեսարաններ եւ սիրտս կը լեցուի հայրենի հարազատներուս հանդէպ ջերմ զգացումներով ու քարի ցանկութիւններով:

Հայրենիքիս ի սրտէ խաղաղութիւն, քաղաքական կայունութիւն, տնտեսական բարելաւում եւ բարգաւաճում կը մաղթեմ, որպէս զի հայրենի հարազատները մարդավայել պայմաններու մէջ՝ բարօր եւ երջանիկ օրեր ապրին:

Հայաստանեայց եկեղեցիին ի սրտէ կը մաղթեմ որ հայուն Աստուածը, մեր նորընտիր հայրապետին ֆայերը միշտ անշեղ առաջնորդէ առաջինութեան, բարութեան եւ իմաստութեան ճանապարհէն եւ անսասան պահէ մեր հաւատին միջնաբերդ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ականջիս մէջ կը հնչեն Աթաբէկեանի խօսքերը.

«Ազատութիւնը այնպիսի մի բանկագին պարգեւ է որի համար արժէ ամէն զոհողութիւն յանձն առնել»:

ԿԱՐՊԻՍ ԵՍԱՅԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՍՐՈՑ ՅԱԿՈԲԱՆՅ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ԴԱՐԵՐՈՒ ԸՆԹԱՑԳԻՆ

Բ. Մաս

Նոր Շրջան

Ս. Յակոբի Վերակառուցումը

1870ին Սասյի Պատրիարքի օրով փրանչիսկեաններուն կ'արգիլուի պատարագել Ս. Յակոբ եւ Ս. Փրկիչ հայոց եկեղեցիներուն մէջ: Անոնց Պատարագը արգիլուելուն պատճառը Պապին անխալականութեան խնդիրն էր «որ իրենցմէ ի սպառ կ'անջատէ այնպիսի շնորհք մը, անկարելի է մեզ այսուհետեւ անոնց շնորհել» («Լատինաց' Ս. Յակոբայ մէջ չպատարագելը», «Սիօն», 1870, էջ 156-157):

Թէ այս սովորութիւնը (Ս. Յակոբի մէջ Լատինաց պատարագելու արտօնութիւնը) երբ սկսած է, ճիշդ ժամանակը չկրցայ գիտնալ:

1897ին, Ս. Յակոբայ Տաճարին մէջ հետազոտական պեղումներ կը կատարուին եւ շէնքերէն բերել, դուռնին ետեւի գիծը եւ Ս. Գլխադիր մատրան առջեւի մասը մարմարով կը սալարկուին («Հայկական Նրուսադէմ» 1931, էջ 14-15):

1898ին Գերմանիոյ Վիլիելմ Բ. Կայսրը Նրուսադէմ այցելութեան ընթացքին, կ'այցելէ նաեւ Ս. Յակոբեանց տաճարը եւ Պատրիարքարան (19 Հոկտ.): («Ժամանակագրութիւն...», Մ.Ն.Ն., Նրուսադէմի «Գրպանի Օրացոյց» յաւելում, 1940, էջ 282-288):

1918ին (16 Յունիս) Մեծն Բրիտանիոյ ժէնեքալ եւ Նրուսադէմը Թուրքերէն գրաւող Ալէնպին կ'այցելէ Ս. Յակոբ եւ Պատրիարքարան (Նրուսադէմի «Գրպանի Օրացոյց», 1940, էջ 284):

1938ին Պելմիքայի Ալպէր Քազաւորը եւ Քազուհին կ'այցելեն Ս. Յակոբ եւ

Պատրիարքարան (Նրուսադէմի «Գրպանի Օրացոյց», 1940, էջ 288):

1948ին Արար-Հրեայ պատերազմի ընթացքին Ս. Յակոբայ Նկեղեցւոյ մէջ մեծ թիւով հայ գաղթականներ կ'ապաստանին: Այդ աղետալի օրերուն ակամատեաններ կը պատմեն թէ Ս. Յակոբ Պաշտպան կը հանդիսանայ հայոց: Ս. Յակոբ ճերմակ ձիի վրայ՝ եկեղեցւոյ կողմերը եկող ռումբերը կը բռնէր եւ շտ կը նետէր: Նրուսադէմի հայ Միաբանութիւնը եւ ժողովուրդը որ իր վրայ կը կրէ «Սրբոց Յակոբեանց» տիրոջը հաւատացած է եւ կը հաւատայ իր պաշտպան Ս. Յակոբներուն զօրութեան:

Այս պատերազմին եւ Ս. Ներկի ժողովրդին տառապանքները ապրած, օրումն Ս. Աթոռիս գահակալ Տ. Կիրեղ Պատրիարք Իսրայէլեան, ֆիզիքապէս եւ հոգեպէս կ'ազդուի եւ ծանր հիւանդութեան կ'ենթարկուի: Պէյրութ (Լիբանան) կը վախճարուի դարմանուելու համար, սակայն դժբախտաբար իր առողջութիւնը չգտնելու եւ յաջորդ տարին (1949) կը վախճանի Պէյրութի մէջ: Սովորութիւն էր, մինչեւ 1948ը, վախճանեալ Պատրիարքները եւ եկեղեցականները ի Ս. Փրկիչ վանքը թաղելը, սակայն 1948ին պատերազմին պատճառաւ Ս. Փրկչայ վանքը կը դառնայ արգիլեալ գօտի (No Man's Land): Ուրեմն վախճանեալ պատրիարքը կը թաղուի Ս. Յակոբայ գաւիթը: Տապանաճառի արձանագրութիւնն է. -

«Որ էն

«Տ.Տ. Կիրեղ Բ. Պատրիարք Նրուսադէմի,

1895-1949

«Այս տապան դիր է հանգստեան
«Տեառն Կիրոյի Իսրայելեան.
«Սուրբ Սաղիմայ Պատրիարքին
«Անձնանուէր Հօրն իւր հօտին,
«Որ յետ քազում տառապանաց
Զանուն քարի իւր ժառանգեաց,
«Եւ նստեալ զամս չորս յԱթոռ
«Ի վերնականս եմուտ յանդորր,
«Ի 28ն Հոկտ.ի 1949 ամի»:

1958ին կարեւոր նորոգութիւններ
կը կատարուին Սրբոց Յակոբեանց Մայր
Տաճարին մէջ, եւ այդ առթիւ կը կատարուին
նաեւ մասնակի պնդումներ: Մարմարով կը
սալարկուի եկեղեցւոյ յատակը:
Նորոգութիւններ կ'ըլլան նաեւ Ս. Մինաս
մատարան մէջ: Պնդումներու ընթացքին ի
յայտ կու գան հնագիտական արժէք
ներկայացնող շինարարութիւններ, առար-
կաներ, գերեզմաններ եւ արձանագրութիւն-
ներ: Կարգ մը իւղանքի պատկերներ վար
կ'առնուին եւ որոնց խոռոչն ի յայտ կու
գան որմնակարներ, ինչպէս Տէրունական
պատկերը (Ս. Դիսաղորի մօտ) եւ քառասուն
Մանկանց պատկերը (Աւագ դրան մօտ):
Եւ ապա իւղանքի պատկերները եւ
տեղերնին կը դրուին («Սալարկում Ս.
Յակոբայ Տաճարին եւ պատահական
պնդումներ այդ առթիւ», Շնորհիք Եպս.
(Գալուստեան), «Սիռն», 1958, էջ 194,
222, 229):

1962ին հիմնապէս կը նորոգուի Ս.
Յակոբի գաւիթը եւ յախնապակիներով կը
գարդարուին Ս. Գեորգայ եւ Ս. Նիկողայոսի
սեղանները, քնիկ Բեօքահեացի Նշան
Պալեան եւ Մկրտիչ Գարագաշեան
արուեստագէտներու կողմէ («Սիռն»,
Օգոստ.-Սեպտ., 1962, էջ 249-250):
Ս. Յակոբայ գաւթի Ս. Գեորգի եւ Ս.
Նիկողայոսի սեղաններու յիշատակարան-
ները (նոյն յիշատակարանը երկու
սեղաններուն վրայ արձանագրուած է).
«Երեւան յայտնաբերուած գարդաբարինքս

ի Ս. Նրուսաղէմ ձեռամբ արդեամբ
արհեստաւորաց Կուսիմացուց (Բեօքահիա)
Մկրտչի Յ. Գարագաշեան եւ Նշանի Ս.
Պալեան եւ եղան ի դուռն Ս. Յակոբեանց
ի յիշատակ համօրէն ննջեցելոց իւրեանց.
յամի Տեառն (1963) ՌՆԺԲ»:

1963ին վազգէն Ա. Ամենայն Հայոց
Կաթողիկոս կ'այցելէ Նրուսաղէմ եւ Սր-
Յակոբի մէջ կը կատարէ իր ուխտը (18
Հոկտ.): Նոյն ամսուան ընթացքին
Նրուսաղէմ կ'այցելէ նաեւ Մեծի Տանն
Կիլիկիոյ Կաթողիկոս Խորեն Ա. եւ կը
կատարուի երկու վեհափառներու
պատմական եւ սիրալիր ողջագործումը
(«Սիմֆ», 1963, Հոկտ.-Նոյեմ.-Դեկտ., էջ
291-308):

1950-1960ական քուականներուն
Ս. Աբոտոյս վաստակաւոր եւ այժմ
հանգուցեալ մայրապետներէն էլիզ
Մայրապետ Մովսէսեան մեծ նուիրումով եւ
ջանասիրութեամբ նորոգութիւններ
կատարած է, եկեղեցական գգնասիրու,
շուրջառներու, շապիկներու եւ վզնոցներու,
եւ քազմաթիւ այլ ձեռագործ իրերու: Եւ
մասնաւորաբար յատկանշական է Ս.
Յակոբայ Աւագ խորանի երկու խոշոր ձե-
ռագործ վարագոյրներու հիմնական
նորոգութիւնը: Այս աստուածախանոյ գոր-
ծէն զատ, նոյն եկեղեցիէն ներս նաեւ
շարունակած է իր նուիրատուութիւնները,
նորոգել կու տայ Ս. Յակոբ Դիսաղորի
սատափեայ դուռը: Ստորեւ նորոգութեան
յիշատակարանը. «Նորոգեցաւ արդեամբ
էլիզ Մայրապետ Մովսէսեանի. ՌՆԺԲ-1967»:
Նաեւ նորոգել կու տայ ձախակողմեան Ա.
Սիւնի Ս. Աստուածածնի պատկերի
սատափեայ շրջանակը. «Ա. Աստուա-
ծածնայ պատկերի սատափեայ շրջանակ
նորոգեցաւ արդեամբ եւ ծախիւ էլիզ
Մայրապետ Մովսէսեանի. ՌՆԺԲ-1970»:
Ան ընկերովի նորոգել տուած է Ա. Պետրոս
եւ Ս. Պողոս վերնամատարան սատափեայ
դուռը. «Ա. Պետրոս եւ Ս. Պողոս առաքելոց

վերելից Սատափեայ դուռս: Նորոգեցաւ արդեամբ եւ ծախիւք էլից Մայրապետ Մոմենանի եւ Տիկ. Կիւլիանէ Ալեքսանեանի, ՌնծԹ-1970»: Տիկ. Կիւլիանէն նորոգել տուած է Աջակողմեան Ա. Սիւնի Սր. Աստուածածնայ պատկերի սատափեայ շրջանակը.- «Ա. Աստուածածնայ պատկերի սատափեայ շրջանակս նորոգեցաւ արդեամբ եւ ծախիւք Տիկ. Կիւլիանէ Ալեքսանեանի ՌնծԹ-1970»:

1975ին տեղի կ'ունենայ Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսի Նրկրորդ շնորհաբեր հովուապետական այցելութիւնը յԵրուսաղէմ եւ Ս. Յակոբ: Այս առթիւ Կ. Պոլսոյ Պատրիարք՝ Մնորեմ Արքեպս. Գալուստեան եւս կ'այցելէ Երուսաղէմ եւ Ս. Յակոբ («ՍԻՄՆ» 1975, Յունիս-Յուլիս, բացառիկ թիւ):

1982-88 շրջանին Ֆրանսայէն արուեստագետ-նկարիչ Արտաւազգ Շ. Պէրպէրեան Երուսաղէմ գտնուած է հրաւերովը Նդիշէ Պատրիարք Տէրպէրեանի: Նկած էր Երուսաղէմ, ճշմամբուր հայ Պատրիարքներու իր նկարած պատկերները ներկայացնելու եւ տեղադրելու որոշուած տեղը: Այս առթիւ ան կը նորոգէ կարգ մը իւղաներկ պատկերներ, ինչպէս Ս. Յակոբի Աջակողմեան եւ Զախակողմեան առաջին սիւներու Աստուածամօր պատկերները: Վանական իշխանութիւնը տեղեակ էր Ս. Յակոբի մէջ կարգ մը իւղաներկ պատկերներու ներքին գոյութիւն ունեցող որմանկարներու մասին (Ֆրէսկո): Վանական իշխանութիւնը կ'որոշէ Ս. Գլխադիր մատրան քովի «Տէրունական պատկերի» իւրանկարը վերցնել եւ «Փրէսկոն» մշտական բաց ձգել: «Ֆրէսկո»յի ներկերը քաւական մը թափած էին եւ Ա. Շ. Պէրպէրեանի կը յանձնարարուի մասնակի նորոգութիւն մը ընել, առանց նկարին ռճը եւ ձեւը փոխելու եւ կարելի եղածին չափ հարազատ եւ անաղարտ պահելու նկարին հենարանը եւ ինքնատարութիւնը:

Անշուշտ դժուար էր այսպիսի հին գլուխ-գործոց արուեստի մը դաշխը կամ նորոգելը: Պր. Պէրպէրեան կարելիք ըրաւ նկարին հարազատութիւնը եւ հնութիւնը պահելու համար: Դժուար էր ճիշդ ներկեր գտնել նոյն գոյներուն համար: Բնականաբար նորոգութեան ընթացքին, որոշ փոփոխութիւն մը կրեց պատկերը: Պատկերի վարի երկու անկիւններու ծեփէն մասեր վերցուցան եւ անոց տակէն հին ուխտաւորներու կողմէ փորագրուած խաչիկներու մոնշշներ ի յայտ եկան: Այժմ այս որմանկար-«Փրէսկո»ն եւ հին խաչիկներու մոնշշներ քանց են հաւատացեալներու եւ այցելուներու առջեւ:

1986ին Ս. Յակոբայ գաւթի երկաթեայ ճաղերը կը մաքրուին, հին ներկերը հանուելէ ետք նոր ի նորոյ կը ներկուին: Միշին բաժնի երկաթեայ հորիզոնական երկաթին վրայ կայ հետեւեալ յիշատակարանը.- «Լայնատատար գաւթիս երկաթեայ ճաղս եղաւ ներկեցաւ ի պատրիարքութեան Տեառն Նդիշէի Վեհին, աշխատութեամբ Պոլսեցի Ուսթա Խաչիկի, Սրկ. Միհրանի եւ Սասունցի Մովսէսի ծառայի Սր. Յակոբ. ՌՆՆԵ (=1986)»:

1987ին Կ. Պոլսոյ Յունաց Տիեզերական Պատրիարք Դիմետրիոս Ա. կ'այցելէ Ս. Յակոբ եւ Պատրիարքարան («Սիւն»), 1987, Մայիս-Յունիս-Յուլիս, էջ 179 «Պաշտականակմէ»):

1989ին Ս. Յակոբի գաւթի առաստաղի, կամարներու եւ փիլոնատան հին ծեփերը վար կ'առնուին եւ կը նորոգուին նոր ծեփերով:

Ռուս Ուղղափառ Նկեղեցւոյ Պատրիարք Ալեքսէյ Բ., 1991 Մարտին Երուսաղէմ կ'այցելէ: Ռուսաց Պատրիարք կ'այցելէ նաեւ Ս. Յակոբ եւ Պատրիարքարան ուր կ'ընդունուի Ամեն. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի կողմէ: («ՍԻՄՆ», Յուն.-Փետր.-Մարտ, 1991, էջ 80-81):

Աշխարհի տարբեր երկիրներու

ֆաղափապեաներ (45) որոնք, 1992 Ապրիլին Նրուսադեմ կ'այցելեն ժողովի մը առիթով, որոնց մէջէն էր նաեւ Նրեւանի Գաղափապետը՝ Համբարձում Գալստեան, կ'այցելեն նաեւ Ս. Յակոբ եւ Պատրիարքարան, ուր կ'ընդունուին Ամեն. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի կողմէ («ՍԻՐՆ», Ապրիլ-Մայիս-Յունիս, 1992, էջ 176-177):

1995 Մայիս 10-ին Կ. Պոլսոյ Յունաց Տիեզերական Պատրիարք Բարթողիմէոս Ա. կ'այցելէ Ս. Յակոբ եւ Պատրիարքարան եւ կ'ընդունուի Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Հօր կողմէ («ՍԻՐՆ», Ապրիլ-Մայիս-Յունիս, 1995, էջ 195 «Պաշտօնական»):

6 Նոյեմբեր 1995ին նորանկախ Հայաստանի առաջին նախագահ Վսեմ. Լեւոն Տէր Պետրոսեան կ'այցելէ Ս. Յակոբ եւ Պատրիարքարան ուր յատուկ ընդունելութիւն մը կը կատարուի («ՍԻՐՆ», Հոկտ.-Նոյեմ.-Դեկտ., 1995, էջ 517):

1997 Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներու ընթացքին կը նորոգուի Ս. Յակոբայ Մայր Տաճարի տանիքը եւ մեծ գմբէթի վարի մասը: Տանիքի սալարկ ֆարերու միջեւ հին ծեփերը կը հանուին եւ նոր ծեփով կը նորոգուին (Ֆէօհլէ): Նորոգութեան գործածուած շաղախը հին ձեւով պատրաստուած էր, ոչ «սիմէնթ»ով, որ կը վնասէ շէնքի կառուցուածքին: Նոյն ձեւով կը նորոգուի նաեւ Ս. Ստեփանոս մատրան տանիքը:

Ինչպէս տեսանք, դարերէն եկած մեր փառաւոր եւ հոյակապ այս սրբավայրը գուրգուրանքի առարկայ դարձած, նոխացուած, նորոգուած, վերանորոգուած եւ առօրեայ պաշտամունքներով անոր կամարներուն ներքեւ փառաբանուած է Նրկրի եւ Նրկնի Արարիչը: Ան գինն է անհուն գոհողութեանց որ պահուած եւ պաշտպանուած է մեր քաջարի նախնիներէն: Հետագայ դարերու եւ սերունդներու համար որպէս զի ան գոյատեւ է իր Սրբազան առաքելութիւնը կատարել, ան պէտք ունի ֆիզիքական եւ կառուցողական էական ու կանխա-ծրագրուած եւ յառաջ տարուած վերանորոգչական հսկայ աշխատանքներու: Հոգեւոր տուն մը կամ այսպիսի շատ կարեւոր ազգային ժառանգութիւն մը, միեւնոյն ժամանակ ըլլալով միջազգային սրբատեղի մը, պէտք ունի եկեղեցաւեր եւ ազգաւեր հոգեւորական եւ աշխարհիկ ծառայողներու եւ սպասարներու որոնք ըլլան նուիրեալ, բարեսէր եւ հաւատարիմ անձնաւորութիւններ:

Այս գրութեամբ փափաքեալ իմ փոքր նպաստը բերել գալիք մօտ ապագայի Քրիստոսի ծննդեան 2000 եւ Հայաստանի քրիստոնէացեան 1700 զոյգ ամեակներու տօնակատարութեանց առիթ:

ԲԱՐՍԵՂ ՎՐԻ. ԳԱԼԷՄՏԵՐԵԱՆ

ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Գրիգոր Բ. Վկայասեր Հայրապետ (1066-1105) իր կտակին մէջ փափաք յայտնած է, որ Բարսեղ Ա. Անեցի (1105-1113) կաթողիկոսէն ետք, իր բոլոր բոլոր Գրիգորը բազմեցնեն հայրապետական աթոռին վրայ: Բարսեղի վաղաժամ մահուան պատճառով, Գրիգոր Գ. Պահլաւունի (1113-1166) կաթողիկոս կ'օծուի քսան տարեկանին եւ անուղղակիօրէն պատճառ կը դառնայ Աղթամարի կաթողիկոսութեան գոյութեան:

Քննունդի մերձ Կարմիր վանքին մէջ հաւաքուած աշխարհական ու եկեղեցական ժողովականներ, որոնց մէջ անուանի էին Կոմագեմէի Վասիլ Կամսարական եւ Կիլիկիոյ Թորոս Ռուբինեան իշխանները եւ Սեաւ լեռնեցի վարդապետներ, սիրայօժար ընթացք տուին Վկայասերի կտակին, անոր անձին նկատմամբ խոր յարգանք տածելով:

Այդ ժողովին որոշումին դէմ ըմբոստացաւ Աղթամարի եպիսկոպոս Դաւիթ Թոռնիկեան: Գրիգորի թերահաս տարիքը պատրուակելով, ան մերժեց ընդունիլ Գրիգորի կաթողիկոսութիւնը եւ Ձորավանքի եկեղեցիին մէջ կաթողիկոս ձեռնադրուեցաւ իրեն համախոհ հինգ եպիսկոպոսներու կողմէ:

Թոռնիկեան ամրապնդելու համար իր կաթողիկոսութեան հեղինակութիւնը ջանաց կողմնակիցներ գտնել: Անիի աթոռէն մերժուեցաւ քայք Սինեաց եւ Արտագու աթոռներէն համակրութիւն

ստացաւ. թէեւ անոնք կարճ ժամանակ ետք խզեցին իրենց յարաբերութիւնը Աղթամարի հետ:

1114ին, Կարմիր վանքին մէջ գումարուած երկրորդ ժողովին, որուն իրենց մասնակցութիւնը բերած էին 2500 պատգամաւորներ «կը նշուին ու կը հերքեն ապստամբութեան գլուխն ու հետեւողները» եւ կը հաստատեն Գրիգորի Ամենահայոց կաթողիկոսութեան վանքականութիւնը:

Օրմանեան Սրբազան յիշեալ դէպքը նկարագրելէ ետք կ'եզրակացնէ. «Պատմական ճշմարտութեան համաձայն ապստամբ մըն է (Թոռնիկեան), Լուսաւորչի Աթոռին դէմ հակաթոռ մը, եւ եկեղեցւոյն պառակտումներուն պատճառ եղող մէկ մը ... Աղթամարցի Դաւիթին ձեռնարկը ընդհանուր կացութեան եւ պաշտօնական դիրքին վրայ ազդեցութիւն չունեցաւ, հայրապետական աթոռին ուղիղ յաջորդութիւնը չխանգարուեցաւ, քայք եկեղեցւոյ մէջ բաժանում մը ստեղծելու պատճառ եղաւ, որ քաւական դարեր շարունակեց իրրեւ դատապարտեալ հերձուած» (Ազգ. Ա. Հտր. էջ 1852-1854):

1895ին, Խաչատուր Բ. Շիրոյեան Կաթողիկոսի (1864-1895) մահով վերջ գտաւ Աղթամարի կաթողիկոսութիւնը. անոր Թեմը անցաւ Ռուբինոյ հայոց պատրիարքութեան:

ԱՂՈՒԱՆՔԻ-ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Հին Հայաստանի Արցախի եւ Ուտիք գաւառները ծանօթ են Աղուանք անունով:

Աղուանքի, Վիրահայոց, Գուգարաց եւ Փայտակարան նահանգներու վրայ բոլորով կարգուած էր Մագգթացիներու Սանատրուկ Արշակունին:

Գրիգոր Պարթեւ Հայրապետ խորհրդակցելով Տրդատ Թագաւորին հետ Գրիգորիս Պարթեւը (295-337) կաթողիկոս կը ձեռնադրէ Աղուանից Աշխարհին համար, որպէս զի ան Գրիստոնէութիւնը առաւել եւս տարածէ ու կազմակերպէ յիշեալ տիրոջներուն մէջ:

Լուսաւորիչի թոռնիկը Գրիգորիս՝ տեղագին աշխատանքի կը լծուի ու իր քաղաքներէն շնորհիւ դարձի կը բերէ հեթանոսներ: Անոր քաղաքներէն կանգ կ'առնէ 337ին: Գրիգորիս Հայրապետ դաւադրութեամբ կը նահատակուի Սանատրուկ Արշակունիի գիտակցութեամբ, որ միանալով հայ բոլորներուն, ապստամբած է Տրդատի իշխանութեան դէմ դրդումովը Պարսից Շապուհ Արքային: Գրիգորիս Պարթեւի մարմինը թաղուած է Ամարաս Գիւղի եկեղեցւոյ կից: Շուշիի Ամարասու վանքը կոչուած է իր անունով:

Մեսրոպ Մաշտոց Աղուաններու համար եւս գիրքեր յօրինած է Բենիամինի օգնութեամբ: Աղուաններու եկեղեցական արարողութիւնն ու ժամերգութիւնը հայերէնով կը կատարուէր:

Դուինի Բ. ժողովէն (551) ետք, Աղուանից եպիսկոպոսութիւնը կաթողիկոսութեան վերածուեցաւ միշտ ենթակայ մնալով հայոց հայրապետութեան: Անոնք հայոց կաթողիկոսէն կը ստանային իրենց ձեռնադրութիւնը ու կը կրէին «Կաթողիկոս Աղուանից, Լիւնաց եւ Զոգա» տիտղոսը:

Աղուանքի առաջին կաթողիկոս Արաւ (552-596) իրեն աթոռանիստ ընտրեց Պարտաւ մայրաքաղաքը:

1240էն սկսեալ կը գործնայ Գանձասարի եպիսկոպոսական աթոռին հեղինակութիւնը, որուն վրայ ժառանգաբար քաղմած էին Հասան Ջալալեանները:

Ժ. Դ. դարի վերջաւորութեան Գանձասարը կը դառնայ Աղուան եկեղեցւոյ կաթողիկոսարանը եւ այնուհետեւ Աղուանքի կաթողիկոսութիւնը կը կոչուի Գանձասարի կաթողիկոսութիւն, սակայն միշտ ենթակայ մնալով էջմիածնի կաթողիկոսութեան: 1815ին, Ամենայն Հայոց Հայրապետութեան խնդրանքով ու ցարական կառավարութեան հրահանգով վերջ կը գտնէ Աղուանքի-Գանձասարի կաթողիկոսութիւնը, որուն ենթակայ թեմերը կը միացուին էջմիածնի Աթոռին:

Աղուանք-Գանձասար թեմը եղած է Ղարաբաղի հայ մելիքներու հոգեւոր եւ ազատագրական շարժումներու կեդրոնը:

ԱԼԱԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

(Շարունակելի)

ԽԱԶԻԿ ՊՕՂՈՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ (ՍԸՐ ՓՈԼ ԶԱԹԸՐ)՝ ՀՈՆԿ ԲՈՆԿԻ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏԻՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

Հոնկ Բոնկի հայութեան ամենէն նշանաւոր, ամենէն մեծահարուստ եւ միջազգային չափանիշով երեւելի առեւտրականն է Խաչիկ Պօղոս Աստուածատրեան, որ արտաքին աշխարհին ծանօթ է Սըր Փոլ Զաթըր անունով: Անոր անունը անմահացած է պատմութեան մէջ՝ իրրեւ Հոնկ Բոնկի նաւահանգիստին հիմնադիրը:

Խաչիկ Պօղոս Աստուածատրեան ծնած է 8 Սեպտեմբեր 1846ին, Հնդկաստանի Կալկաթա քաղաք, ուր իր ուսումը ստացաւ ծննդավայրին «Լա Մարթինիէր» դպրոցին մէջ: Տակաւին պատանի, գործի ասպարէզ մտնելու հետեւեալով ան 1862ին Հոնկ Բոնկ գաղթեց, ուր «Հիմնուստան» դրամատան մէջ պաշտօնեայ մտաւ: «Հիմնուստան» այդ ժամանակ մեծ գործառութիւններ ունէր Զինաստանի եւ Ճարոնի մէջ:

Կարճ ժամանակուան ընթացքին որոշ փորձառութիւն ձեռք ձգելէ ետք, ինքնավստահ եւ համարձակ՝ ան հրաժարեցաւ պաշտօնէն եւ առեւտրական ասպարէզ նետուեցաւ:

Առեւտրական քնատուր եւ քացառիկ տաղանդով օժտուած այս աղքատ երիտասարդը տարուէ տարի ընդարձակելով գործը մեծահարուստ եւ Հոնկ Բոնկի առեւտրական իշխող դասակարգին ամենէն ազդեցիկ դէմքերէն դարձաւ՝ «Հոնկ Բոնկի առեւտրական թագաւորը» տիտղոսին արժանանալով: Ան սերտ յարաբերութիւն ունէր րբիտանական իշխող դասակարգին հետ

եւ իրրեւ մեծ հեղինակութիւն՝ 1896էն սկսեալ գործադիր խորհուրդի անդամ դարձաւ: 1897ին ալ Վիքթորիա Թագուհիի յիսնամեայ յոբելեանական խորհուրդին ատենապետ նշանակուեցաւ:

Խաչիկ Պօղոս Աստուածատրեանի ամենէն մեծ իրագործումը եղաւ Հոնկ Բոնկի նաւահանգիստին կառուցումը: Արդարեւ, ան ծրագրեց եւ իր դրամով կառուցել տուաւ Հոնկ Բոնկի մեծ նաւահանգիստը՝ իր տասնըմէկ մթերանոցներով: Ան նաեւ նաւահանգիստին մօտակայ ծովը նուաճելու գաղափարը յղացաւ: Այս ծրագիրը պատմութեան մէջ արձանագրուած է իրրեւ «Դարուս մէջ յղացուած ամենէն ընդարձակ եւ ամենէն հաճաքեղ ծրագիրներէն մէկը»:

Անոր օժանդակութեամբ կառուցուեցաւ նաեւ Հոնկ Բոնկի համալսարանը, ինչպէս նաեւ՝ քաղաքի շէնքեր:

Իր այս մեծ իրագործումներուն ու քարեքարութիւններուն համար Բրիտանիոյ արքունիքը Սըր պատուակալ տիտղոսը շնորհեց անոր:

Հայկական կեանքէն հեռու ապրելով հանդերձ, ան չիզուեցաւ իր ժողովուրդէն եւ օգնութեան հասաւ հոն, ուր կարիք կար:

Ան 1924ին, Սահակ Արք. Այվատեանի դիմումին վրայ, նիւթական նեղ կացութենէ փրկեց Կալկաթայի Ա. Նազարէք եկեղեցին, պատկառելի գումար մը նուիրելով անոր: Այնուհետեւ ան իր

հարստութեան եօթանասունհինգ առ հարիւրը կտակեց նոյն եկեղեցւոյ, տեւականօրէն պահելով անոր եկամուտներուն գլխաւոր մասը: Ան այլ օժանդակութիւններ եւս կատարեց Կալկաթայի հայութեան եւ «Լա Մարթինիէր» դպրոցին, որոնց բոլորին գումարը Յ միլիոն ուսիփի կը հասնի:

Սըր Փոլ Զաքըր մահացաւ 27 Մայիս 1926ին եւ թաղուեցաւ Հոնկ Բոնկի գերեզմանատունը: Ի յիշատակ

իր քարերարութեան եւ ներդրումին՝ Հոնկ Բոնկի մէջ երկու փողոցներ իր անունով կոչուեցան «Աստուատրեան» եւ «Խաչիկ»:

Ի յիշատակ մեծ քարերարին՝ Կալկաթայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ բակին մէջ 1953ին կառուցուեցաւ արդիական եռայարկ շէնք մը՝ իբրեւ ապաստանարան չքաւոր հայ ծերունիներուն:

ԼՐԱՏՈՒ

ԱՆԱՐԱՏ ՄԵՂՐԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Այն տունին, որի սեղանից չի պակասում մեղրը, այնտեղ երբեք ռոտ չի դնի բծիշկը»:

ԱՍՍՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ

«Գիրք Բժշկութեան արհեստի» 16րդ դար

- Անարատ մեղրը կը բուժէ աւելի քան 19 տեսակ հիւանդութիւններ:
- Մեղրը միակ սնունդն է, որ ամմացորդ կ'անցնի արեան մէջ:
- Անարատ մեղրը երկարակեցութիւն պարգեւող սնունդ մըն է: Հաստատուած է, թէ աշխարհի մէջ հարիւր տարեկան եւ վեր ապրողներուն մեծ տակաւը կը կազմեն մեղրաբայածները:
- Անարատ մեղրը հեռու կը պահէ մարդիկ վարակիչ եւ ուռուցեայիմ հիւանդութիւններէ:
- Մեղրը տեսողութեան գորացուցիչ է, նաեւ աչիւր մաքրող: Մեղրաբայածները քիչ անգամ ակնոց կը գործածեն:
- Աչիի ցաւի ժամանակ փոքր կաթիլ մը գալ մեղր կաթեցնել: Ան կը սնուցանէ աչիւր եւ կը պայքարի կարմատեսութեան դէմ:
- Ծաղիկներէ հաւաքուած մեղրը կը բարելաւ սրտին աշխատանքը:
- Մեղրը որոշ խառնուրդներու հետ կը բուժէ երիկամի եւ մազձապարկի բարբոխումները. կը թափէ քարերը, կը կանաճաւորէ արեան շրջանառութիւնը եւ ջղային համակարգը:
- Մեղրը կը դարձնէ լեւրդի մեծացումը եւ անոր հետ կապուած հիւանդութիւնները:
- Գործողութենէ եւ հիւանդութենէ ելլող անձին կը յաճախարարուի մեղրը, որ կ'աւելցնէ արեան կարմիր գնդիկներուն քանակը:
- Շաքարախտի պարագային, օրական քիչ քանակութեամբ ուտելով անարատ մեղրը, կը պահպանէ շաքարի քանակը արեան մէջ, կ'իւրացուի ամբողջութեամբ, առանց վնասելու փամփրեսին:
- Որոշ բայներու խառնուրդով, մեղրը կը բուժէ վերքերը, այրածքները, քաւքը, դէմքի ցակերը եւ չարը:
- Անարատ մեղրը կը բուժէ ստամոքսի, աղիքի խցերը, ինչպէս նաեւ կ'աւարտիտի պարագաները:

ՀԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՄՍԱԿՆԵՐԸ

Այս տարի կը լրանայ արեւմտահայ եղբայրախոս ու ականաւոր բանաստեղծ Հանիէլ Վարուժանի մահուան 85 ամեակը: Ենթոյիսի բանաստեղծը իր գրական գոհար ստեղծագործութիւններուն աղբյուրը մեզի ժառանգ ձգած է իր անթիւ նամակները, որոնք ժամանակագրական կարգով, ծանօթութիւններով ու անձնանուններու բառարանով ի մի հաւաքուած ու հրատարակուած են Երեւան, 1965 թուին՝ «Նամակներ» տիտղոսաթերթով:

Մեծ քերթողին նամակները, որոնք կ'ընդգրկեն 1903 - 1915 տարիներու ժամանակաշրջանը, մեծաւ մասամբ գրուած են համալսարանական տարիներուն, երբ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանէն ընթացաւարտ՝ ուղարկուած է Պեմբըայի Կանտ գործաւորական քաղաքը, ուր ինքզինք նուիրած է «քաղաքական ու տնտեսական գիտութիւններու ճիւղին» ու «գրական եւ իմաստասիրական ճիւղերուն»:

Վարուժանի նամակները կ'ընթերցուին մեծ հետաքրքրութեամբ ու յաշիշտակութեամբ, վառելի անոնք ուղղուած են իրեն ժամանակակից եկեղեցական դէմքերու, նշանաւոր մտաւորականներու (ինչպէս՝ Արշակ Զօպանեան, Վահան Թեքեան, Թեոփիլ Զապէլ Եսայեան, Ռուբէն Զարդարեան են), բժիշկներու, մտերիմ բարեկամներու եւն: Նամակները ակնբախ են իրենց գրական - գեղարուեստական բարձր ոճով, գունագեղ լեզուով, բանաստեղծական պատկերներով, հայրենասիրական գգացումներու զեղուն արտայայտութեամբ ու մտաւորական վայել իմացական պայծառութեամբ: Մեծ բանաստեղծին նամակները խիստ ուսուցողական են: Այնտեղ արտացոլուած են ոչ միայն անոր ուսանողական կեանքը օտար երկնակամարի տակ, այլեւ անոր բովանդակ հոգեկան աշխարհը իր բոլոր դրսեւորումներով՝ յոյզերով, ալիքատրումներով, փոթորկումներով, ընդվզումներով, ցատումներով եւ արդարութեան ու խաղաղութեան կոչներով ու պահանջումներով: Նամակներուն ընդմէջէն երեւան կ'եյլ տաղանդաւոր ու նուիրեալ բանաստեղծը՝ յաղթահաւասկ, գերազնիւ, հայրենասէր, գրասէր ու մարդասէր:

Քերթողին համալսարանական տարիները եղած են խուփերով ու փուշերով լի: Փորձութիւնները եւ փորձանքները անպակաս եղած են: Այս վերկայրումներով ու խոչընդոտներով լեցուն կեանքը ան նաւարկած է լայնախորտութեամբ, հեռատեսութեամբ, երկայնատեւութեամբ, նկարագրի պողպատեայ տուկունութեամբ ու իմաստուն յարառեւութեամբ:

Մուրատ-Ռափայէլեան վարժարանը աւարտելէ ետք, Վարուժան մեկնելով Պեմբըա, յաճախած է Կանտի համալսարանը՝ կրթական օժանդակութեամբ Մուրատ Ռափայէլեան հիմնադրամին: Վարուժանին նամակները յարատեւ կ'անդրադարձան կեցութեան ծախսերուն ու կրթանպաստին, որ ի յառաջագումն ստիճանուած էին անոր: Ան կը գանգատի իր այդ կեանական գոմարները յապաղումով կը դրոյնին՝ խիստ ծանր ու անտանելի դրութիւն տեղծելով: Բազում թախամեծանքներէ ետք, խոստացուած գումարը երբ ուշացած է, Վարուժան ինքզինք անտանելի դրութեան առջեւ գտնելով կորսականասէն յայտարարած է: «Ինձի դարձեալ երկու միջոց կը մնայ - կամ վարժարանը պէտք է բոլոր պէտքերս հոգայ այն գիտակցութեամբ, որ բարեբարներուն դրամը ծովը նետած է՝ ըլլաւ եւ կամ պէտք է ուսումս կիսկատար թողում եւ եղբայր օրական հացս շահելու»: Մէկ այլ տեղ, Վարուժան՝ նիւթական ամենամանր պայմաններուն մէջ, անձնական ու աղերսական նամակին մէջ առ Զայր 3. Թորոսեան,

մաշին խօսած առեմ, Վահան Թեքեանին ուղղուած գրութեան մէջ վերադառնալով կ'անդրադարձնայ այս հարցին: «Անոր ծաւալին փոքրութիւնը հակառակ կամքիս եւ փափաքիս եղաւ: Վանքը չուզեց իրաւարակել՝ անոնց շեշտերը գայթակղեցուցիչ գտնալով իր հնարալիքան կուտութեան եւ պահպանողականութեան»:

Վարուժանին հետապնդած ասպարեզը ըստ երեւոյթին հորը կամքով չէ եղած: «Հօրմէս ջլատիչ նամակներ կը առանամ: սկիզբէն ի վեր դառն ու միանգամայն տհաճ դժգոհութիւն մը ցոյց կուտայ որոշած ասպարեզիս հանդէպ: այն դիպքին մէջ եմ՝ որ կամ հօրս պէտք է ծառայեմ կամ հայրենիքիս: Մինչ ցարդ վերջինն է ընտրածս: տեսնանք: Մէկ խօսքով տխուր է ծնողի այն մեծ սերին յագուրդ չտալը»:

Հայրենիքին հանդէպ տաժած իր անսահման սերն ու պաշտամունքը ամենուրեք արտայայտուած են իր նամակներուն մէջ: Ներքին ծայրը գինք կ'առաջնորդէ իր նախահայրերուն երկիրը: «Երկու երկիր կ'ուզեմ լաւ ճանապարհորդել - Հայաստան եւ Իտալիա: զգալու եւ մտածելու համար՝ վերջինը գոնելով առաջինին»:

Վարուժանին նամակներուն հիմնական առանցքը ազգի գաղափարն է: Հայր Արիստակէս Զաւագանովեանին ուղղուած նամակին մէջ շատ գեղեցիկ ու գերազնիւ զգացումներ կ'արտայայտուին: «Նպատակս է հայրենիքիս օգտակար դառնալ: ահա գաղափարականը որ զիս կ'ոգետորէ եւ կը կանգնէ: արդ միայն իրմով կ'ապրիմ, իրմով եմ յաղթական»: Այնուհետեւ կ'ընէ հետեւեալ հաստատումը, որ այսօր եւս պէտք է հնչէ ամենուրեք եւ զգուշացնէ ամէն ուսանող՝ երախտամոռաց ու անձնավերտը ըլլալէ: Սիսա եւ այդ հատուածը՝ «Ազգն է որ մեզ՝ վարժարանին մէջ թէ համալսարանին մեռնած է եւ կորած: Իր գանձին տարւի վերածնող ընծիւղն ենք, իր կենցեցին շարունակութիւնը եւ իր անցեալին ապագան: Հետեւաբար Մուրադ-Ռաիսայէլեան ամէն ծրիավարձ շրջանաւարտ աշակերտ որ լոկ ընտանիքին օգտակար, հայրենիքին ոչինչ կ'ընէ՝ գող է, եւ ընտանիքը իր գողօմին մասնակից: Ես խիստ զայրացած եմ մի քանի նախկին աշակերտներու վրայ որոնք կամ այլաւերած են կամ եղած են անտարբեր եւ անձնապարար հայեր, եւ ճշմարիտ ըսելով քիչ մըն ալ վարժարանը մեղաւակից կը գտնեն առոր ի վնաս իրեն ... Իոն բոլորովին տոնիային գիտութիւնը երեսէ ձգուած է»:

Վարուժան իր համալսարանի դասերը լրջութեամբ վերցուցած է եւ քննութիւնները չափազանց յաջող անցուցած է: այդ առիթով ան - առանց սնամարծութեան կամ գովաբանութեան կրկնած է իր վարժապետին մէկ խօսքը՝ «*Mon ami, ce n'était pas une annonce que vous avez donnée, c'était une conférence*», որ թարգմանի՝ «Բարեկամ, այդ բանասիր ներկայացում չէր՝ այլ՝ բանախօսութիւն»: Անսահման ուրախութիւն եւ հոգեկան խորին գոհունակութիւն պատճառած է իրեն վարժապետներուն համակրութիւնը: Յետ համալսարանական քննութեանց, Վարուժան ամենայն համագտութեամբ գրած է: «Հոգիս բարեբար գոհունակութեամբ համակրած է, այն գիտակցութեամբ, թէ ուժերուս ներածին չափ ընթացքս անցուցի բեղմնատու կերպով, ըլլայ ճիշդիս, ըլլայ գրգռանութեան տեսակետով»:

Կանոնի մէջ Վարուժան կ'ապրի մեկուսացած կենցեց: Ժամանակ մը կը տառապի հոգեկան անմկութենէ եւ վիճակը այնքան կը վատթարանայ որ անձնասպանութեան գաղափարը հետզհետէ աւելի կը զօրանայ իր մէջ: Այսպիսով, հայրենի տան կարօտը, ամապիշակներու անկանոն ժամանումը, բացարձակ ու անմխիթար մեծակեցութիւնը, ուսանողական բարձր պարտաճանաչութիւնը՝ ինքզինք գերազանցելու եւ իր վրայ դրուած յոյսերը ի դերեւ: չհամեմու ճնշումը, ամենը միասին, երիտասարդ քերթողին

վրայ իրենց միասական ու բանդիչ ազդեցությունը գործեցին եւ զինք առաջնորդեցին յուսաստութեան, յուսալքութեան եւ մանաւանդ յոռետեսութեան։ Եղաւ ժամանակ երբ Վարուժան տոկաց այս երկվիշակի ու արգահատելի վիճակէն եւ սիրտը բացաւ իր միակ սրտամօտ բարեկամին՝ Դերենիկ Ճիզմեճեանին։ 1907 թուականին գրուած Դերենիկին ուղղուած լայնաշունչ նամակին մէջ ան իր հոգեկան այնեւոմունք եւ խանգարումը արտայայտող արտասուկի ու պակուցիչ տողեր կ'արձանագրէ։ ան իր արտակարգ շարժուններուն ու կեցումքին համար հաւածանքի կ'ենթարկուի բնակիչներուն կողմէ, ինչպէս նաեւ ծաղրութեանակի՝ պատահիներու կողմէ։ Բանաստեղծական խառնուածքով եւ հայաւորով սրտով երիտասարդի մը համար ամայութիւնը եւ ազգային մերկութիւնը արտասուիելի ու դժոյակ վիճակ կը ստեղծէ։ Ճիզմեճեանին մատնանշեն որ անգոր վիշաբաղող ու ցաւատանց հոգիէ արձակուած տողերը կը մատնանշեն որ անգոր բանաստեղծը յուսակտուր է։ «Միմակ եմ, միմակ եմ, միմա՜կ, կը հասկնա՜ս, solo e soletto! (Միս-միմակ) արցունքներու հետ միմակ, երազներու հետ միմակ, ամբողջ երկու տարի է -որ անձնասպանութեան գաղափարին հետ կ'ապրիմ։ Կաւաց-կանաց այս մտածումը ինձի կ'ընտնանայ ... այստեղի հայերը հայ չեն, ո՛չ լեզու, ո՛չ զգացումներս կը հասկնան- ուսանելու եւ արուկարներու հետ խառնուած խղթագացած են ... Գը կտնուիմ հոգեկան այնպիսի դառն վայրկեաններու մէջ, որ ճամբորդութիւն մը լաւ գիտնմ թէ քիչ մը ցրում պիտի տար ինձ, եւ քիչերուս այս հիւանդ վիճակը բարոյքէր։ Ահաբեկիչ առանձնութեան մը մէջ, լեզուէս հասկցող չկայ, ուր մնաց հոգիէս ... Այս լքիչ միայնութեան մէջ (հակառակ որ սեղանիս վրայ հորմեական եւ յունական մատենագրութեան զլուխգործոցներ դիզած եմ)՝ անկարելի պիտի ըլլայ յարայոյզ ժամերուս հանգիստ տալը։ Ո՛չ թէ միայն չկայ մտերիմ մը, գորովայից սիրտ մը, մէկը որ քեզ միխթաբէ եւ քեզմէ միխթարուի, կամ հասկնայ գրական խառնուածքը ու ազդակ մ'ըլլայ բերումիդ, օրօք գարգացումիդ, այլ հոս եղող բնիկ գիւղացիները ատելի եւ միանգամայն երկվիշակ եակ մը նկատած են զիս ... Ջիւ կը նկատեն խնցր՝ մը փոքր տղաքը, ճամբուս վրայ, սկսան ինձմէ հեռու փախչիլ, բայց որովհետեւ գիշերուան, տանս մօտ, դաշտի մը մէջ կտրուած ծառերու վրայ կը նստիմ երկվիշդ դիտելու, գիւղին մէջ կամաց կամաց տարածայնուեցաւ թէ լսեմ են որ անտղերուն հետ կը խօսիմ, թէ ծեր կին մը կ'աթ տարած ատենը իբր թէ զիս տեսնէր է սատանայի փոխուած, արդ նկատուած են անհաստ կախարդ մը, փուկի պէս բան մը, հիմակ ալ տղաքն սկսան ետեւէս բար նետել։ այդ պակաս էր ... կեանքս վտանգի մէջ է։ Երկնիս ակնցիս կը հասնի թէ գիւղացեալը պիտի առաջարկէ որ այս տեղէն վայիգս առնմն հեռանամ, վասնզի ժողովուրդը խորիդաւոր կերպովես ջղագրգռուած է։ Աստուած իմ, ընդէ՛ր թողեր զիս ... տխրութիւն, մտատանջութիւն, ծանձրոյթ եւ յուսահատութիւն, ահա բաժինը երիտասարդ հասակիս։ Վիճակս է ցիրուցան, միշտ գերագրգռուած։ Ժամեր կ'ընենան որ ես իմ թշնմանս կը դառնամ, ես ինձմէ գրեթէ կը տոկամ։ Եթէ այսպէս շարունակուի ես ինձի հետ գէշ պիտի լննցունեն։ Մէկ այլ տեղ կը գրէ։ «Հոգիս միշտ տխուր է այս աբեղայի մենութեանս մէջ, եւ ժպտելու ամեն ծիգ ինձի բռնազբօսիկ ու այլեւ անկարելի կը դառնայ ... Հիւսիսի այս մշուշտ երկրին վրայ այդ կարօտը զիս խիստ կը տառապեցնէ։ Ո՛չ մէկ հայ կայ հոս որ շնորհքով հայերէն գիտնայ։ Ահա ինչ որ մարդուս բռնուցքը սեղմել կուտայ»։

Հակառակ ուսանողական կեանքի բերած բոլոր տաղտուկներուն, մտատանջութեանց, Վարուժան չէ վիստած, այլ շարունակած է իր դասերը ստանել ետանդով ու կորովով։ ահա այդ հատուածը՝ «Հակառակ այս յուսահատ վիճակիս կը զարմանա՜ս երբ ըսեմ թէ արդէն կանոնաւոր ուսանող, հրաշայի քննութիւններ տուած եմ, այնպէս որ անցած եմ պատուոյ որոշ աստիճանով, ինչ որ թէ զիս զարմացուց, թէ՛ ընկերներս»։

Վարուժան զայրոյթով անդրադարձած է այն տղէր երեւոյթին որ Մուրատ-Ռափայէլեանի ուսման համար կտակուած մեծամեծ գումարներէն օգտուած են այնպիսի «մակարոյցներ, որոնք տարիներով նպաստ կ'ընդունեն առանց համալսարանի մթնոլորտը ծծելու, եւ եթէ բոլոր տարիներու ընթացքին մէջ այդպիսիները մէկ գիրք բացած են, թող գրառան ամբողջ հատորները (որ այս նամակը կը գրէս) գլխուս վրայ թափին»։ Վարուժան արդար ընդվզումով, ցատումով ու յուզումով կը գրէ Հայր Աթոնաս Տիրոյեանին եւ կը բողոքէ իր ամենամօտ գրասէր ու լրագրող ընկերոջ՝ Դերենիկ Ճիգմեճեանի դէմ գործուած մէկ սխալ արարքը։ Մուրատ-Ռափայէլեան վարժարանէն շրջանաւարտ Դերենիկին զրացուած է այն կրթանքաստոր որով հնարաւոր պիտի ըլլար անոր բարձրագոյն ուսումը։ Դերենիկ անմեական միջոցներով դիմած է ընդունուած է Դիզալի համալսարանը եւ ուսանած երկրագործութիւն։ Խօսելով Դերենիկի նիւթական անճոխ պայմաններուն մասին, Վարուժան սրտցաւօրէն կը գրէ. «Այս պարունը Մուրատ-Ռափայէլեանի ուսանողներուն, իր դասընկերներուն ճաշ կը պատրաստէ, եւ այսպէս զոնէ իր սնունդին գինը կը համէ։ Ըսէ խնդրես։ Չեղ ո'ր ուսանողը պիտի ուզէր թէ ծառայութիւն ընել իր իրական ընկերներուն թէ ուսում տվորելու ջանայ։ Այստեղ իսպիական նկարագրին ազնուութիւնը եւ չարքաշութիւնը կայ՝ զոր պէտք է ծանշանք եւ յարգելք եթէ կ'ուզենք որ մեր ինգիլի անխառն ըլլայ անպարսկի եւ գնչուի արիւնէ։ Մինչ այս այսպէս, անդին ի'նչ գոյնով եւ ինչ մորթով ուսանողներու համար Մուրատի դրամը կը շահագործուի ... Բայց չէ կարելի լոյս այս անիրաւուած գոհին առջեւ, որ Չեզմէ այս վայրկեմիս կ'ուզէ որ իր մասին արդարութիւնը գործադրուի ... ինչո՞ւ գինը անգթօրէն դուրս նետեցիք։ ոճիւր չէ՞ ասիկա, ոճիւր է այս, եւ կը զարմանա՞ թէ Հայր Աթոնաս մ'է դէմին, որ այդ ոճիւրը փէշերով ծածկել կը ջանայ ... դարձեալ կը կրկնեմ։ ինչո՞ւ դուրս նետեցիք, երբ անդին իրենց խաղցած խաղէն վերջ ամբողջ բանակով անելի նուազ արժանաւորներ ուսանողներ եղան ...»։

Վարուժանին գրիչը հատու է ու ազդու։ Ան խորութիւն չի դնէր եկեղեցականի ու աշխարհականի միջեւ երբ իւրացու իրատունքի ու արդարութեան մասին է։ Անոր ուժեղ գրիչը կը պահարպէ անարժան եկեղեցականը եւ կը դատաւարարէ անոր ամօթալի գործունէութիւնը։ Ահա թէ ինչ կը գրէ նախկին տեսուչ Ստ. Սարգեանի մասին որ վանքէն հեռացուած էր. «Նկատի առնելով անոր իրաւաբանութիւնը (եթէ ունի իրաւ)՝ զայն նորէն վանքին մէջ մտցնելը ջորեակին առաջին սերմը ծգել է։ Լաւ է կապան փոխէ եւ երթայ սնցորդի եւ շաւրի խանութեան ըլլայ։ Այս է իր եզակական կոչումը՝ կոչումը որ անելի սքեմին ներքեւ է քան թէ սրտին մէջ»։

Վարուժան Թեոդիկին ուղղուած 1909 թուականին գրուած նամակին մէջ կը կատարէ սրտբաց խտրողականութիւններ ու իրաւաբանութեան անարդարութիւններ իր «Սարսուռներ»-ու իրատարակութեան առիթով։ Թեոդիկ, ըստ երեւոյթին, ծանօթ չլլալով տոյն գործի իրատարակութեան ընթացքին կատարուած գրաբնութեան, անգիտակցաբար վարուժանին կը թելադրէ «Յեղին Սիրտը» գիրքը եւս տպել տալ Ա. Դազար»։ Վարուժան զայս լսելով, կը քմիծաղի ու Թեոդիկին կը յայտնէ հետեւեալը. «... Գրեթէ համար խորհուրդ կ'ուտաս որ դիմեմ Ա. Դազար, խրախուսուելով «Սարսուռներ»-ու վանքին տպարանէն ելելէն կը տեսնեմ որ դուն այդ զանշուղ տեսնելու պատիւը չես ունեցած։ «Սարսուռներ»-ը նախ «Գեղունի»-ի մէջ իրատարակելէ վերջ (ինչ որ իրենց հետեւ անելորդ ծախք ընել չէր տար), կազմեցին յատուկ գրքով մը եւ առանց ամշնալու ինձմէ առին ... թուրթի ծախքը վաթսուն \$րանը!», Զահանգներուն խօսքը կրօնքին հեջլամն է. իրենց խօսքը քաղցր է իրենց աղօթքին պէս, բայց իրենց սիրտը սէւ է իրենց գոպակին պէս։ Ես դեռ չեմ ըմբռնած թէ ինչ տեսակ գծում

զգացումներ պետք էին ունենալ, որ նյութիկ պահանջեցին 60 ֆրանքի պես չնչին գումար մը որ հազիկ որի խոլոքը տապալուող ուսանողի մը համար գուցե շատ բան է։ Այնուհանդերձ ես ամչջայ երբ ուղարկեցի 60 ֆրանք։ Պիտի ուզէի 600 ֆրանք ուղարկել, mandat-իս ներքեւ գրելով։ «Հաշուեցեք եւ խնցեք, Ազնուութենէ ծարաւիներ»։ Վանքը լիճացած է։ քանի մը քահանաներ կան միայն որ իսկապէս յարգուելու արժանի են։ միաներուն ուղիքն կոխած տեղը մոլեղ էր տղայ։ Վանքը գերեզմանատուններ կան միայն, որոնք տակ նուիրակալ են։ Խէ՛ղ՛ղ՛ ու՛ր որքան խնայողներ իմ սիրելի Ալիշանիս, ո՛ր դեան պիտի ուզէի ազատել գնեզ եւ ծոցիս մէ՛ջ միայն թաղել»։

Հայր Յովհաննես Թորոսյան Վենետիկէն Վարդապետին կը գրէ. «Ուսանողական կեանքի ամենէն կենդանոտ հարցն է դրամականը ասով կը տառապի որոք ալ, մենք ալ»: Վարդապետն արհամարհած է Եփրատական ամեն արգելք եւ կործք դնելով նման կոհակներու, ան դուրս եկած է վեհանքն, հապարտ ու խղթխղան:

Վարդանան կանգնած է միշտ բարձր, աչքը ուղղած անհուն հորիզոնին, սիրտը նուրբաժ միշտուն՝ հայրենիքին, մարդը լայն բացած լիցին ու լիցին, իսկ հոգին՝ գրավածություն։ Հայրենիքին օգտակար ըլլալու եւ մարդկության ծառայութեան մատուցելու իղծը, մարմաջը, այնքան գործել է, որ կը գրէ։ «Բաղձանք ետ կ'ուզէ - բաղձանք է ապագային մարդոտեան ուրիշէլ այնպիսի պէտ երգ երգ մը որ հայրենիքը ինձի հետ ապարած մը ծննդ լիլալուն զուն չօգտա»։

Վարդանան ծայր աստիճան ազգասիր է, հայրենասեր։ Ան կը տուայտի ու ծանրասպէս կը տազեմասի ի դիմաց իր անմեղ ժողովուրդի անուր զրկանքներուն, չարչարանքներուն, աքարտի ու կոտորածին։ Ան շնչակտուր կը հետնէ մահաատարուտ լուրներուն որոնք գաւառներէն կուգան փափուկ սիրտը խոցելու։ Ի՞նչ ու նորակետուր բանաստեղծին։ Ազգին վիշտը ծրարած իր սրտին մէջ, ան կը մտնայ իր անմեական ցաւը։ Ժողովուրդը գեր ի վեր է անհատներէ եւ անոր տառապանքը բաշխուելու է ամեն սրտցաւ անհատի վրայ։ Վարդգէս Ահարոնեանին ուղարկած իր մասին ծանօթութիւններով յի նամակին մէջ կը գրէ․ «Զեղի ծանօթ ըլլայու եմ անմապատ պայմաններու մէջ գտնուող հայ ուսանողի մը բոլոր տառապանքները, նիւթական եւ բարոյական արկածափնորդութիւնը՝ կրնամ ըսել, թէ ամենն խոր անմեական տառապանքները եւ կրեցի կանոնի մէջ։ Ասկայն, 1904-1907 շրջանն էր, երբ հայութիւնը կը խնդրուէր սուրի եւ տուի սոճաւանքին մէջ, ու եւ չուզեցի տեղ տալ իմ անհատական ցաւերուս, գրեթէ լոյցուցի իմ սիրտն ու նախընտրեցի երգել ցեղին սիրտը, որուն բախիւնները կը զգայի իմ մէջս, իմ սեփական արիւմիս խորը։ Հայութիւնը կուպար եւ կը մտնէր իմ մէջ եւ երգերս դուրս կուգային օտար երկնքի տակ կարօտի լարովը փայլուն կաւառած մեղ ետիկի հոռին եւ մարդուն հեղ»։

1905 թուականի նամակի մեջ, ուղղելով Դեմեթրիին, Վարուժան մարգարեական կանխագուշակություններ կ'ընէ մտադուռ աղետի մը, որ կ'ըմբռնէ ինտենսիւ գիտի ունենար հայութեան համար. «Հօրմէ նամակ կ'առնեմ, կը վախեմ որ Ղոյսից դարձեալ արեւմտ ջառա արիւր դառնայ. զայս ենթադրելու բաւական փաստ ունիմ մըջիս մէջ»։ Մէկ այլ տեղ կ'անդրադառնայ որ հայեր «Կոտորածի տարին մահու չափ վնասուեցան, եւ մինչեւ իմա կտակցալը բաշքեցնին իրենց դիրքը, եւ այդ ամէն օր զգալով դեռ ուրիշ հարուածներ անկարելի կ'ըլլայ իրենց գոյութիւնը պահել: ... Կը փնտնանք կոր սիրելի Դեմեթրի, կը փնտնանք կը:

1907-ի Ռաճայել Պազարճեանին ուղղած երկտողին մէջ Վարուժան յստակօրէն կը բացայայտէ ապագային պատահելիք զանգուածային բառմանի ոճորդ. «Թըղախայաստանի վիճակը ամէն ջուր չի վերցնէր երթալով այդ մասին յորտեսն կը դառնամ եւ: Այս վերածնութիւն է թէ հոգեւարքի խլարտուն»:

1909 թուի «Ազգակ»-ի խմբագրութեան ուղարկուած երկար գրութեան մէջ, անդրադառնալով Կիլիկիոյ ջարդին, կը գրէ. «Յեղին հոգին արիւն կուլայ մէջս, հրդեհուած բաղաքներէն եկող ամէն յուր տաք միտիդի պէս կը թափի գլխիս եւ արտիս վրայ ... քանդել եւ այրելը բարբարոս ժողովրդի մը համար առաքինութիւն է»:

Վարուժան բանաստեղծն է ժողովուրդին անոր ցանցով կոտորացող, նուաճումներով հրճուող, ապագայով յուսադրուող, հայրենիքով արտապնդուող ու ոգեշնչուող հսկան է: Ան թարգմանն է հայրենի ժողովուրդի զգացումներուն: Ապագայի վառ յոյսերով եւ յուսաշող հայրենիքով տողորուած ու ներշնչուած բանաստեղծը կը գրէ. «Բայց հայը պիտի ապրի՝ հսկառակ դահիճներուն, եւ հսկառակ իր աղիւծի աչքին տակ բուսած կորեկին: Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրագօղ շղթային մէկ ունի օղակն ըլլալու համար: Այս է մեր բոլորին յոյսը, յոյս մը զոր մուրճով կտեցինք ինչպէս մեր պապերէն մէկուն նիգակը որ նպատակին կը դիմէր օղին եւ արեւուն մէջ երգելով»:

Վարուժան ապրելու, զգալու եւ ներշնչուելու համար կարօտ է հայրենի ժողովուրդին, մէջ սարերուն, անմայա ու լազուարթ երկնքին, կոյս ու կենդարար հողին եւ գուլպա ջուրին: Անոր սիրավառ ու կարօտակէզ հոգին կը սաւառնի հայոց հարազատ երկրի երկնակամարի վրայ եւ ան իր հոգիին աչքերով կը տեսնէ Մայր Հայրենիքը: Անոր անկեղծ ու ջերմ փափաքն է տեսնել Հայաստանը իրական աչքերով, միախառնուիլ անոր ու խոնարհիլ անոր առջեւ. «Ամբաստնաւ ամբողջ Հայաստանը պէտք է տեսնել: Կուգեմ համբուրել բոլոր այն տեղերը ուր նահապետս մը ինկաւ կամ հերոս մը կոխեց: Մենք այնքան մեծ ենք որքան որ հողէն կը խմենք մեր զգացումները»:

Վարուժան բարձր գնահատականով եւ խորին յարգանքով կը խօսի վաստակաշատ բանաստեղծ ու մեծ գրագետ Արշակ Զօպանեանին մասին: 1908 թուին գրած նամակին մէջ ան ներբողը կը կիւնէ Ֆրանսահայ մեծ մտաւորականին եւ այս առիթով կը գրէ. «Մեր ժողովուրդը պէտք է Ձեր վրայ երկար մտածէ ու երկար խօսի, իսկ եթէ այդ բանը պէտք եղածին չպի չ'ընէր, ան յանցանքը իր կուսակցութեան մոլեռանդութիւնն է: Ասիկա զիս կը զայրացնէ, երբ անդին կը տեսնամ այսինչ կամ այսինչ դոշակի պատկանող ոչնչութիւններ ունելու վրայ ամէն օր կը խնկարկուիմ իրայելացիներու հողթին նման»:

Վարուժան վերադառնալով իր ծննդավայրը կը լծուի ուսուցչական նուիրական աշխատանքին, բայց ուսման, գրականութեան ու բանաստեղծութեան ծարառի սիրտը այստեղ յագուրդ չի գտներ: 1912 թուականին Թեղիկին ուղղուած գրութեան մէջ բացորոշ կերպով կը գանգատի այս մասին. «Մտքի հաճոյք չկայ այստեղ: Ըրեղի կատարեալ բզբտում է երբ մարդ ստիպուած է գօտեանդուիլ ետ մնացած երկրի մը բիւրածեւ կամ, լաւ եւս, տո՛նէ խաւարին հետ»:

Երիտասարդ բանաստեղծը կ'ուզէ ստեղծագործել, բայց շուտով կը նկատէ որ «միջավայրը ապերախտ է գրականութեան հանդէսը»: Ճիշտօրէն քերթուածները մէկտեղելու եւ տպագրութեան յանձնելու ազնիւ միտումով, Վարուժան կը ջանայ առաւանձնէն բարեդար գտնել որ ստանձնէ տպագրական ամբողջ ծախսերը: Դերմեկին

ուղղուած նամակին մէջ կը գրէ: «Մեկնեսս մը գտնել կ'ուզեմ: Հիմա կը հասկնամ թէ որքան անիծուած են գրագէտները ... վառահ եղիլ, բոգ մը անելի կը սիրուի ժողովուրդէն բան թէ գրագէտ մը թեպէտեւ ան ալ կը բոգանայ իր երկը հասարակութեան առջեւ դնելով»:

Վարուժան շատ գեղեցիկ կերպով կը նկարագրէ իր բանաստեղծութեանց յօդիմունքը: «Հնչափաւ բանաստեղծութիւնը մարտիրոսութիւն մ'է: ամեն բանի մէջ սրտին կարթիկ-կարթիկ արիւնունն է ստեղծելը»:

Այստեղ մեծ արոցաւով կ'արձանագրենք Արշակ Զօսանեանին խօսքերը Վարուժանին ուղղուած նամակին մէջ՝ մեկնեսսի պակասի մասին: «Երկրորդ հատորին ծնողագիրը 2 1/2 տարի ծնողագիր մնաց: ամեն տեղ դիմեցի, չկրցայ տպագրելու: համար հարկ եղած գումարը գտնել: Բայց ողորմելի՛ ալ ազգ ենք, հայերը իրենց շահը չեն գիտեր»:

Մեր գրութեան վերջաւորութեան, կը փախաքինք մեքերել Հշան Տեր Ստեփանեանին նամակէն կարծի հատուած մը՝ ուղղուած Վարուժանին, ուր կը խօսուի հայ երգի համնարեղ երգիչ՝ Կոմիտաս վարդապետի մասին: Դր. Նշան Մախ Գուլըր կը ինքն՝ անմահ վարդապետին բացառիկ կարողութեան, ապա վրդովմունքով կ'արտայայտուի Հայր Կոմիտասին հանդէպ ցուցաբերուած բացառական ու արիւնքաբերական վերաբերմունքին համար: Սիւս թէ ինչ կը գրէ ան՝ «Կոմիտաս վարդապետ ունկնդրել մեծ բախտ մըն է, ամեն հաճոյք կը գտնեմ զայն լսելու: համար՝ երգած ատեն կը տարտայի, հոգեկան նուագ մը կը դառնայի միշտ անոր երգերուն ազդեցութեան տակ՝ դպրոցին տետրակ մը նուրբ լրջաւ: որուն մէջ 12 հատ հայկական իրաշալի եղանակներ կան, միշտ ծնողս է առ, եւ միշտ այս եղանակները կը նուագեն ցուկակովս՝ այդ եղանակները զիս օրորաւորէ անելի հայ կ'ընեն՝ «հայ կ'ընեն» գրած առեւտ տոնկայի կերպով՝ բարկացած եմ կարգ մը ցածերու դէմ, որոնք արիւնքաբերակ են մը կը նային ամեն ինչի որ հայ է (ցուցնելով իրենց անծով միտքը եւ անծնական դատում՝ չունենալով): Ըստ այդ ապուշներուն ամեն ինչ որ հայ է՝ ոչինչ է: ամեն ինչ որ եւրոպական է՝ իրաշալի է!! ա՛խ, ա՛խ նորեն ա՛խ ... նոյն այդ ցածերը յանդգնութիւնը, լսիկը, լսիկը ունեցան խնդալու: Կոմիտաս վարդապետի նման մարդու մը վրայ, այնպէս որ երբ գնաց՝ աս խօսքերը ըսաւ՝ «Տանացէք անելի ազնիւ գտնուելու»: ... Մուրաւ-Ռախայէեան աշակերտ լոյսուելու անարժան ոչինչները, այլատեղաները, ցոյիները, կը համարձակին ծիծաղել մէկու մը վրայ՝ որուն եղունգին աղտին իսկ չեմ հաստատարներ եւ զիրենք, եւ իրատունք ունին»:

Վարուժան՝ արեւմտահայ չքնաղ բանաստեղծը, քերթողը, գեղարուեստաւորը, իրապաշտը, խորհրդապաշտը, զարգախարապաշտը, ոճաբանը, քննադատը, հայրենասէրը, աչքերը փակեց ծաղիկ հասակին՝ անմահանգութ, անմեղաւան ու անմկարագրելի պայմաններու մէջ: Ան իր պաշտելի ժողովուրդի ծոցէն լրագործին վրդուեցաւ ու դատասարսուղեցաւ ոչնչացման՝ մահուան՝ սեանքը չափազանց դաժան ու անողորմ գտնուեցաւ այս նորապիթիք բանաստեղծին համար՝ 31 զարուները հագիւ բոլորած տաղանդաւոր բանաստեղծը՝ այսօր կ'ապրի իւրաքանչիւր հայ սրտէ մերս: Անոր բանաստեղծութիւնները յագեցած ու տոգորուած են համամարդկային զարգախարներով: Վարուժանի բանաստեղծական մտածողութիւնը իր տեսակին մէջ եզակի է ու ներով: Կարուժանի բանաստեղծական մտածողութիւնը անկրկնելի են իրաշալի, անմահ Հայ իդիակապ: Անոր տեղծած պատկերները անկրկնելի են իրաշալի, անմահ Հայ ժողովուրդը՝ այսօր խորին ակնածանքով կը խնամրի այս պատուական հայրողիին

առջեւ իր գրական հրաշալի ժառանգին, ազնուագոյն ձգտումներուն, խորագոյն ապրումներուն ու անկեղծ զգացումներներուն համալս։

Հայ բանաստեղծութեան համաստեղութեան մէջ այս անխոնջ, անվիաստ ու պայծառամիտ գրագէտին անունը յախտեանս թող շարունակէ իմաստութիւն ճառագայթել նորահաս սերունդին։

Թող անմեղ մնայ Վարուժանին անունը մեր ժողովուրդի սիրտէն ներս։

Յիշատակն արդարոց ու նահատակաց օրհնութեամբ եղիցի։

Զենոբ Զիյ. Նալպանտեան

ՆՈՐ ԳԻՐԻՔ ԹՐՀՆԵԼՈՅ

ՔԱՐՈՋ

*Խնդրեցաւք հաւատով միտքանուիկամբ
ի Տեառնէ՝ զի զսղարմութեան զշնորհս
իւր արտօցէ ի վերայ մեր. Տէրն տմեհ,
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:*

ԱՂՕԹՔ

*Որհնեալ ես Տէր Աստուած մեր, որ եւ
տուր մեզ զպատուիրանս քո ի լուսա-
ւորութիւն անձանց մերոց։ Լ'նկա՛լ և
այժմ՝ զնորատիպ զիրս զայս ի ձեռաց
մերոց ի տաճար սուրբ քո։ Որհնեա՛ և
սրբեա զսա, զի ուրք ընթերցին, և
որք լուիցին, բանայցին սիրաք նոցա
առնել զհրամանս քո զրեալ ի սիրաս
իւրեանց, լինել քեզ ժողովուրդ սեպ-
հական։ Պայծառացո՛, Տէր, և զհոգի
մատուցողի սորին. և եթէ յանցեալ ինչ
կցէ փոքու կամ մեծի, արա թողու-
թիւն բարեխօսութեամբ սուրբ Աստ-
ուածածնին և ամենայն սրբոց։ Զի դու
ես Տէր Աստուած մեր. և քեզ վայել է
փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ՝
և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն։*



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM
 بطريركية الأرمن في القدس
 PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

4 Յուլիս, 2000

Ազնուափայլ
 Օրիորդ Ազնի Սագուպեան
 Ստեփանավանդաբան Սրբազան Սրբազան Սրբազան
 Հիւսիսային Ամերիկայի Սանուց Միութեան
 Լուս Անճեպոս

Սիրելի Օրիորդ Սագուպեան,

Գոհունակութեամբ տեղեկացանք, Նահապետ Մելիքեանին «Սաղեմի
 Խոնարհները» հաստորին հրատարակման առիթով, Իրանահայ Միութեան հետ
 գործակցաբար մեր Սանուց Միութեան առաջադրանքը՝ «Գինեհոն Սրեկոյ» մը
 կազմակերպելու:


Կարդացիմք հաստորը: Ներկայացուած տիպարներուն եւ շրջապատին մօտէն
 ծանօթ լինելով հանդերձ, չենք պակասցու մեր ընթերցումին վայելքէն: Նահապետին
 մտաւորականի շնորհը բացայայտ է: «Սաղեմի Խոնարհ» տիպարը աշխարհի ամէն
 կողմը կան: Անոնց զգացակից դառնալու, եւ զանոնք շրջապատող ընկերութեան
 անդամներուն թափաբանութեան, խոնարհ տիպարները ընկալելու
 մարդկայնութեան, եւ երբեմն «չարանիւնի անմարդկայնութեան», հարազատ
 պատկերացումը եւ վերապրումը, կը պահանջեն հոգեկան եւ իմացական
 ներհայեցողութիւն, որ գրողն ու գրութեան կը տեղաւորեն որոշ պատուանդանի մը
 վրայ:

«Սաղեմի Խոնարհները» համամարդկային տիպարներ են:

Նահապետ Մելիքեանի վերլուծող ոգին եւ զգայնութիւնը, հարազատ ու
 կենդանի պատկերացումներով կը համադրէ շրջապատը եւ անոր մէջ երեւցող
 ընկերային եւ ազգային, մարդկային անհատական եւ հաւաքական ապրումներու
 համաճառագր:

Արդար է ակնկալել, որ «Սաղեմի Խոնարհները» չմնան առանձնացած եւ
 առանձնատիպ, այլ դարպասը բանան հին աշխարհի մանրապատմութեան դէպի նոր
 ոլորտներ, մեր ժամանակներու հայ աշխարհի պատուանդան վրայ ուրաւագծելու
 համար թափաբանք մեր տիպարներ:

Սաղեմաշունչ «խոնարհներու» անունով մաղթանք՝ որ Նահապետին գրիչը
 դալար եւ սիրտը բոլի մնայ միշտ, եւ կաթնաղբիւր մեր ներշնչումի, հոգեկան եւ
 իմացական վայելքներու:

Սիրոյ Ողորմելի

 Թորգոմ Արք. Մանուկեան
 Հայ Պատրիարք Սրբազան

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼԻՔՈՆԵԱՆԻ «ՍԱՂԷՄԻ ԽՈՒՆԱՐՀՆԵՐԸ» —

Անձկութեամբ սպասում մը եղաւ այդ իրիկուն, 9 Յուլիս 2000, իրանահայ Միութեան սրահին մէջ, ուր տեղի պիտի ունենար գինեձօնը Նահապետ Մեղնեանի վերջին գրքին Աթոռները շուրջ 400-ի մօտ էին, գրաւելով սրահին ամբողջ տարածքը։ Ո՛վ պիտի զարբազանէր այս աթոռներուն վրայ, ամառնային այս եղանակին, երբ կիրակի օրով ամէն ոք կը միտի քաղաքէն դուրս շրջագայութեան երթալ, մանաւանդ որ դպրոցական արձակուրդները արդէն սկսած էին։

Յոռետեսութիւն էր գուցէ այդպէս մտածելը։ Երեկոյեան ժամը 6:30-էն անդին սակայն ճանդիտականները մի առ մի հասան եւ իրենց աթոռները գրաւեցին, որոշ գուարթութեամբ մը որ քիչ անգամ՝ յայտնի կ'ըլլայ գրական երեկոյթներուն։ Նահապետ Մեղնեանի գրքին պարունակութիւնն էր՝ զոր գուշակած էին մարդիկ, եւ ինչ որ կ'երեւի սիրով կը սպասէին ճանդէսի բացման օրով։ Եւ ինչ որ ինչ եւ ո՛վ են այդ «Մաղէմի խոնարհները» գրող հեղինակը նկարագրած պիտի ըլլար իր սահմանափակ ծաւալով հատորին մէջ։ Եւրոյ 140 էջեր։

Վիզերը վերամբարձ, ծոծրակները իրենց ուսերուն վրայ հաստատուն բռնած, ներկաներուն աչքը սեւեռած էր դէպի բեմ, ուր հանդիսավար Բարսեղ Գարեթյանն կը սկսէր իր հանդիսավարութիւնը։

Հանրութեան մէջ տեսանլի էին հրաւիրեալներ՝ Լոս Անճէլէսեան Հայ բազմութիւն մը, Երուսաղէմահայ, Եգիպտահայ, Լիբանանահայ, Սուրիահայ, Պարսկահայ, Պոլսահայ, Յորդանանահայ, Հայաստանահայ։ Այս «խոռոչները» բազմութիւնը՝ ուշադիր կը հետեւէր սկիզբէն արդէն՝ հանդիսավարի խօսքերուն, եւ կարծես կ'ուզէր ըմբռնեն յետոյ բեմադրութիւնը բառ առ բառ։

Մտաւորականներու հոյլ մը կար հոն, նկատի առնելիք թիւ մը գրաւէններու, գրադէտներու, լրագրողներու, երաժշտասէրներու, եւ ըստ գանազան գործունէութեանց սեփականատէրեր եւ պաշտօնականներ։ Յայտագրին մէջ կային ծանօթ

անուններ բանախօսներու եւ գեղարուեստական բաժինը կատարողներու։ Մթնոլորտը ընտանեկան էր, գուարթ երեկոյի մը մասնակցութեան հաճոյքով, ուր կարծես իւրաքանչիւր ոք ինքզինք ազգական կը կարծէր Նահապետին։ Արդարեւ, այդ իրիկուն գլխաւոր կիզակէտ մը եղած էր «Ռոնարհները» ստեղծագործող Նահապետը, որ անկիւն մը քաշուած լուռութեամբ կը հետեւէր իրեն ընծայուած պատուոյ արտայայտութեանց։

Բարսեղ Գարեթյան խանդավառ էր իր ներկայացումներուն մէջ, եւ կ'ուզէր անպատճառ նոյնպէս խանդավառ տեսնել ունկնդիրները, ջանալով հանդիսութեան բնոյթը վերածել գրական եւ հոգեկան յազարդ առթող միջավայրի մը։ Եւ յաջողեցաւ։ Մի՛ ըսէք երեք թէ երկայնքան է Բարսեղը, կամ աւելորդաբարն է Բարսեղը, Գարեթյան Բարսեղը՝ ամբողջ ճանդէսի կատարման Վերլորդումն սուղն է, տեղի ունեցող ճանդէսին հրովանդակութիւնը՝ ներկայորդող ճանդէսին հոն որ խորքով գիտէ ամէն նրբութիւն՝ հարցին վերաբերեալ։ Եւ, այդ իրիկուն, առանց թոթովանքի, անկեղծաբար, իրեն տրամադրուած «միջանկեայնեցող» ներկաներուն ցոյց տուաւ Նահապետ Մեղնեանի ներքին եւ արտաքին կեանքի մի քանի մանրամասնութիւնները, որոնք հարկաւոր գարեղբ կազմեցին ճանդէսին, իր՝ դրած գիրքին բովանդակութիւնը իմանելի առաջ։

Կը գնահատենք Բարսեղը, իր յաջող «արարողապետի» ճանգամանքին մէջ։

Իրանահայ Միութեան Գրականութեան եւ Արուեստի բաժնի վարչութեան նախագահ Տիկին Անահիտ Նազարեան պատշաճ բացում ըրաւ ճանդէսին, շեշտելով գիրքերու կամ գրականութեան կարեւորութիւնը հայ կեանքի հոյովոյթին մէջ, իրը առհասարակ այդպիսի գոյատեւումն եւ բարգաւաճումն։

Ճորձ Արեւիկան ընթերցումը ըրաւ իր գրութեան, փորձելով բաղդատական նմոյշներ ցոյց տալ ուրիշ «խոնարհներու» կեանքին, ի վերջոյ մաղթելով Նահապետին

դալար գրիչ եւ միշտ աւելի բեղուն գործունէութիւն:

Օշին Գէշիշեան, որ ըստ արիստոտէլեան իմաստասիրական դրութեան՝ միաժամանակ ամէն տեղ գտնուելու յատկութիւնը ունի (ubiquitous), որ գաղութաւայ կեանքի ծալքերուն գիտութիւնը ունի եւ հայկական հարցերու խորին խորհուրդները իմացող մարդն է, այս բացառիկ մարդը, որ ի վերայ այսք ամենայնիւ լրագրող մըն է նաեւ՝ զարմացուց հանդիսականները եւ բաւական գուարթացուց մթնոլորտը երբ ըսաւ թէ Վիշն Կ'ուզէր գրած ըլլայ այս գիրքը եւ իր անունը տեսնել այդ գիրքի ճակատին: Շատ բան կը նշանակեն այս Երուսաղէմացիին խօսքերը, որ արդէն ի սկզբամէ անտի գաղափար ունէր այդ ճղճիմ մարդոց մասին, զորս Նահապետ Արտաշէս-նէր՝ կոչած է: Ան Նահապետի գրքին գովքը ըրաւ շատ պարզ բայց գիտաւոր գնահատականով մը, որուն նման տակաւին չէինք լսած այլ առիթներով: Առաջին անգամն է որ, ըսաւ Օշին, - կը կարգած գիրք մը որուն մէջ՝ ստորակէտ, կէտ, չէտ, բոլթ, վերջակէտ իրենց տեղը դրուած են:

Յայտագիրը կը շարունակուի...

Ժամերը կ'անցնին եւ կ'երկարին Մեզի կը ներկայացնեն զեղարունստական բաժնի մը, ամէնուն հաւանութիւնը ստացող, ծափահարութիւններու հեղեղին տակ, ըլլայ Սալբի Մայիլեանի նուրբ, բեհեղեայ ձայնային թրթռացումներով եւ նազանքի սրտառու ժեսթներով երգերը, մինչեւ Արտաշէս Հայրենի օփերային եւ ժողովրդական եղանակները: Երգերուն վերջաւորութեան դեռ չհասած, արժանաւոր ծափահարութիւնները կ'երկարէին ծաւալուելով սրահի կամարներուն տակ..., երբ արունստագէտները դադրած են արդէն երգելէ: Հաճելի է լսել այսպիսի ձայներ, որոնք տարբեր աշխարհ մեզ կը փոխադրեն... եւ գաղափար մը կու տան մեր երգահաններուն կարողութեան մասին: Լուրջ երգի ստեղծած թնոլորտին մէջ կը զգաս թէ պարզ երգէն անդին մեր հեղինակները ունեցած են

զանազանեալ ներշնչում եւ իւրացուած ճաշակ, եւ յորինած են երգեր եւ արիաներ որոնք Վերտի, Պախի կամ Պիզէի հզօրութիւնը եւ առինքնող հրապոյրը ունին Պէտք է զարգացնել այսպիսի երգիչներու ծրագիրները, որոնք կրնան մեզ ծանօթացնել եւրոպական շրջանակներուն եւ հայ ստեղծագործ հանճարին գաղափար մը տալ միջազգային երաժշտական համայնքին:

Սալբիին ընկերացաւ դաշնամուրի վրայ Յովիկ Ոսկանեան, իսկ Արտաշէսին կ'ընկերանար Տատիանա Զախմարճեան: Երկու արունստագէտներ, որոնք իրենց մատենաբան ճիւղներով ստեղծաշարի գիտութեան ապացոյցը տուին:

Գեղարունստական բաժնին վերջին ներկայացումը կը կատարէր Արարատ Պետրոսեան, որ իր շուրի գիլ ռոթերով մեզ կը համակէր հայրենի թեթեւ շունչով մը եւ կը հասցնէր մեր հայրենի լեռներու մօտերը, ուր կը լսէինք այդ բարձունքներէն եկած թրթռացումները, ազգային արձագանքներով պարունակած:

Ժամերը կ'անցնէին վայրկեաններու արագութեամբ, Բարեգ Գարթալեան հանդէսին մեկնաբանութիւնը կը շարունակէր բնծ հրաւերելով հանրածանօթ սամուլեղող, հեռուստաժամի վարիչ-խօսնակ Անահիտ Մարտիրոսեանը: Եւ ան կը սկսէր ընթերցումը Արտաշէսեանէն մէկ դրուագին, Բնկիլը: Մտածեցի տեղույն վրայ որ դոնէ քսան վայրկեան մը պիտի տեւէր փոքրիկ վիպակին այդ ընթերցումը եւ յայտագիրը պիտի ծանրանար յարգի վայրկեաններով: Զնշումը սրտին վրայ, երբ բաւական յառաջացած էր ընթերցումը, շուրջանակի նայուածք մը նետեցի նկատի առնելու համար ունկնդրողներու հոգեվիճակը:

Ոչ մէկ արտաքին նշան յոգնածութեան, ոչ մէկ նշոյլ նոյնիսկ դոյզն ձանձրոյթի Մարդիկ կը հեռանէին Քենիէլի սիրային արկածներուն որոնք վախճան մը կ'ունենային անարդարութեան, յուսախաբութեան եւ վշտի ալիքներու մէջ:

Անահիտին ընթերցումով յայտնի կ'ըլլար Նահապետի ամբողջ հոգիին սէրը

ու նուիրումսովսինը հայ գիրի հանդէպ

Յայտնի է որ Նահապետ կը սիրէ գրել, եւ, իրապաշտ խորհրդածութեանց ցանցին մէջ նկարագրել տիպարներ որոնք ընդհանրութիւն աչքին դիմաց ծաղրանքի կամ խնդուքի առարկայ էին, բայց Նահապետի գրիչի ծանրութեան տակ ատենք եղած են մէյմէկ արգահատանքի արժանի էակներ, ուրիշներու նման բանաւոր, մտածող, կեանքի լաւ կողմերը որոնող, բայց բախտի չար բերումով ինկած անհասարմակարգակի մը վրայ, առանց սակայն կորսնցնելու իրենց անհատականութիւնը: Այդ անհատականութիւնն է որ Նահապետ Միլլոնեան կը տքնի ցոյց տալ իւրաքանչիւր մարդկային պատկերի մէջ զոր կը ներկայացնէ որոշ զարգացած գրիչով մը, իր պարզութեամբ հրապուրիչ եւ լայնբերան լեզուի վայելուչ, ճկուն ու հետեւողական շարադասութեամբ:

Լրումն ամենայնի, կարգը եկած էր ունկնդրելու Փրոֆ. Գէորգ Պալուբեանի խօսքը:

Կշռոյթով եղած խորհրդածութիւնները, ընկերաբանական ներկայացումները, բարոյական տեսակէտները այս թշուառ Պոնարեաներուն՝ հոգեբանութեան խորքը իմանալու համար, Փրոֆեսորին ուսումնասիրութեան հում նիւթը կազմեցին, եւ իր վերլուծումներով ան մեզի պարզեց այդ «տեսակ մարդոց» ներքին աշխարհը, անոնց ցաւերը, միմուկները, լքուածութեան մտահոգութիւնները եւ հանուրին արհամարհանքին ենթարկութիւնը: Ներկաները ուշի ուշի հետեւեցան փրոֆեսորի «դասախօսութեան» որ իր ցուցմունքները եւ ապացոյցները կը շարախէր յաճախ Նահապետի խօսքերուն, զորս կը քաղէր ՎՄՊէ-ի Պոնարեանը: Գրէին: Լրած գիտողութիւնը շատ իրական էր... Պատասխանատուները այդ անձերու թշուառութեան իրենց կեանքով արտօնած ըլլալ կը թուէին մինչեւ իսկ փոքր ստահակներուն որ ծանակի եւ քամահ-

րանքի ենթարկեն անպատիժ՝ այդ լքեալները, այդ «առամսմա ապրող մարդկային խրաւրիակները»: Միւս կողմէն, խոռոսալով սակայն վանքի մատանէն օրական համեստ ճաշ մը հոգալ անոնց եւ գիշերները օթեւանելու անկիւններ, ուր կարող ըլլային ըսն մը քաշել, իթէ կարենային:

Փրոֆեսորին խորին եւ իրապաշտ մեկնաբանութիւնները ունկնդրներուն գնահատանքին արժանացան, եւ ըսին. «Թէպէտ երկար էր ճառախօսութիւնը, բայց ոչ ձանձրացուցիչ, որովհետեւ մենք իմաստութիւն տեսանք եւ նոր-նոր իրականութեանց մասնակից եղանք: Փրոֆեսորին վերլուծումները մեզի պարզեցին եւ ցոյց տուին իրական աշխարհը՝ զոր Նահապետ ջանացած էր ներկայացնել Պոնարեաներու գրքին մէջ...»

Շնորհաւորական եւ քաջալերական երկու նամակներ կարդաց Բարսեղ Գարթալեան: Առաջին նամակը՝ Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի օրհնութեան գիրն էր, իսկ երկրորդը՝ առաջնորդ Վաչէ Արք. Յովսէփեանի ողջոյնի խօսքը:

Ապա տեղի ունեցաւ ա'յնքան սպասուած գինեծօնը, եւ բեմին վրայ հրաւիրուած գրագէտներ, բարեկամներ, գործի մարդիկ ուրախ ու զուարթ, գինիով «լողցուցին» Նահապետի սոյն գիրքերէն մի քանի հատը: Հեղինակը յայտնի գոհունակութեամբ կը հետեւէր արարողութեանց:

Ապա իր կարգին Նահապետ շնորհակալութեան խօսքը ուղղեց, նախ Աստուծոյ, որ արժանացուց գինք այս հաղթութեան եւ բացառիկ ուրախութեան — եւ ըստ իր ըսածին — իրեն պէս մէկ տրուպի մը... Այդ հոգեւոր ուղերձը առ Երկնաւոր Հայրը՝ որոշ ազդեցութիւն մը գործեց շատերուն հոգիներուն վրայ: Այս ձեւով արտայայտուելը նորութիւն էր նման գրական պարագաներու առիթով... Նահապետը իր անձնական եւ ներքին պատճառները ունէր իր աչքերը ու ապա խօսքերը ուղղելու եւ իր կարճատեւ արտայայտութեանց սկիզբը յիշելու փրկչին անունը՝ Յիսուս Քրիստոս... Ապա Նահապետի շնորհակալութեանց

շարքը երկնցաւ ներկայ ժողովուրդին, եւ յատկապէս դերակատարներուն որոնք նոյն գիշերուան ելոյթը վերածեցին փառաւոր հանդիսութեան:

Եղաւ պատշաճ հիւրասիրութիւն որ նոյնպէս երկարեցաւ ըսյց եւ առիթ տուաւ մեկնաբանութեանց: Ամէն ոք այդ իրիկուն Նահապետ եւ «Ռոնարհներ» հոլովեց եւ ապագայի մաղթանքներ հրամցուց իրեն:

Ապագայ դրասէր սերունդը, վստահեմ, պիտի չվարանի փոքր անկիւն մը շնորհել Նահապետին «Սաղէմի Ռոնարհներ»ուն հայ գրականութեան ընդարձակ անդաստանին մէջ, հոն՝ ուր հին ժամանակներէն սկսեալ իրենց անունները կոփեցին գիրի տիտաններ եւ իրենց հետեւորդ աշակերտներ, որոնք զէմքեր եւ նկարագիրներ ուրուագծեցին եւ նկարագրեցին իրապաշտ

աշխարհէն եւ հարստացուցին մեր ազգային գրականութիւնը:– Պարոնեան, Օտեան, Արփիարեան, Արշակ Զօպանեան, Հրանդ Ասատուր, Երուխան, Նշան Պէշկէթաշլեան, Մեծուրի ու Առանձար:–

Այս հանդիսութիւնը, Նահապետ Մելքոնեանի «Սաղէմի Ռոնարհներուն» նուիրուած գրական յաջող երեկոն իրականացաւ բարձր հովանաւորութեամբ՝ Տէր եւ Տիկին Մարտիրոս եւ Ռիթա Իսկէնտէրեաններու, կազմակերպութեամբ Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան Գրականութեան եւ Արուեստի Բաժանմունքի, եւ Երուսաղէմի Ս. Թարգմանչաց Վարժարանի Հիւսիսային Ամերիկայի Մասուց Միութեան:

ԱՐԱՄ ՕՐԱՆՆԱՆ

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Հոկտեմբերը հոչակուած է մշակոյթի ամիս, քանի որ այն իր մէջ ընդգրկում է հայ ազգի ամենից մեծ տօներէից մէկը՝ Թարգմանչացը: Վերջինս վեր է ածուել մի այնպիսի եզօր շարժման, որը իր քախտորոշիչ կնիքն է դրել ոչ միայն հայ մշակոյթի, այլեւ հայ մարդու, հայ բաղաժանան կեանքի ու յարաբերութիւնների ցանցի կերտման ընթացքի վրայ: Այս պատճառով էլ՝ Հոկտեմբերը որոշակի պատգամ ունի հաղորդելիք: Այդ պատգամի կառոյցում կարելի է առանձնացնել երեք կէտեր:–

Ա. – ՀԱՅ ԳՐԱԽՈՐ ՄՇԱԿՈՅԹԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է ԱՍՏՈՒԱԾԱՇՆՋԻ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԱՆԴԱՆԻ ՎՐԱՅ: Հեթանոսական շուրջ չորս հազար տարուայն հայ բաղաժանկրութիւնը մեր ազգային հպարտութիւնն է: Այդ շրջանում ձեւաւոր-

ուեցին հայ լեզուն, հայ ազգը, հայ պետականութիւնը, ազգային մշակոյթի տարրերը, հայ բանահիւսութիւնը: Ի տարբերութիւն յունական, հռոմէական եւ արեւելեան մի շարք ժողովրդների հեթանոսական կրօններից, հայկական հեթանոսութիւնը նոյնիսկ չդրեց հայ նշանագրերի ստեղծման հարցը: Բայց իր հարիւրամեակը չբոլորած՝ հայկական քրիստոնէութիւնն ու հայ եկեղեցին ո՛չ միայն գիտակցեցին հարցի կարեւորութեանը, ո՛չ միայն հարցը յառաջ ֆաշեցին, այլեւ այն լուծեցին: Աւելի՛ն: Շատ շուտով ստեղծեցին մի այնպիսի հարուստ հայ գրաւոր մշակոյթ, որը նուաճեց «Ոսկէ Դար» անուանումը:

Հայերէն առաջին մատեանը Աստուածաշունչն էր: Այն հիմք դարձաւ գրաւոր հայ մշակոյթի: Աստուծոյ Խօսքը հայացաւ, Աստուծոյ յայտնութիւնը հայացաւ, Աստուած յայտնուեց հայերէնով: Նրա Խօսքն ու յայտնութիւնը դրուեցին հայ նոր մշակոյթի հիմքում: Իսկ ինչպէս ապացուցուած է, «Աստուծոյ շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը եւ պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» - Բ. Տիմ. Գ. 16-17: Աստուածաշունչը միակ մատեանն է, որ մարդուն սովորեցնելով, խրատելով, յանդիմանելով, ուղղելով ու կատարելագործելով՝ նրան պատրաստում է յաւիտեանականութեան համար: Միւս մատեանները ունակ են լոկ հարստացնելու մարդու գիտելիքները, ընդլայնելու նրա մտահորիզոնը, մշակելու նրա հմտութիւնները եւ բարձրացնելու նրա գիտակցութիւնը: Բայց նրանք անկարող են երաշխաւորել մարդու համար յաւիտեանական կեանք:

Հայ գրաւոր մշակոյթը բարձրացաւ մարդուն յաւիտեանական կեանք խոստացող Մատեանին վրայ: Երբ հայը հարագատ մնաց Աստուածաշնչի սկզբունքներին, իր հիմքին, նա գործեց այնպիսի հրաշքներ, որ զարմացնում է ողջ աշխարհին: Պատահական չէ, որ հայի գոյատեւման գաղտնիքն ո՛չ այնքան իր ֆաղափական պատմութեան, ինչքան իր մշակութային պատմութեան մէջ է:

Բ.- ՀԱՅ ՓՐԱԽՈՐ ՄՇԱԿՈՅԹԸ ՍԿՍԵՑ՝ ԽՈՍՏԱՆԱԼՈՎ ՍԻՐԻԸ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԽՐԱՏԸ: Հայ գրաւոր մշակոյթը սկսեց «ճանաչել իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը» բառերով: Աստուծոյ «Առական» գրքի առաջին բառերը: Ինչպէս նշում է Դ.-Ե. դարի մատենագիր Կորիւնը, այդ բառերով սկսելով Աստուածաշնչի թարգմանութիւնը՝ ժամանակի հայ գիտնականները շեշտեցին թէ քրիստոնէութիւնը հիմնուած է ո՛չ թէ նախապաշարունակների ու սնոտիապաշտութեան, այլ իմաստութեան վրայ, աստուածային իմաստութեան եւ խրատի վրայ, որ հայ հաւատացեալն ու հայ եկեղեցին պէտք է ապրեն, մտածեն եւ գործեն իմաստութեամբ, որ նրանք պէտք է լսեն իմաստուն խրատներն Աստուածաշնչի: Պատահական չէ որ հայ ժողովուրդը

հաւատում է թէ այն մարդը՝ որ գիրք է գրում, գիրք է գրել տալիս, գիրք է փրկում՝ կատարում է աստուածահաճոյ այնպիսի մի գործ, որ կարող է նրան յաւերժական կեանքի արժանացնել: Հայու մտածողութեան մէջ նստել է այն համոզմունքը, թէ տգիտութիւնը չարիք է, իսկ ուսումն ու գիտութիւնը՝ բարիք ու երջանկութեան աղբիւր: Նա իր ողջ էութեամբ հետեւել է Աստուածաշնչի այն դրոյթին, թէ Աստուած մերժում է այն մարդկանց՝ որոնք մերժում են գիտութիւնը: Հայերս միշտ մեծ յաջողութիւններ ենք արձանագրել, երբ մեր գործնական կեանքում պահպանել ենք իմաստութիւնն իր բոլոր նառագայթումներով, եւ ընդունել բարի խրատները: Երբ մենք շեղուել ենք իմաստութիւնից ու հրաժարուել ենք խրատից, միշտ ընկել ենք միակողմանիութիւնների, ծայրայեղութիւնների, արկածախնդրութիւնների, անմիաբանութեան եւ այլ չհիմնաւորուած արարքների մէջ:

Գ. - ՀԱՅ ԳՐԱԴՈՐ ՄՇԱԿՈՅԹԸ ԾՆՈՒԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԵՐՏԵԼՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՄԲ: Հայերէն նշանագրերի գիւտը կատարուեց այն ժամանակ, երբ հայկական պետութիւնը, կաթողիկոսութիւնն ու մտաւորականութիւնը հասկացան թէ նոր պայմաններում՝ արժէքները, նոյնիսկ բրիտանիկութիւնը, չեն կարող ժողովրդականանալ, արմատանալ, ազգային աւանդութեան մաս դառնալ եւ ազգային յառաջընթացի խթան հանդիսանալ՝ առանց սեփական գրի ու գրականութեան: Գիտակցօրէն հայ մշակոյթին ազգային դիմագիծ տալու, մշակոյթի ազգայնացումն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գիր ու գրականութիւն: Միաժամանակ, հարուստ եւ մարտունակ ազգային մշակոյթ կերտել կարողանալու համար՝ անհրաժեշտ է իւրացնել, սեփականացնել համաշխարհայինը: Անհրաժեշտ է ոչ թէ կուլ գնալ համաշխարհայինին, այլ այն հայացնել, հայ ազգի «ես»-ի մէջ ձուլել համամարդկային «մենք»-ը, եւ այդպիսով բարձրանալ «մենք»ի մակարդակին: Այդ հայացած «մենք»-ը ծառայեցնել ազգային հարցերը համաշխարհային գիտութեան պահանջների համաձայն լուծելու գործին: Նոր վիճակներում ու պահանջներում կիրառելով իւրացուածը, հայ ժողովրդի երախտաւոր զաւակները ձեռք են բերել նոր արդիւնքներ եւ նուաճումներ, ու դրանցով մաս կազմել համաշխարհային «մենք»-ին: Նրանք ջանացել են համաշխարհայինը ազգայնացնել եւ ազգայինը համաշխարհայնացնել: Այս է թարգմանիչների պատգամը մեզ: Այդ գործում Աստուածաշունչը, աւետարանչութիւնը եւ Բրիտանիկ Եկեղեցին ունեն իրեն անփոխարինելի դերը: Նրանց մէջ եւ նրանց միջոցով ազգայնանում են համամարդկային արժէքները եւ համամարդկայնանում՝ ազգայինը:

Երբ մենք կարողացել ենք գործադրել Հոկտեմբերի այս պատգամը, մենք՝ Մաշտոցից մինչեւ Վ. Հանրաքաճումեան փայլել ենք համաշխարհային կեանքի երկնակամարում:

Գէորգ ԽՐԼՈՊԵԱՆ

ԾԽԱԿԱՆ ՀՈՎԻԻԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ծխական Հովիւին եւ եկեղեցւոյ կազմակերպութիւններուն յարաբերութիւնը պէտք է մտահոգութեան առարկան ըլլայ բոլոր անոնց որոնք բաժին ունին անոր մէջ, որովհետեւ եկեղեցւոյ նպատակին յաջողութիւնը առաջնակարգ է եւ կարեւոր:

Քաճանան օծեալ ծառան է Աստուծոյ, որ կը գործէ Աստուծոյ նպատակին համար եւ կը ծառայէ Անոր ժողովուրդին: Աստուած ըսաւ Մովսէսին, «Զանոնք (քու պատմութեամբ գգեստները) կը հագցնես քու եղբորդ Ահարոնին ու անոր որդիներուն: Կ'օծես, կ'օրհնես ու կը սրբագործես զանոնք որպէսզի ինծի համար քահանայութիւն ընեն» (Ելից 28:41): Յիսուս ըսաւ Պետրոսին, «... Միմոն Յովնանի, կը սիրե՞ս զիս: Պետրոս ըսաւ անոր. 'Այո, Տէր, եւ դուն գիտես որ կը սիրեմ քեզ': Յիսուս ըսաւ անոր. 'Արածէ իմ ոչխարներս'» (Յովհաննէս 21:16): Քաճանան, Հայ եկեղեցւոյ մէջ, ձեռնադրութեամբ իր վրայ կը կրէ առաքելական յաջողութիւն, եւ ունի նուիրապետական իշխանութիւն ու ենթակայ է իր եպիսկոպոսին: Ան ունի որոշ պատասխանատուութիւններ իր ծուխին, իր եպիսկոպոսին եւ Աստուծոյ Հանդէպ այն ուխտին համար որ կատարած է ան:

Քաճանան, որպէս Աստուծոյ ծառայ, պէտք է հաւատայ իր առաքելութեան: Աշխարհական մը որ ստանձնած է որոշ պատասխանատուութիւններ եւ կը գործակցի քահանային հետ, ինքզինք, նոյնպէս, պէտք է նկատէ ծառայ Աստուծոյ: Պօղոս առաքել կ'ըսէ, «սիրով ծառայեցէ՛ք իրարու» (Փաղատացւոց 5:13): Այստեղ, յայտ է թէ ծառայութիւնը հասարակաց այն յատկանիւն է,

առանց որուն երկու անձեր կամ երկու կազմակերպութիւններ չեն կրնար գործակցիլ Աստուծոյ գործին մէջ: Օրինակի համար, գործատէր մը որ եկեղեցւոյ գործերով կը զբաղի, պէտք է ունենայ քրիստոնէական վարուելակերպ, որպէս զի վայելէ իր մատուցած ծառայութիւնը եւ միաժամանակ ընդունելի ըլլայ այդ ծառայութիւնը:

Եկեղեցւոյ մէջ պատասխանատու աշխարհականի մը պարտականութիւնները կարելի է բաժնել երկուքի:

ա. Մատակարարման ծառայութիւն, եւ բ. Կրօնական ծառայութիւն:

Մատակարարման պարտականութիւնները ոչ-կրօնական բնոյթ ունին, ինչպէս դրամահաւաքի, շինութեան եւ այլ աշխատանքներ: Կրօնական պարտականութիւնները զանազան են, որոնցմէ կարեւորագոյնը առաքելութեան գործն է, այսինքն Հոգեւոր դաստիարակութիւն ժողովուրդին: Այս առաքելութեան գործը պէտք է կատարուի բոլոր կազմակերպութիւններուն մասնակցութեամբ:

Նոր անդամներ ունենալու նպատակը պարզապէս եկեղեցւոյ անդամներուն թիւը եւ նիւթականը աւելցնել չէ, այլ՝ զօրացնել եկեղեցին եւ Հոգայ իր անդամներուն Հոգեւոր պէտքերը: Այստեղ շեշտենք թէ նոր անդամներ ունենալու գործը միայն եկեղեցականին պարտականութիւնը չէ:

Երբ աշխարհական մը կը ստանձնէ որոշ պատասխանատուութիւններ եւ կը մասնակցի եկեղեցւոյ ձեռնարկներուն եւ խորհրդակատարութիւններուն, պէտք է ցուցաբերէ կրօնասէր վարուելակերպ: Իր ծա-

ռայութիւնը կ'աւելնայ երբ ան նեցուկ կը կանգնի քրիստոնէական կրթութեան, ըլլայ այդ կիրականօրեայ դպրոցի, աւետարանական դասերու եւ կամ խմբային յատուկ դասընթացներու ծրագիրներուն:

Կազմակերպութեանց ջանքերը լաւագոյն կերպով կը յաջողին երբ աշխարհականներ կ'օգնեն Հոգեւոր Հովիւին ոչ միայն ֆիզիքապէս այլ ևս աւել բարոյապէս: Կրնայ Հարց տրուիլ, թէ որո՞նք պէտք է մասնակցին եկեղեցւոյ կազմակերպութիւններուն եւ թէ ինչպիսի՞ պարտականութիւններ պէտք է ստանձնեն: Եկեղեցւոյ եւ կազմակերպութիւններուն յաջողութեան համար միշտ կարիք կայ փորձառու ծխականներու: Այս պարագան ի մտի ունենալով կը պատասխանենք այդ հարցումին ըսելով թէ, անոնք, որոնք կարող են ցուցաբերել կրօնական յանձնառութիւններ (commitment), կը յարմարին Հայ եկեղեցւոյ ուղղութեան եւ կը ծառայեն ոչ թէ իրենց անձնական փառքին կամ շահին, այլ եկեղեցւոյ եւ ժողովուրդի օգուտին համար: Պօղոս առաքեալ կ'ըսէ, «Դուք գիտէք թէ առաջին օրէն, երբ Ասիա եկայ, այդ ամբողջ ժամանակամիջոցին ինչպէս վարուեցայ ձեզի Հետ՝ ծառայելով Տիրոջ ամենայն խոնարհութեամբ. . .» (Գործք 20:18-19):

Իսկ Հակոտնեայ կացութիւններու պատճառով ստեղծուած դժուարութիւնները կ'ունենան յարմար լուծումներ եթէ Հոգեւոր Հովիւին եւ կազմակերպութիւններուն յարաբերութիւնը ըլլայ մնայուն եւ արդիւնաւէտ: Եկեղեցւոյ բոլոր կազմակերպութիւնները (Տիկնանց Օժանդակ Միութիւն, Այր Մարդոց Ընկերակցութիւն, Երիտասարդաց Կազմակերպութիւն, Միական Ոորհուրդ, եւ այլն) պէտք է գիտակցին թէ իրենց նպատակը կրօնական բնոյթ ունի: Հետեւաբար,

Հովիւին եւ կազմակերպութիւններուն յարաբերութիւնը պէտք է ապահովէ իրենց նպատակներուն միասնականութիւնը: Քաշանային ունեցած յարաբերութիւնը իր կազմակերպութիւններուն հետ կրնայ վերածուիլ բարդ վիճակի եթէ այդ յարաբերութիւնը համերաշխ չէ:

Եկեղեցականներ եւ աշխարհականներ երբ միասին կը գործեն, յաջողութիւն ձեռք կը բերուի եթէ անոնք կարենան հասկնալ եւ գիտակցիլ իւրաքանչիւրի դերին: Բոլորս ալ մարդ ենք եւ ենթակայ սխալելու, բայց պէտք է ունենանք կամեցողութիւն միասին գործելու որպէս միացեալ ուժ:

Գործատէր մը որ անդամ է Միական Ոորհուրդի, իր համոզման մէջ կը սխալի եթէ մտածէ թէ եկեղեցւոյ գործերը կարելի է վարել միայն արհեստաւորի մը մտայնութեամբ: Պէտք է համակերպիլ եւ ընտելանալ եկեղեցւոյ կառուցութեան: Ապա թէ ոչ, այդ Միական Ոորհուրդի անդամը դժուարութեանց կը մատնուի, որովհետեւ, ան կը ներկայացնէ յատուկ հատուած մը գաղութէն, որ իրմէ կ'ակնկալէ գործել իբրեւ Հաւատացեալ (religious): Ուրեմն, այդ անձը պէտք է զգուշանայ ոչ-կրօնական գաղափարախօսութիւններ կատարելէ եւ անոնց Հետեւելէ, որոնք կը Հակասեն եկեղեցւոյ առաքելութեան:

Վերջապէս, Հայ եկեղեցին կը կատարէ զոյգ պարտականութիւններ՝ քրիստոնէութեան տարածում ըստ Հայ եկեղեցւոյ ըմբռնումին, եւ Հայ մշակութի պահպանում: Կը խորհինք թէ լուրջ դժուարութիւններու կը Հանդիպինք, եթէ ազգապահպանման գործը նախադասուի եկեղեցւոյ կրօնական դերէն:

Միւս կողմէ սակայն, եկեղեցականի մը առաջնակարգ պարտակա-

նութիւններն են, մատակարարել եկեղեցւոյ խորհուրդները, կատարել եկեղեցական արարողութիւններ, այցելութիւններ, խորհրդատուութիւններ, եւ զարգացնել քրիստոնէական կրթութիւնը Համայնքին մէջ:

Երբ նախապատուութիւն կը տրուի այս պարտականութեանց, քահանան այն ատեն կրնայ գոհացուցիչ կերպով եւ ձեռնհասօրէն գործել իր ծովին Համար: Իսկ երբ Հոգեւոր Հովիւը յաւելուածական կը բռնաւորենք մատակարարման պատասխանատուութիւններով (դրամահաւաքով, ազգային գործերով, եւ այլն), ստեղծած կ'ըլլանք անհաւասարութիւն մը: Այդ ի վերջոյ խնդիրներու դուռ կը բանայ, որոնց պատճառով ոչ մէկ պարտականութիւն կանոնաւոր կերպով կը կատարուի: Նոյնպէս, սխալ պիտի ըլլայ եկեղեցականը նկատել գործաւոր մը, որ կրնայ ժխտական հետեւանքներ ունենայ: Թէեւ ընդունելի է որ «ծառայ» մը քննադատուի եւ իր կատարած աշխատանքները քննարկուին՝ գնահատումի նպատակով:

Եզրակացնելով ըսենք, թէ Հաւատարիմ եւ նուիրեալ քահանան եւ ծխականներ կրնան յաջողիլ իրենց առաքելութեան մէջ, եթէ երբեք անոնք կարենան Հաղորդակցիլ իրարու հետ յարգանքով եւ Հասկնան իւրաքանչիւրին կատարած դերը: Ղուկասու աւետարանին մէջ Քրիստոսի հետեւեալ խօսքը պէտք է ըլլայ միտքը եւ խորքը նման ծառայասէր անձերուն. «Նոյնպէս դուք ալ, երբ ձեզի Հրամայուած բոլոր բաները կը կատարէք, ըսէք թէ՝ անպիտան ծառանք եմք. ինչ որ պարտաւոր էինք ընել՝ ըրինք» (Ղուկաս 17:10):

Կը յուսանք թէ շօշափեցիւք կարգ մը կարեւոր միտքեր, որոնք կրնան լոյս սփռել Հիմնական կէտերու շուրջ, որոնցմով կարելի է ունենալ լաւ եւ յաջող յարաբերութիւն՝ ծխական Հովիւին եւ եկեղեցւոյ կազմակերպութիւններուն միջեւ, որպէս զի շատ աւելի արդիւնաւէտ ըլլան Աստուծոյ ծառայելու մեր ֆանքերը:

Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան

Թուղթ Կաթողիկեայց Յակովբու Առաքելոյն
Գլուխ Ա.- 26-27

«Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել, եւ ոչ սանձահարիցէ զլեզու իւր, այլ՝ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսոյն վայրապար է կրօնաւորութիւնն: Կրօնաւորութիւն սուրբ եւ անարատ առ ի յԱստուծոյ եւ ի Հօրէ՝ այս է. այցելու լինել որոքոց եւ այրեաց ի մեղութեանց իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ:»

ԵԹԷ ՀԱՅՐ ԸԼԱՍԼՈՒ ԱՌԻԹԸ ԿՐԿԻՆ ՏՐՈՒԷՐ ԻՆՑԻ

Քաղաքապետարանի Կարգապահության Նպաստող Անելի Շինհի Տարր Մըն Է,
Քան Մեղադրանքը Կամ Յանդիմանությունը

Նհտեանալ խօսքերը յուսահատութեամբ արտասանեց հայր մը եկեղեցիի հովիւին գրասենեակին մէջ, արտաստաթոր այքերով:

- Արդեօք ի՞նչ տարբեր ձեւերով պէտք էր որ մօտենայի գաւակներու: Եթէ ձեր գաւակները կրկին փոքր ըլլային, դուք իբրեւ հովիւ, ի՞նչպէս պիտի վարուէիք անոնց հետ: Ան կը տառապէր անպէտ մարդ մը եղած ըլլալու զգացումէն. մարդ մը, որուն գաւակները մոլորած էին շիտակ կամբէն: Ան կը զգար ձայնողած հայր մը եղած ըլլալը:

Այս մարդուն հարցումները գիտ խթանեցին: Որպէս հինգ գաւակներու հայր և տասներեք տարուան խրատատու հովիւ, իմ փորձառութենէն ի՞նչ քաղած եմ այս ուղղութեամբ: Եթէ հայր ըլլալու առիթը կրկին տրուէր ինձի, ես ի՞նչ պիտի ընէի գաւակներու հետ յարաբերութիւնս բարելաւելու համար: Ահաւասիկ կարգ մը կէտեր, գորս խիստ կարեւոր կը նկատեմ ընտանիքին գլուխը եղող հօր մը համար:

Տիկնոջս անելի սէր ցոյց պիտի տայի: Ընտանեկան մտերմիկ կեանքէն ներս մեր զգացումները խնայողութեամբ արտայայտելու բնական հասկամտութիւնը կրկայ վիատեցնէր ամէնէն խորունկ սէրերն իսկ: Ուստի, շատ անելի սէր պիտի ցուցաբերէի գաւակներու մօրը հանդէպ, եւ թող պիտի տայի, որ անոնք տեսնեն եւ հասկնան այդ սէրը: Անելի հաւատարմիմ պիտի ըլլայի փոքր ժխթերով տիկնոջս յարգանք ցոյց տալու մէջ, սեղան նստելու ժամանակ աթոռ հրամքներով, մասնաւոր առիթներով իրեն նուէրներ տալով, տունէն հեռու գտնուած միջոցիս թանկարկի նամակներ գրելով, ելն.:

Ուսումնասիրութիւններու մէջ յանգած եմ հետեւեալ եզրակացութեան: Այն մանուկը, որ քաջ գիտէ որ իր ծնողները զիրար կը սիրեն, շուտով եւ դիւրութեամբ կ'ըմբռնէ Աստուծոյ սիրոյն բնոյթը եւ կամ երկու զիրար սիրող մանկերու միացումով ընտանեկան բոյնի մը կազմութեան մէջ աստուածային ծրարքին վեհութիւնն ու սրբութիւնը: Հօրը եւ մօրը միջեւ գոյութիւն ունեցող սէրը տեսանելիօրէն կը փոխանցուի մանուկին եւ կը պատրաստէ զայն ճանչնալու ճշմարիտ սէրը ապագայի իր բոլոր յարաբերութեանց մէջ: Հայր եւ մայր ձեռք ձեռքի կուտան պտղոտի ընթացքին, մանուկը իր ընկերոջը ձեռքը սիրով բռնելը կը սորվի: Երբ անոնք առանձին թալեն, մանուկը կը դժուարի մօտենալ ընկերներուն: Սիրոյ այս անկեղծ զգացումները պէտք է արտայայտուին ամուսնութենէն ետք, ինչպէս ամուսնութենէն առաջ: Պատկանելիութեան զգացում պիտի զարգացնէ: Եթէ մանուկը զգայ թէ ինք ընտանիքի մը կը պատկանի, ան շուտով փողոցի տղոց միանալով, պիտի կազմէ ընկերներու խմբակ մը: Նոյն ընտանիքի պատկանող անդամներ յաճախ իրարմէ շատ հեռու կ'ապրին: Շատ մը մանուկներ իրենց հայրը կը յաճախ իրարմէ շատ հեռու կ'ապրին: Շատ մը մանուկներ իրենց հայրը կը յաճախ իրարմէ շատ հեռու կ'ապրին: Ոմանք իրենց հայրը բնաւ չեն տեսներ տեսնեն միայն ճաշի ժամանակ: Ոմանք իրենց հայրը բնաւ չեն տեսներ օրերով: Արիշներու համար գաւակ-հայր տեսակցութիւնը շարաթափերջին յատկացումը քանի մը վայրկեաններ են միայն:

Ուստի, լաւագոյնը պիտի ընէի ճաշի ժամերը հաճելի պահերու վերածելու: Զաւակներու հետ զաղափարներու փոխանակում պիտի ունենայի եւ պիտի աշխատէի բաժնէ անոնց ուրախութիւններն ու դժուարութիւնները եւ առանց հապկեայի: Պիտի աշխատէի անելի ժամեր յատկացնել խաղերու եւ ծրագիրներու մշակման, ուր բոլորը միասին կարենային իրենց մասնակցութիւնը բերել: Պիտի քաջալերէի գաւակներս, որպէսզի գիտակցին իրենց ընտանիքին վերաբերեալ բոլոր պարտականութիւններուն ու գործերուն եւ ստանձնեն զանոնք հարկ եղած պարագային:

Երբ մանուկը ընտանիքին պատկանած ըլլալու խոր գիտակցութիւն ունի, ան կ'ունենայ կայուն եւ ինքնավստահ նկարագիր մը: Գօտեպնդուած, ան կրնայ ուժգնութեամբ դիմադրել ամբոխին կշտամբանքներուն եւ արտաքին բոլոր դժուարութիւններուն:

Զաւակներուս հետ աւելի երկար ժամեր անցնելու ջանք պիտի ընէի: Ըստած է, թէ փոքրիկները սիրաշահելու եւ ուղղելու լաւագոյն ձեւը զանոնք ուրախացնելն է: Ես յաճախ շատ լուրջ կ'ըլլայի զաւակներուս հետ: Անոնց խնդրները շատ անգամ կ'ըլլուած էին իմ խիստ նայուածքներուս տակ: Կը խորիւի, թէ ծնողք ըլլալ մշտապէս լռութիւն կը պահանջէ:

Նաեւ կը յիշեմ այն պահերը, ուր զաւակներուս հետ մտերմիկ եւ ուրախ ժամեր կ'անցնէինք կատակներ ընելով եւ գուարջ պատմութիւններ պատմելով: Ամենայն անկեղծութեամբ անոնք կը պատմէին դպրոցի հետաքրքրաշարժ դէպքերէն եւ ընտանեօք կ'ըմբռնէինք զանոնք: Այս տեսակի ուրախ փորձառութիւնները կ'աւելցնէին մեր սէրը, մեր մէջ կը մշակէին գործակցութեան հոգին, եւ այսպէսով մեզ իրարու կը կապէին:

Աւելի լաւ ունկնդիր մը պիտի ըլլայի: Շատերուս համար, մանուկի մը խօսակցութիւնը անկարելի տկարացած շաղակրատում մըն է: Սակայն ես այժմ կը հաւատամ, թէ շատ կենսական կապ մը կ'ապ մանկան հետաքրքրութիւնները մտիկ ընելու մէջ՝ երբ ան պզտիկ է, եւ այն չափին մէջ որով ան ալ իր կարգին իր հետաքրքրութիւնները պիտի բաժնէ իր ծնողաց հետ, երբ աւելի մեծնայ:

Եթէ զաւակներս կրկին փոքր ըլլային, պիտի փափաքէի աւելի նուազ անհամբեր ըլլալ, երբ անոնք միջամտէին թերթերու ընթերցումիս: Կ'ըսուի, թէ օր մը մանչուկ մը անընդհատ կը փորձէր իր հօրը ցոյց տալ իր մատիկին վրայի սկրթուրք: Հայրը վերջապէս դադարեցնելով ընթերցումը, ըսաւ անհամբերութեամբ.

- Լաւ, ես բան մը չեմ կրնար ընել ատոր, այնպէս չէ՞:

- Այո, հայրիկ, ըսաւ փոքրիկ տղան, դուն կրնայիր գտնէ «օ՛հ» ըսել:

Անգամ մը կը գտնուէի հօր մը հետ, որ չպատասխանէր, երբ անոր փոքրիկ տղան կրկին եւ կրկին անգամներ զինք կ'անչեց: «Փոքրիկ մանուկ մըն է կ'անչոյդ, հոգ չէ», ըսաւ ան: Կը խորիւի՞ թէ շատ չանցած հայրը պիտի կ'անչէ իր տղան եւ ան ալ իր կարգին պիտի համարձակի ըսել՝ «Մեր մարդ մըն է կ'անչոյդ, հոգ չէ»: Զաւակներուս աւելի քաջալերման ցոյց պիտի տայի: Հաւանաբար ոչինչ այնքան պիտի մղէր մանուկ մը՝ սիրելու կեանքը եւ կատարելու նուաճումներ, որքան անկեղծօրէն տրուած գնահատանք մը իր կատարելութեամբ:

Հիմա կը հասկնամ, թէ քաջալերութիւնը կարգապահութեան նպաստող Քլեյի շինիչ տարր մըն է, քան մեղադրանքը կամ յանդիմանութիւնը: Զննադատութիւնը եւ մեղադրանքը կը գրկեն մանուկը ինքնավստահութենէ, այնչ քաջալերանքը կը կերտէ յանձնապատասխանութիւն եւ մանուկը կ'առաջնորդէ հասունութեան: Մարդ արարածը միշտ բաղձանքը ունի գնահատուելու, եւ երբ այս իղձը գոհացում գտնէ մեզ սիրողներու կողմէ, մենք կը սկսինք աճիլ նաեւ ալ շնորհներով:

Ուստի, եթէ հայր ըլլաւու առիթը կրկին տրուէր ինծի, պիտի յարատեւի առօրեայ գովեստներ տալու մէջ, նկատի ունենալով ո՛չ թէ մանկան ներկայ վիճակը, այլ այն՝ ինչ որ ան կրնայ ըլլալ ապագային:

Պիտի փափաքէի զԱստուած աւելի մօտէն ծանօթացնել զաւակներուս: Մենք ամբողջական անձներ չենք ըլլար, երբ կը շեշտենք միայն ֆիզիքականը, ընկերայինն ու իմացականը: Մենք հոգեւոր էակներ ենք: Եթէ մեր նպատակն է ճանչնալ զԱստուած եւ անոր վեհ ծրագիրը, ծնողներ պէտք է որ այս հոգեւոր ճշմարտութիւնները իրենց զաւակներուն փոխանցող առաջին անձները ըլլան: Իսկ ես աւելի ես պիտի ջանայի զաւակներուս հետ վայելել այս թանկագին հուստը, օգտագործելով զանուգան առիթներ: Փոխանակ աստուածաբանական բարդ հարցերու մասին խորիւնակցելու եւ կամ ընտանեկան պաշտամունքի խիստ օրէնքներ պարտադրելու, աւելի ուշադրութիւն պիտի ընէի թէ ի՞նչ բաներով կը հետաքրքրուի եւ ի՞նչ բաներ կը նկատէ ու կը սիրէ զաւակս:

Անգամ մը ուսուցիչի մը հարցունեցաւ. «Ձեր դպրոցի ծրագրին մէջ ո՞ր կը դասաւանդէք կրօնքը»: «Մենք կրօնք կը դասաւանդենք թուաբանութեան մէջ՝ շեշտելով Հզորութեան հետեւելու անհրաժեշտութիւնը, լեզուական դասերու մէջ՝ սորվելով կիրթ՝ արտայայտելու ձեւը, պատմութեան մէջ՝ մարդասիրութեամբ, աշխարհագրութեան մէջ՝ ընդարձակելով մեր մտապաշարը, աստղագիտութեան մէջ՝ ականաժանքով, եւ բակին մէջ՝ տիպար եւ աշակերտավայել խաղերնացրով: Մենք կրօնք կը սորվեցնենք՝ կենդանիներու հանդէպ աշակերտները ազնիւ վերաբերմունքի վարժեցնելով, իրարու հանդէպ բարի կենցաղի անհրաժեշտութիւնը ներմուծելով եւ ամէն բանի մէջ՝ Հշարտասիրութիւն շեշտելով»:



ՀՈԳՇ. Տ. ՆՈՐԱՅՐ ԱՐԼ. ԳԱԶԱԶԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոգշ. Տ. Նորայր Արեղայ Գազազեան, աւագանի անունով Հայկ, ծնած է Պէյրութ 1977ին: Զաւակն է Անքուման եւ Սիրարփի Գազազեաններու: Նախնական ուսումը ստացած է Վահան Թէֆէեան վարժարանին մէջ, Պէյրութ:

1989ին ընդունուած է ուսանող Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ալէքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանը, որուն ընթացքը աւարտելէ ետք, 1993ին, կը շարունակէ ընծայարանի քաժինը: 1994ին կը ձեռնադրուի սարկաւագ ձեռամբ Ամեն. Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի: 1997ին կ'աւարտէ ընծայարանի քաժինը ու կը սկսի հետեւիլ Երուսաղէմի Երրայական համալսարանի Հայագիտութեան ճիւղին:

Այժմ կը շարունակէ իր ուսումը վերոյիշեալ համալսարանին մէջ: Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեամբ պիտի հետեւի գրադարանավարութեան ուսումնաճիւղին:

6 Օգոստոս 2000ին, Քրիստոսի Այլակերպութեան Տօնին, կուսակրօն ֆահանայ կը ձեռնադրուի, ձեռամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր:



ՀՈԳՇ. Տ. ԻՍԱՀԱԿ ԱԲՂ. ՄԻՆԱՍԵԱՆ


ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոգշ. Տ. Իսահակ Արեղայ Մինասեան, աւագանի անունով Արման, ծնած է Ղափան 1978ին: Զաւակն է Ռուրիկ եւ Ելենա Մինասեաններու: 1984ին ընտանեօք կը տեղափոխուեն Գեղարքունիքի մարզի Գաւառ քաղաքը, ուր միջնակարգ կրթութիւն կը ստանայ Աւետիք Իսահակեանի անուան քաղաքային դպրոցին մէջ, միաժամանակ երկու տարի ուսանելով մաթեմատիկայի թեֆումով դպրոցի մը մէջ:

1993ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Արքեպիսկոպոսի Յակոբեանց Ալէքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանը, որուն ընթացքը աւարտելէն վերջ, 1996ին, ուրար կրելու իրաւունք կը ստանայ եւ կը շարունակէ Ընծայարանի քառամեայ շրջանը:

1999ին կը ձեռնադրուի սարկաւագ ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի: 2000ին յաջողութեամբ կ'աւարտէ Ընծայարանի քաժինը:

6 Օգոստոս 2000ին, Քրիստոսի Այլակերպութեան Տօնին, կուսակրօն ֆահանայ կը ձեռնադրուի, ձեռամբ Ամեն. Պատրիարք Արքազան Հօր:



ՀՈԿՏ. Տ. ՂԵՒՈՆԴ ԱՐԴ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոգշ. Տ. Ղեւոնդ Արեղայ Յովհաննիսեան, աւագանի անունով Միսակ, ծնած է Երեւան 1972ին: Զաւակն է Ռուբէն եւ Նաթալիա Յովհաննիսեաններու: 1979էն մինչեւ 1989 ուսանած է Երեւանի միջնակարգ դպրոցի մէջ: 1989էն 1992 ուսանած է Երեւանի «Ռատիօ-Ելեկտրակապի» բարձրագոյն վարժարանի մէջ: 1991էն 1997 աշխատած է Երեւանի «ARMENTEL» միաւորման հաստատութեան մէջ:

1995էն 1997 ծառայել է Երեւանի Ս. Յովհաննէս եւ Ս. Զօրաւոր Եկեղեցիներուն մէջ:

1997 թուականին ընդունուած է ուսանող Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ալէքս եւ Մարի Մանուկեան ընծայարան: 1999 թուականին կը ձեռնադրուի սարկաւագ, 6 Օգոստոս 2000ին, Գրիստոսի Այլակերպութեան Տօնին, կուսակրօն քահանայ ձեռամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր:



ՀՈԳՇ. Տ. ԽԱԴ ԱՐԶ. ՃՈՒՆՏՈՒՐԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոգշ. Տ. Խադ Արեղայ Ճունտուրեան, աւագանի անունով Արմէն, ծնած է Պէյրութ 1967ին, գաւակն է Հանընցի Սարգիս եւ Լուսին Ճունտուրեաններու: Նախնական ուսումը ստացած է Պէյրութի Ազգ. Սահակ Մեսրոպեան վարժարանին մէջ:

1979ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ալէքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանը, որուն վեցամեայ շրջանը աւարտած է 1985ին: 1983ին, Ուրար կրելու իրաւունք կը ստանայ օրուայ Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Գարեգին Արք. Գազանեանէ: 1985ին կը վերադառնայ Լիբանան հետեւելու կեանքի ազատ ասպարէզին:

1991ին, կը վերադառնայ Երուսաղէմ շարունակելու Ընծայարանի քաժինը: 1993ին Վարդանանցի տօնին Սարկաւազ կը ձեռնադրուի ձեռամբ՝ Ամեն. Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի: 1994 Մայիս ամսուն, հօրը ծանր հիւանդութեան պատճառով կը ստիպուի հեռանալ ընտանիքին սատարելու մտադրութեամբ: 1999ին, իր դիմումին վրայ վերստին կ'ընդունուի որպէս միաբան ծառայելու սրբատեղեաց մէջ:

6 Օգոստոս 2000ին, Քրիստոսի Այլակերպութեան Տօնին, կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի, ձեռամբ Ամեն. Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆՆՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Կիր. 17 Սեպտ.- Բարեկենգամ Ա. Խաչի Պառնոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարխաւեան:

Դշ. 20 Սեպտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Եշ. 21 Սեպտ.- Մնուկ Ա. Աստուա- ճառճի: Առաւօտուն Միաբան Հայրեր ինքնաշարժերով իրան Գեղսեմանիի ձորը, եւ չէրապախառով մուտք գործեցին Տաճարէն մերս, հանդիսապետութեամբ Տ. Սեւան Եպս. Դարիպեանի, որ մասն հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Տիրամօր Գերեզմանին վրայ:

Եր. 28 Սեպտ.- Տօն Եկեղեցւոյ Նաւակառիս Ա. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղի: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Միմանեան:

- Խաչվերացի մեծահանդէս մախտօնակին ի Ս. Յակոբ մայագառեց Պատրիարք Արքազան Հայրը: Ապա Կենաց Փայտի մատուցը թափօրով փոխդրեց Աւագ Սեղան:

- Պատրիարք Արքազան Հայրը մայագառեց գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտօնած «Նկեպեցէ» ի եւ Հսկման կարգերուն:

Կիր. 24 Սեպտ.- Տօն Վերացման Ա. Խաչին (699): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց եւ քառագից Պատրիարք Արքազան Հայրը: Ապասարկողներն էին Տ. Թեոդորոս Արդ. Զաքարեան եւ Տ. Դեմուդ Արդ. Յովհաննիսեան: Իսկ թուրվա- ռակիներն էին Տ. Իսահակ Արդ. Միմանեան եւ Տ. Նորայր Արդ. Գագազեան: չէր Մերձէն առաջ կատարուեցաւ Գոհարամալան Մաղթանէ Թ. տարեդարձի առիթով Անկախ Հայաստանի հանրապետութեան: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրիան Եպս. Մամուկեան: Ս. Պատարագէն ետք Լուսարարապետ Արքազանը հանդիսապետեց Մեղգոնեան բարեբար երջայներու հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհանգստեան պաշտամունքին:

- Կեսօրէ ետք, Պատրիարք Արքազան Հայրը մայագառեց Մայր Տաճարին մէջ կատարուած Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»ին:

Բշ. 25 Սեպտեմբ.- Յիշատակ Մեծեաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղի:

Ժամարարն էր Տ. Դեմուդ Արդ. Յովհաննիսեան: Տ. Սամուէլ Մ. Վրդ. Արդեան հանդիսապետեց հոգեհանգստեան կարգին:

Եր. 30 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէնեան:

Կիր. 1 Հոկտ.- Բարեկենգամ Վարդապ Ա. Խաչի Պառնոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Դարիպեան: Ժամարարն եւ քառագիցն էր Տ. Պարտե Մ. Վրդ. Սրեյցեան:

Որ. 6 Հոկտ.- Նախատօնակը պաշտուեցաւ Դպտոց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Եր. 7 Հոկտ.- Ա. Գեորգայ Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Դպտոց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն եւ քառագիցն էր Տ. Թեոդորոս Արդ. Զաքարեան: Երբ ու դարձի թափօրները գլխաւորեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Արարողութեանց աւարտին Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Դպտոց վանքի տնչին:

- Կեսօրէ ետք, Պատրիարք Արքազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը չէրաշա- փառով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու մախտօնակը մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Արքատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տանարէն մերս: Թափօրապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէնեան:

Կիր. 8 Հոկտ.- Տօն Վարդապ Ա. Խաչին (660): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրիան Եպս. մամուկեան: Լուսարարապետ Արքազանը օրում հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց եւ քառագից Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Եր. 14 Հոկտ.- 72 Աշակերտացի Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի մերձին գաւթին մէջ գտնուող Ս. Գեորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գագազեան:

Կիր. 15 Հոկտ.- Նկատի ունենալով երկրի անապահով վիճակը կատարուեցաւ Թափէ Ս. Գեորգայ վանքի տարեկան Ս. Պատարագը:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի պալատում Դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Ուր. 20 Հոկտ.- Նախատեսանքն է Ս. Յակոբ Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եր. 21 Հոկտ.- Ա. Թարգմանչաց Վարդապետացն մեքոց: Տօն Ազգային եւ Եկեղեցական: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ Տ. Թեոդորոս Արդ. Զաւարեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Պարետ Մ. Վրդ. Նրէցեան: Ս. Պատարագի վերջաւորութեան կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն մեծամուն քարերարներ Դաւիթի, Նուրդի, Սարգիսի եւ Տիրուհիի եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի մէջ շնչեղանքով հոգիին ի հանգիստ, Նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Կիր. 22 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Նպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան:

Եր. 28 Հոկտ.- Ա. Զորից Աւետարանչացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթին վրայ քաջուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 29 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ճախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Բշ. 30 Հոկտ.- Ա. Յովսէփայ Աստուածահաջն: Ըստ սովորութեան, Դեքտեմբերի Ս. Աստուածածնայ Տաճարին Տեսուչի Տ. Հայրիկ Վրդ. Դաւթեան պատարագեց նոյն տաճարին մէջ գտնուող Հայր Յովսէփի գերեզմանի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Եր. 4 Նոյ.- Արքեպ. Միքայէլեան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիւթաղի: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաւանդ:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գեղեզմանի եւ Խաչգիւտի այրի ուխտերէն ետք, վերջնայ կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ ճախատան:

Այս կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց պեղծութեան հանդիսաւոր քափօր, քափօրապետութեամբ Տ. Պարետ Մ. Վրդ. Նրէցեանի:

Կիր. 5 Նոյ.- Գիւտ Ա. Խաչի (Տնն): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսաւորապետ Տ. Նուրիան Նպս. Մանուկեան: Այստեղ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Ս. Պատարագէն ետք կազմուեցաւ մեծահանգէս քափօր, իջնելով նախ Գիւտ Խաչի այլը եւ քարճրամաղով Ս. Գեղեզմանի շրջափակը, երիցս դառնալով անոր շուրջը եւ մէկ անգամ Պատմաճանաչութեան: Քափօրը կը գլխաւորէր Պատրիարք Սրբազան Հայրը, ամպիտվանի տակ եւ Կեանք Փայտի մատուցէն ի ձեռնի: «Խաչի Գրիգոր»-ը քարականի երգեցողութեանն էր իսկ կարկուտէն ետք, քափօրով արարողութիւնները վերջացան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Եր. 11 Նոյ.- Արքեպ. Յովհաննէս Ոսկեքերան Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիւթաղի: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 12 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսաւորապետ Տ. Նուրիան Նպս. Մանուկեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բաքախանեան:

Ուր. 17 Նոյ.- Նախատեսակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Կիրեղ Նպս. Գաբիկեան:

Եր. 18 Նոյ.- Ա. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Պարետ Մ. Վրդ. Նրէցեան: Ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյ քարերարուհի Աղանի ձեկախիրեանի եւ պարագայից հոգիներուն համար: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Նպս. Գաբիկեան:

Կիր. 19 Նոյ.- Դարձաւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէնեան: Ս. Պատարագէն ետք Ս. Աթոռոյս երկարամեայ Միաբան Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեանի մահուան Ա. տարեկիցն առթիւ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, նաեւ Նրուսադամացի Հայոց Բարեխիրական Միութեան անդամներուն հոգիներուն համար: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Նպս. Գաբիկեան:

Եր. 25 Նոյ.- Առաջիկային Անդրիկ և Քիլիպապան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիլիպի: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Կիր. 26 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նորիհան Նպս. Մանուկեան: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Եր. 2 Դեկտ.- Տոն Աւենայն Արքայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիլիպի:

Կիր. 3 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գագազեան:

- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Կիրիկ Նպս. Գաբրիէան:

Բշ. 4 Դեկտ.- Ընծայումն Ս. Աստուածածնին: Առաւօտուն, Լուսարարապետ Տ. Նորիհան Նպս. Մանուկեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժեղով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրումն հանդիսատէր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գեքեզմանին վրայ մատուց Տ. Սամուէլ Մ. Վրդ. Արդյան: Լուսարարապետ Արքազանը մախազահեց բարերար Կիլիպայի Կիլիպեանի և իր գերդաստանի մնչեցեցող տարեկան հոգեհանգիստին:

Եր. 9 Դեկտ.- Զրեգորի Անանկազուք: Հին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիլիպի: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկաւարեան:

Կիր. 10 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Վիգէն Նպս. Այգազեան: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պրեմէնեան: Վիգէն Արքազան Նրուսաղէմ կը գտնուէր ընկերակցելով Միացեալ Նահանգաց Ներքիններու Խորհուրդին Քրիստոնեայ համայնքներու 40 մերկայացուցիչներուն, որոնք առանձին տեսակցութիւն ունեցան Պատրիարք Արքազան Հօր հետ, ինչպէս նաեւ Յունաց և Լատինաց Պատրիարքներուն, եւ հաւաքարար միւս Քրիստոնեայ պետերուն հետ: Անոնք տեսակցութիւններ ունեցան Պաշտօնական և Իսրայէլեան պետական առաջնորդներուն հետ, այցելեցին այն բաղանջներ ուր կործանարար հրճիգութիւններ և սպանութիւններ տեղի ունեցած են: Նա իրենց տպաւորութիւնները հրապարակեցին:

Ուր. 15 Դեկտ.- Նախատօնակին ի Ս.

Յակոբ հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նորիհան Նպս. Մանուկեան:

Եր. 16 Դեկտ.- Առաջիկային Քաղտախ և Բարդուղիմէան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիլիպի: Ժամարարն էր Տ. Սամուէլ Մ. Վրդ. Արդյան:

Կիր. 17 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ Խորանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաքանեան:

Ուր. 22 Դեկտ.- Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Ա. Արքազան Պատրիարքի բաղնիքն պատճառաւ, Յորութիւն Ս. Աստուածածնին տօնին մախատեանը եւ օրումն Ս. Պատարագի մատուցումը Ս. Աստուածածնին Տաճարին մէջ յետաձգուեցաւ Նրկուշարքի օրումն:

Եր. 23 Դեկտ.- Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Մակարայ Մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Նետիկ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 24 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նորիհան Նպս. Մանուկեան:

- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Լուսարարապետ Արքազան:

Բշ. 25 Դեկտ.- Տօն Քրիստոնեայ: Հանդիսապետն, Լուսարարապետ Արքազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժեղով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրումն հանդիսատէր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գեքեզմանին վրայ մատուց Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Ուր. 29 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ մախազահեց Պատրիարք Արքազան Հայրեր:

Եր. 30 Դեկտ.- Ս. Յակոբայ Ամենայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիլիպի: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Միմասեան:

Կիր. 31 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի պաշտօնական Խորանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Պարտ Մ. Վրդ. Նրեցեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Որ. 1 Սեպտ. - Դպրոցական շրջանի տարեմուտին Քարգմանչաց զոնները հիւրընկալեցին 120 աշակերտ-աշակերտուհիներ: Տարեմուտի արարողութիւնը կատարուեցաւ ժամը 8:30-ին մերկայութեամբ Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան անդամներու: Վարժարանի Տեսուչ Տ. Թեոդորոս Արղ. Զաւարեանի Բարեգայտստի խօսքերէն յետոյ Պատրիարք Սրբազան Հայրը անդրադարձաւ կրթական գործին կարեւորութեան սփիւռքի մէջ մանաւանդ: Ապա, Պատրիարք Սրբազան Հայրը, հոգեւորական հայրերուն հետ համդիպում ունեցաւ աշակերտ-ներուն եւ ուսուցիչներուն հետ իւրաքանչիւր դասարանի մէջ:

Նոյն օրը ժամը 10-ին կատարուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի վերաբացումը: Կրթական տարեմուտի արարողութեան մերկայ էին Միաբանական Ուխտը եւ ռուսացական մոր համալրուած կազմը, գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Այս առիթով, ժառանգաւորաց Վարժարանի տնօրէնը ստանձնած Տ. Պարետ Մ. Վրդ. Երեցեան ուրախութեամբ յայտարարեց Հայաստանէն մոր ժամանող քսան ժառանգաւոր սաներու գալստեան լուրը: Իր փական խօսքին մէջ, յետ ընթերցման «Ս. Աւետարանի» պատգամին, Պատրիարք Սրբազան Հայրը ժառանգաւորներուն յիշեցուց ռուսմանսեմէն հոգեւորականներ յիմելու անհրաժեշտութիւնը ի ծառայութիւն Հայց. Առաքելական եկեղեցւոյ:

Սեպտ. 12-16 - Քահանայական Ձեռնադրութեան Խորհուրդէն եւ Վեդարի Տրււնութենէն վերջ, չորս նորընծաներու «Քառասունէն»-ի առանձնացումը տեղի ունեցաւ Բերքեհեմի Հայոց Վանէէն մերս: Քառասնօրեայ խորհրդածութեան շրջանը ամբողջացնելէն անմիջապէս ետք, ըստ աւագութեան կարգի, մորընծայ արեղանները իրենց անդրանիկ պատարագը մատուցին Ս. Յակոբայ Աւագ խորանին վրայ:-

Դշ. 12 Սեպտ. - Տ. Նորայր Արղ. Գազազեան
Դշ. 18 Սեպտ. - Տ. Իսահակ Արղ. Միմասեան
Եշ. 14 Սեպտ. - Տ. Աւետի Արղ. Յովհաննիսեան
Որ. 15 Սեպտ. - Տ. Խաղ Արղ. Ճոնատուբեան
Որ. 16 Սեպտ. - Տ. Բագրատ Արղ. Պարսէֆեան՝ անուն «Քառասունէի» ուսուցիչը, պատարագեց՝ սպասարկութեամբը մորընծաներուն, որպէս կանոն եւ աւանդութիւն Ս. Յակոբէն մերս:

Որ. 15 Սեպտ. - Ի պատիւ մորընծաներուն, Միաբանական Ամիսանշն յորուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի սեղանատան մէջ, ուր Լուսարարայեան Նուրեան Սրբազան այդ քացա-

ռիկ առիթով Միաբանութեան անդամներուն յանձնեց Պատրիարքարանի գրասեմութիւն համար պատրաստուած արծաթեայ մասնաւոր սրբատուփէն: Պատրիարք Սրբազան Հայրը իր ուրախութիւնը յայտնեց Ձիմուրեալ Միաբանութեան թիւին անունին համար, մաղթելով որ «անհիմն ճան» իմացական եւ հոգեւորական հետաքրքրութիւններով եւ նուիրումով, արժանանալու համար "մշակ առանց ամօթոյ" կոչումին եւ հրեմանահին:

Կիր. 17 Սեպտ. - Երուսաղէմի Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Արքեպիսկոպոս Սեւերիոս Մուրատի կողմէ ի պատիւ Միացեալ Նահանգաց Արեւմտեան քեմի Ասորի Արքեպիսկոպոս Գլմիւս Գաբրիէլի կազմակերպուած հիւրասիրութեան մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Սեւան Եպս. Դարիպեանի եւ Աւետիս Արղ. Իփրանեանի:

Եշ. 21 Սեպտ. - Յետ միջօրէի 5:30ին, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի, Սեւան Եպս. Դարիպեանի եւ Համբարձում Վրդ. Քիշիշեանի մերկայ գտնուեցաւ Երուսաղէմի մէջ էմբայ-Տիֆէլէյն կազմակերպութեան մոր կեղծոնի քացման եւ հիւրասիրութեան:

- Եւ նոյն երեկոյեան ժամը 7:30ին, Նօթ-Տափին մէջ հիւրասիրութեամբ Երուսաղէմի մէջ Պատույ Հիւպատոս Պր. Յուլի Մումեանեան, տօնախմբուեցաւ ինձնորդ տարեդարձը Հայաստանի Անկախացեալ Հանրապետութեան, որուն մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Միաբանութեան հոգեւորական հայրերուն:

Դշ. 11 Հոկտ. - Երուսաղէմեանկ Յակոբ Գալայեանի պատրաստած եկեղեցական սպասմերու եւ լաւագարդերու ցուցահանդէսը տեղի ունեցաւ Նօթ-Տափին մէջ եկեղեցւոյ ժամը 7-ին: Հրապարակ հետաքրքրատիւներուն մերկայութեան Պատրիարք Սրբազան Հայրը խրախուսեանքի խօսքեր ուղղեց շնորհալի արուեստագէտին՝ մասնակիցներու ուշադրութեան յանձնելով անոր ստեղծագործական կարողութիւնը:

Եշ. 19 Հոկտ. - Սան Ֆրանսիսկոյէն, Տիւին ժազլին Փափագեան Լազարեան, վարիչ Ուիլիլմ Սարոյեան ֆաուստլշլնի, դէպի Հայաստան իր այցելութենէն յետոյ, ըստ ծրագրի, այցելեց Երուսաղէմ, տեսակցութիւն ունեցաւ Պատրիարք Սրբազանին հետ, եւ շրջեցաւ Պատրիարքարանիս Մայր Տանարը եւ զանազան հաստատութիւնները, եւ Ս. Յարութեան Տանարը:

Եր. 21 Հոկտ. - Քարգմանչաց տօնին առիթով, Միաբանութիւնն ու ժառանգաւորաց

սամերը միասին ընթերցեմ: Ժառանգ. Վարժարանի Տեսուչ Տ. Պարտի Մ. Վրդ. Նրեցեանի կարգադրութեամբ Վարժարանի սամեր Թարգմանչաց յիշատակին հետ կապուած երգեր եւ գրութիւններ մերկայացուցին: Պատրիարք Սրբազան Հայրը ձգելոյնց Թարգմանչաներու ազգային սրբազան մկարագիրքի ակնկալելով տեսնել այդ ձգին իրաւամէկը ուսանողի եւ Միաբանութեանս ռեզումի մէջ:

Կիր. 6 Նոյ. - Պատրիարք Սրբազան Հօր գահակալութեան 10-ամեակի առիթը նշուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի մէջ: Ընթրիքի պահուն սրտի խօսքեր ուղղուեցան Պատրիարք Սրբազան Հօրի Վանիկ Վրդ. Մանկասարեանի, Գուսան Վրդ. Ալմանեանի, Բագրատ Արդ. Պուր-նէեանի, Թեոդորոս Արդ. Զատարեանի, Նորայր Արդ. Գազազեանի կողմէ, մասն ժառանգաւորաց Վարժարանի տեսուչը իր մասնակցութիւնը բերաւ սաներու ամուսնէն:

Տօնակատարութեան երկրորդ եւ հետաքրքիր մասն անկի ընդհանրական բնոյթ ունէր, որտեղ իրաւորուած էր մասն ուսուցչական կազմը:

Ժառանգաւորաց Վարժարանի գարնարուած փոքր արահին մէջ, տեսաւ Տ. Պարտի Մ. Վրդ. Նրեցեանի բացման խօսքով, սամերը երկկողմէ ճոխացուցին ստեղծագործական հարուստ համարներով, հիմնականօրէն օգտագործելով Սրբազան Հօր բարական ժառանգութիւնը (երգապատմութիւն, մեներգ, քանադեղութիւն) եւ սաներու անձնական շարադրանքը: Անակնկալ էր, այժմ Հայփա բնակող Նուրար Ասլանեան հայ երաժիշտին յօրինած երգը՝ Պատրիարք Սրբազանին ձօնուած, գոր աշակերտները կատարեցին եռաձայն: Տ. Արիս Եպս. Երվանդան մերկայացուց Միաբանութեանս անդամներու կողմէ անակնկալ ունեւոր, զարդարելով Սրբազան Հօր կողմէր ձեռագործ Պանակելով Ն. Լաւնշախով: Յօրինարի փականմ ուղերձին մէջ կար գոհումակութիւն, խանդավառութիւն եւ շնորհակալութիւն, որոնք կ'արտայայտուին հետեւի խօսքին մէջ. «... Ես իրեւուած կ'ապրիմ, եթէ մամուսանդ գիւ գործածե՛ք ձեր աստուածային շնորհները ի յայտ բերելու եւ զարգացնելու համար»:

Եւ. 9 Նոյ. - Իւրայելի մայիկին վարչապետ Իսահակ Բապինի սպանման Երդ տարեկիցին առիթ, Քննաւորի միատիմ մէջ տեղի ունեցած յայտագրին մերկայ գտնուեցաւ Սամուել Մ. Վրդ. Արդեան: Քանի մը օր յետոյ մահացաւ Տիկին Լիա Բապին, որուն Թաղման արարողութեան Հայր Սամուել մերկայ գտնուեցաւ Հերձել գերեզմանատան մէջ:

Եւ. 9 Նոյ. - Իւրայելի մայիկին վարչապետ Իսահակ Բապինի սպանման Երդ տարեկիցին առիթ, Քննաւորի միատիմ մէջ տեղի ունեցած յայտագրին մերկայ գտնուեցաւ Սամուել Մ. Վրդ. Արդեան: Քանի մը օր յետոյ մահացաւ Տիկին Լիա Բապին, որուն Թաղման արարողութեան հա (ԴԵ. 16 Նոյեմբերին) Հայր Սամուել մերկայ գտնուեցաւ Հերձել գերեզմանատան մէջ:

Եւ. 9 Նոյ. - Այժմ լիբան վրայ գտնուող գերմանական Տօրմիշըն Վանիկ մայիկին վանահայր Հայր Նիկողայոս, Դերմանիլեմ այցելութեան առիթով տեսակցութիւն ունեցաւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Երկուտասմանակ տարիներու վանահայր Հայր Նիկողայոս համագտեցաւ Նոյիշէ Պատրիարքէն ստացած է անգամնաշնորհում խաչ կրելու եւ մեր պաշտամունքներուն մասնակցելու: Գիւտ Խաչի տօնին առիթով (6 Նոյեմբեր) մասնակցեցաւ Շաքաթ յետ միջօրեի «Հրաշափառով» դէպի Ս. Յարութեան Տաճար մուտքին եւ մայրատոմակին: Նաեւ 11 Նոյեմբերին, իրենց մասնաւոր դասընթացներուն հետեւող 30 հոգիանոց խումբը առաւորողն Սուրբ Յակոբայ Մայր Տաճար, մերկայ գտնուելու Շաքաթ երկկողմէ կիրակմանից ժամերգութեան, շրջելու Հայոց Վանիկ հաստատութիւններ, եւ տեսակցութիւն ունենալու Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Եւ. 14 Դեկտ. - Երուսաղէմ Երրայական Համալսարանի Հայագիտական Ուսմանց Բաժնի հիմնադիր վարիչ Բրօք. Մայքլ Սթօն, Համալսարանի մայրաքան Մեմալիէն Մակիտօրի իրաւունքով, Հինգշաբթի, 14 Դեկտեմբերին, պատու մաշով գնահատամք եւ շնորհակալութիւն յայտնեց Հայագիտական Ուսմանց համար հաստատուած երկու կրթաբաշակներու քարեդարներուն:

Տէր եւ Տիկին Յուլի եւ Անկրա Մամանեմ եւ Զատակունք իրենց հօրի Գրիգոր Սերոբ Մամանեմ յիշատակին կրթաբաշակ եւ հաստատեցին Երրայական Համալսարանի Հայագիտական Ուսմանց բաժնումնէին մէջ, ըստ որում, Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի շրջանաւարտներն Հայերն լեզուի բնութեան մէջ յաջողագոյն աշակերտին, չորս տարիներու համալսարանի բաշակը պիտի հագագուի, իրեն ուսանող Հայագիտական Ուսմանց բաժնումնէին:

Երկրորդ կրթաբաշակը հաստատուած է մուկրատուութեամբ Նիւ Եօքէն Մէյ եւ Սամուել Ընտանիքի Հիմնարկին, որ \$10,000 (Տասը հազար Ամերիկեան Տոլար) փոխանցած է Ամերիկացի Բարեկամներ Երրայական Համալսարանի Ընկերութեան, իրեն կրթաբաշակ Համալսարանի:

րամի մէջ ուսանող Հայ Հոգեւորականներու: Դեկտեմբեր 14ի պատույն ցաշին, զնահատանքի եւ ժաշակերանքի զգացումներ արտայայտեցին Պատրիարք Արքազան Հայրը (որ հրաւիրուած էր ընկերակցութեամբ Արքեպիսկոպոս Սեպուհ Տ. Թեոդորոս Արք. Զաքարեանի եւ Վարժարանի Տնօրէն Պր. Նիկա Տիգրանեանի), Երրայական Համալսարանի Նախագահ Տիար Մեմախեմ Մակիտոր, Բրոֆ. Նաիր Զաֆօվիչ, եւ Բրոֆ. Մայիկ Արօն, որ բացի Հայագիտական Ուսման Բաժանմանի 30 տարիներու գոյութեան եւ իրագործումներու մասին տուած ամփոփ տեղեկութեանց, պատահաբար վրայ լուսարձակուած նկարներ ցոյց տուաւ, յայտնելով որ Հոկտեմբերին Երեւան այցելած է Համալսարանէն հնագէտ Դաւիթ Ամիրի եւ Հայկական Ռուսաց Զբոսաւարտներէն լուսանկարիչ Յովսէփ Լոտիի ընկերակցութեամբ, եւ Սիւնիքի Առաջնորդ Տ. Արքեպիսկոպոս Նպա. Մկրտչեանի ցուցմունքներով այցելած են պատմական վայրեր եւ Վայոց Ձորի մօտ գերեզմանատուն մը, ուր յայտնուեց են աւելի քան 40 գերեզմանաբաւեր, որոնց վրայ Երրայեքն եւ Արամբեքն 18 արձանագրութիւններ կան: «Արձանագրութիւնները քուսգորուած են ուշ տասնըներեքերորդ եւ վաղ տասնընթերցներորդ դարերով: Այս, անմայտադէպ է, եւ պատմագրական յայտնի աղբիւրներու մէջ չկան տեղեկութիւններ միջնադարեան Հայաստանում հրեայ վտարանստութեան մասին: ... Այդ ժամանակաշրջանին, Վայոց Ձորը, եւ ի հարկէ ողջ Սիւնիքը Հայաստանում, մտաւոր կեանքի կայրերը կեդրոնն էր: Այնտեղ էին գտնուում հոգեկաւոր համալսարան եւ վանքեր, ինչպիսիք էին Դլաճոր եւ Տաթեւ:»

Ճաշի վերջաւորութեան, Տիար Յովակ Մումեան՝ Հայաստանի Պատույն Հիւպատոս, իր

ընտանիքին անունով, իր գոհումակոչումը յայտնեց իրեն ընձեռուած այս պատեհութեան համար, որով իր հօրը յիշատակին իր հրաշոտագիտութիւնը յայտնած կ'ըլլար: Ան Նիշոնէն ազատուած հայ որբ մըն էր, իր ազգին սիրովը տոգորուած, իր ընտանիքին, զաւակներուն դաստիարակութեան մայրամհախնդիր, եւ մարդասեր:

Իսկ Ռուսին Հիմնարկի վարիչ Տիար Ջէֆ Ռուտինի եւ ընտանիքին անունով, Բրոֆ. Մուրիմա Յորի, գոհումակոչում յայտնեց կրթաքաջակը տրամադրուած ըլլալուն համար, լուսագոյն յաջողութիւններ մաղթելով Հայագիտական Ռուսաց Ծրագիրներուն, եւ ցաւ յայտնելով որ Տիար Ջէֆ Ռուտին կարող չէր ամճապէս մերկայ գտնուիլ:

Համալսարանի անունով նախագահ Մեմախեմ Մակիտոր մէկական յուշանուէրներ յանձնեց Տիար Յովակ Մումեանին եւ Բրոֆ. Մուրիմա Յորիին:

Գշ. 19 Դեկտ. - Շաբաթական այցելութեամբ մը Վանքիս հիւրն էր Պոլիսէն Ժամանաճ Արամ Նպա. Աթէշեան: Պոլիսէն իրեն ընկերակցած էր Օր. Մարգարիտ Տիւլգատիրեան, որ պիտի պատնաստուի մայրապետի ուխտ ընդունելու: Տնօրէն Ժողովի որոշմամբ ան որոշ ժամանակով մը պիտի մնայ Երուսաղէմ վարժուելու աշխարհաբար լեզուին, եկեղեցական ծեսին եւ արարողութեանց:

Եշ. 28 Դեկտ. - Իսրայէլի Նախագահ Մօշէ Քացաւի կողմէ բոլոր կրօնապետներուն ուղղուած Նոր Տարուան հրաւերին ընդառաջելով, հաւաքոյթին ներկայ գտնուեցաւ Պատրիարք Արքազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ Նուրհան Արք. Մանուկեանի եւ Սամուէլ Վրդ. Աղոյեանի:

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՑԱՆԿ 2000 ՏԱՐԻՈՑ
ՍՈՒՐԲ ՑԱԿՈՐԱՑ ՏԱՃԱՐԻՆ

- 1- Հոլանտաբնակ Տիկ. Մարիամ Քրրոզյու, Ս. Յակոբեանց տաճարին կը նուիրէ ոսկեայ մատանի մը: (Յունուար)
- 2- Հոլանտաբնակ Տիկ. Նազելի Կէօշէրեան, նոյնպէս կը նուիրէ ոսկեայ մատանի մը: (Յունուար)
- 3- Ամերիկաբնակ Տիկին Լիտիա Պոյաճեան, Աստուածածնայ պատկերին կը նուիրէ 18 քարաթ ոսկեայ ապարանջան մը: (Յունուար)
- 4- Ամերիկաբնակ՝ Տիկին Էլիզա Սալիպեան Ս. Յակոբի կը նուիրէ վեց ուրարներ, ի յիշատակ Սալիպեան, Օշական, Ոսկերիչեան, Հայկազեան և Եռմուշաբեան ընտանիքներու ննջեցեալներուն և Հայ Նահատակներու յիշատակին: (Մարտ)
- 5- Սաղիմաբնակ, Տ. Տ. Շանթ և Սիլվա Գասպարեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրեն թիթեղ մը (սոյա Պին) ձէթ: (Մարտ)
- 6- Հոնկ Քոնկաբնակ Տիար Ճէք Մաքսեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ 200 մեթր կերպաս, շուրջառնելու համար: (Մարտ)
- 7- Սաղիմաբնակ՝ Օրիորդ Աշխէն Հինդլեան, Ս. Յակոբին կը նուիրէ մէկ զոյգ աշտանակ, ի յիշատակ իր ծնողաց: (Մարտ)
- 8- Սաղիմաբնակ՝ Լիան Գրիգորեան, Ս. Յակոբի կը նուիրէ խորանի՝ 3 և սեղանի՝ 1 ծածկոց, ինչպէս նաև խաչի՝ 2 սպիտակ բոնիչներ: (Ապրիլ)
- 9- Սրի Լանքացի ուխտաւորուհի մը, ոսկեայ խաչիկ մը կը նուիրէ Ս. Աստուածածնայ պատկերին: (Ապրիլ)
- 10- Սանտրունի եղբարք, երկու զոյգ յախճապակեայ աշտանակներ և երկու զոյգ ծաղկամաններ կը նուիրեն Ս. Յակոբայ տաճարին: (Ապրիլ)
- 11- Լոս Անճելոսաբնակ, Տիկ. Պերճուհի Գրիգորեան, դեղին կերպասի վրայ, ոսկեգոյն փուլերով, ձեռագործ սկիւհի ծածկոց մը կը նուիրէ Ս. Յակոբի: (Մայիս)
- 12- Սաղիմաբնակ Տ. Տ. Մանուկ և Նազիկ Մանուկեան, ձեռագործ զորգ մը կը նուիրեն Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ: (Յունիս)
- 13- Լոս Անճելոսաբնակ Տիկին Մարիճա և քոյրեր Ս. Յակոբի, Աստուածամօր և Յարութեան տաճարներուն կը նուիրեն երեք կլոր, ասեղնագործ սեղանի ծածկոցներ: (Օգոստոս)

15- Սաղիմարեանակ՝ Տիկ. Արուսեակ Զաթալեան, Ս. Աստուածածնայ տաճարի՝ Հեթում Թագաւորի խորանին կը նուիրէ, կարմիր թաւիչի վրայ, ասեղնազործ և մանր, սպիտակ յուլունքներով ծածկոց մը: (Օգոստոս)

16- Ս. Աթոռոյս միաբաններէն՝ Հոգչ. Տ. Պարեո Մ. Վրդ. Երէցեան, Ս. Յակոբի տաճարին կը նուիրէ կարմիր թաւիչի վրայ սաղաւարտ մը, (առանց խաչի) և վա-կաս մը: (Օգոստոս)

17- Հալէպարեանակ՝ Տիկ. Արաքսի Վիգոյեան, Ս. Յակոբի տաճարին կը նուիրէ սև թաւիչի վրայ յուլունքեայ զոյգ մը Հողաթափ: (Սեպտեմբեր)

18- Աթէնքէն՝ Տիկ. Գոհարիկ Թաղէոսեան Ս. Յակոբի կը նուիրէ երկու չիչ պա-տարագի գինի, բուրվառի ածուխ և խունկ: (Սեպտեմբեր)

19- Աստուածամօր տաճարին եղած նուէրներ.

ա. Հոգչ. Տ. Բարսեղ Վրդ. Գալէնտէրեանէ՝ Մէկ կանթեղ, Ղպտոց խորանին;
բ. Հոգչ. Տ. Ղևոնդ Աբդ. Յովհաննիսեանէ՝ Երեք կանթեղ, Ասորոց շարանին
Տէր և Տիկ. Աբգար Զաքարեաններ՝ մարգարտազարդ սաղաւարտ մը:

ԵՐԱՆԻ՜Ր ՈՐ ՈՒՆԻՑԻ ՑԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ

Նուրհան Եպս. Մանուկեան
Լուսարարապետ Ս. Աթոռոյ



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM
 بطريركية الأرمن القبطية الأرثوذكسية
 PATRIARCAT ARMÉNIEN DE JERUSALEM

21 Դեկտեմբեր, 2000

Գերաշնորհ
 Տ. Խաժակ Արք. Պարսամեան
 Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ
 Միացեալ Նախնեաց Արեւելեան Թեմին
 Նիւ Եօք:

Սիրելի Սրբազան,

Մերապ Հայր Սուրբին Վախճանման լուրը վշտահար մեր սրտին վերապայիլ տուաւ պատանիի օրերէն, իբրեւ Նորաստեղծ ժառանգաւորաց Վարժարանի մէջ դասընկերներ, մեր կեանքին յիշատակներ:

1946ին Արեւելեան թեմին մէջ մեր ծառայութեան առաջին օրէն, իբրեւ Ֆիլատելֆիայ Ս. Նորադարձութիւն Եկեղեցւոյ Մուխին հովիւ, Մերապ Հայր Սուրբին փորձառութեան գործակցութիւնը վայելեցինք մոյն ժողովէն սկսելով, հովուական եւ բեմական քաջամ պարտաւորութեանց մէջ:

Մերապ Հայր Սուրբը տիպար օրինակը մնաց նախանձախնդիր հոգեւորականի: Նաեւ Քրիստոսի Աւետարանին գիտուն եւ նախանձայնոյց աշակերտը եւ ուսուցիչը: Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգաց եւ կանոնաց եւ սրբազան աւանդութեանց գիտակից եւ հաւատաւոր դաստիարակը: Եւ քաջամ շնորհներով օժտուած Հայաստանեայց Եկեղեցւոյ սպասաւորը:

Մերապ Հայր Սուրբը իր կեանքը մուխած էր Քրիստոսի ծառայութեան, գիտակցօրէն եւ հաւատով, եւ հաւատարմի մնաց այդ մուխումին եւ հոգիներու փրկութեան սպասաւորութեան:

Կ'աղօթեմք որ Տէրը Լուսաւորէ եւ ընդունի հոգին հաւատաւոր եւ մուխեալ իր աշակերտին, եւ քաջացնէ թիւր Հայաստանեայց Եկեղեցւոյ մոյն հոգիով սպասաւորներուն, իր փառքին եւ մեր ժողովուրդին մխիթարութեան եւ հոգեւոր առաջնորդութեան համար:

Սիրայ Ողջունիւ

Բարձր Արք. Մանուկեան
 Թորգոմ Արք. Մանուկեան
 Հայ Պատրիարք Նորաստեղծի

ՄԵՍՐՈՊ Ծ. ՎՐԴ. ՍԷՄԵՐՃԵԱՆ
(1915-2000)



ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան սրտի խոր ցաւով կը տեղեկացնէ թէ Ամերիկայի Արեւելեան Թեմի երիցագոյն հոգեւորականներէն Հոգշ. Տ. Մեսրոպ Ծ. Վրդ. Սեմերճեան, յետ երկարատեւ հիւանդութեան, ի Տէր հանգեաւ Շարաթ, Դեկտեմբեր 16ի կէս գիշերէն քիչ առաջ՝ Հարթֆորտ Գընէթփէթի «Մետիփլէքս Ռիսպ Սէմթըր»ի մէջ:

Վախճանեալ Տ. Մեսրոպ Ծ. Վրդ. Սեմերճեանի Տան Կարգը պիտի կատարուի երեկոյեան ժամը 7.00ին՝ Զեյնաֆորտ Մասսաչուսէթի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ: Իսկ Թաղման Կարգն ու Վերջին Օծումը՝ Հիմզաբքի Դեկտեմբեր 21, յընթացս Ս. Պատարագի:

Առաջնորդ Սրբազան Հայրը հրահանգած է որ Արեւելեան Թեմի բոլոր եկեղեցիներում մէջ, Տ. Մեսրոպ Ծ. Վրդ. Սեմերճեանի վախճանման քառասունքին առիթով, մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն կատարուի Կիրակի, Յունուար 28ին (2001):

Տ. Մեսրոպ Մ. Վրդ. Սեմերենյան

Հոգշ. Տ. Մեսրոպ Մ. Վրդ. Սեմերենյան, աւագանի անունով Վահան, ծնած է Հալեպ, Սուրիա, 1915 Դեկտեմբերի 17ին: Զորս տարեկանին թերուած է Ամերիկա եւ ԼոսԱնջելեսի մէջ յամալսած է հանրային վարժարանի, եւ Հայ Միւսիկ շրջանը աւարտած է 1933ին: Աշակերտած է ԼոսԱնջելեսի Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ Հայ Դպրոցին, ուր ուսուցչական պաշտօն վարած է 18 տարեկանին: 1932 թուականին ուրաւ կրեւոյ իրաւունք ստացած է օրուման Առաջնորդ Տ. Դեմոն Արք. Դուրեանի կողմէ: 1935 թուականին մեկնած է Նրումադէմ եւ աշակերտած Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանին: 1936ին Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեան զինք Սարկաւագ ձեռնադրած է: Ընծայարանի շրջանը աւարտելէ ետք վերադարձած է Ամերիկա: Օրուման Առաջնորդ Տ. Գարեգին Արք. Յովսէփեանի ձեռնադրուած է 1940 թուականին:

Նոյն տարին նշանակուած է հոգեւոր հովիւ Հարթֆըրտի, Նիւ Պրիթլենի եւ Սփրինգֆիլտի համայնքներուն: Մանկավարժութեան եւ Աստուածաբանութեան դասընթացներու հետեւած է Հարթֆըրտի Սեմինարի Ժառանգողների մէջ, ուրկէ ստացած է Կրօնական Դաստիարակութեան Պատկաւորի աստիճանը: Իսկ 1944 թուականին՝ Արուստի Մագիստրոսի աստիճանը:

1942 թուականին՝ Տ. Գարեգին Արք. Յովսէփեանի ձեռնադրուած է Վարդապետութեան աստիճան: Իսկ 1966ին՝ օրուման Առաջնորդ Տ. Սիոն Արք. Մանուկեանի արտօնութեամբ՝ Տ. Տիրան Արք. Ներսիսեանի ձեռնադրուած է Մայրաքոյն Վարդապետի աստիճան:

Հովուական պաշտօններ վարած է Ամերիկայի Արեւելեան Թեմի զանազան համայնքներուն մէջ: Նոյն է խմբագիր Հայց. Եկեղեցւոյ Նրիտասարդաց Կազմակերպութեան «Արմինիոն Կարտիւն» պաշտօնաթերթի: Բազմաթիւ դասախօսութիւններ տուած է Հոգեւորականաց Տարեկան Համագումարներու եւ երիտասարդական հաւաքոյթներու ընթացքին: Աշխատակցած է «Հայաստանեայց Եկեղեցի» պաշտօնաթերթին եւ այլ հանդէսներու: 1965 թուականին, Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրութեամբ մասնաւոր՝ առաքելութեամբ մեկնած է Վենէզուելա եւ Լատին Ամերիկա:

Վերջին տարիներուն, հակառակ անոր որ հանգստեան կոչուած էր եւ ունէր յառաջացեալ տարիք, այցելած է Թեմի անհովիւ եկեղեցիները եւ կրօնական պաշտամունքներ կատարած:

Տ. Մեսրոպ Մ. Վրդ. Սեմերենյան հեղինակ է աստուածաբանական եւ եկեղեցագիտական բազմաթիւ յօդուածներու եւ գրութիւններու:

ԳԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Դեկտեմբեր 18, 2000

Նիւ Եորք, Ն.Յ.

ՀԱՆԳԻՍՏ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՄԵՆ. Տ. ՏԻՈՏՈՐՈՍ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՅՈՒՆԱՑ

1923 - 2000

20 Դեկտեմբեր, Ձորեմշաքքի. Առաւօտեան ժամը 8ին, Ս. Յարութեան Տաճարի մեծ գանգը ընդհատ ընդհատ կը գուժէր Երուսաղէմի Յունաց Պատրիարք Ամեն. Տ. Տիոտորոս Ա.ի մահը որ տեղի ունեցած է Սկորոս լեռան «Հատասա» հիւանդանոցին մէջ, ուր փոխադրուած էր երեք օրեր առաջ:

Հանգուցեալ Պատրիարքը, աւագանի անունով Տաճարնոս Ճորճ Քարիվալիս, ծնած է 1923ին Քիոս կղզին, Յունաստան: 1938ին Երուսաղէմ գալով, կ'աշակեպոտի իրենց դպրեկանքին: Ատեն մը ետք կը մեկնի Յունաստան, հետեւելու համար աստուածաբանական ընթացքի: 1944ին վերստին Երուսաղէմ գալով կը ձեռնադրուի սարկաւագ, իսկ 1947ին՝ կուսակրօն քահանայ: 1957ին Աստուածաբանութեան տօժարի աստիճանին կ'արժանանայ Աթենքի համալսարանէն: Յաջորդ տարի կը կարգուի Աւագ Թարգման եւ Նախագահ Կրօնական Դերագոյն Ատենանի: 1962ին ընդունած է եպիսկոպոսական ձեռնադրութիւն, որմէ ետք նշանակուած է Առաջնորդ Ամմանի եւ շրջակայից: Մօտ 18 տարիներ տեւող իր այս պաշտօնավարութեան ընթացքին կատարած է եկեղեցական եւ կրթական շինարար աշխատանքներ: 1981 Փետրուար 16ին, Ս. Սիմոնի կողմէ կ'ընտրուի Պատրիարք Երուսաղէմի եւ կը գահակալէ 19 երկար տարիներ որպէս 97րդ եպիսկոպոսապետը իրենց Աթոռին:

Հանգուցեալ Պատրիարքի մարմինը երեք օրեր շարունակ մնաց Յունաց Վանքի Ս. Կոստանդիանոս եւ Հեղինէ Մայր եկեղեցւոյ մէջ, ուր Հանգստեան պաշտամունքը մատուցուեցաւ Ուրբաթ, 22 Դեկտեմբերի առաւօտուն, որուն ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Սամուէլ, Տ. Համբարձում, Տ. Գուսան, Տ. Ռազմիկ Վարդապետներու: Ապա յուղարկուորութեան երկար շարանը կանգ առաւ Ս. Յակոբեանց Մայրավանքի աւագ մուտքի առջեւ: Այդ օրն էր որ չորս օրերու անճրել տեղի կու տար երկնքի կապշտին եւ արեւին: Մեծ գանգին միագարկ դողմանքին եկան միախառնուելու Միաբանութեան եւ ժողովագաւոր սաներու Հանգստեան մեղեդիները: Հանգստեան Աւետարանը կարդացուեցաւ Սրբազան Պատրիարք Հօր կողմէ: «Հոգեւոց»ի աղօթքէն վերջ թափօրը ուղղուեցաւ դէպի Ձիթենեաց լեռ: Պատրիարք Սրբազան ընկերակցութեամբը Տ. Սամուէլ, Տ. Համբարձում եւ Տ. Ռազմիկ Վարդապետներու, մասնակցեցաւ Ձիթենեաց լեռան Յունաց Գալիլիոյ Վանքի մատուռին մէջ կատարուած Թաղմանական Կարգին, որմէ ետք Պատրիարքներու դամբաններուն շարքին ամփոփուեցաւ դագաղը հանգուցեալին: Հոգեւոր պետք եւ պիտակեմ դէմքեր իրենց ցաւակցութիւնը յայտնեցին Մետրապոլիտեն Տ. Քորնելիոս Արքեպիսկոպոսին, որ Պատրիարքի վախճանման օրն իսկ Ս. Սիմոնի կողմէ ընտրուած էր Պատրիարքական Տեղապահ:

Տ. Տիոտորոս Պատրիարքի մահով, Յոյն-Օրթոտոքս եկեղեցին կը կորսնցնէ միւս իր քաղմարդին մշակներէն, որ եակառակ իր յառաջացած տարիքին եւ վատառողջութեանը, միշտ արթուն մնաց պաշտպանելու Ս. Տեղերը՝ լինելով դիտապետը իր եկեղեցիին:

Թող Տէրը իր յոյսերուն մէջ հանգչեցնէ հոգին բարձրաստիճան իր պաշտօնէին:

Ի.Մ.

In its February, 2000, issue Outreach, a periodical published in New York by the Armenian Prelacy, printed an article by Professor Vigen Guroian on the Joint Declaration signed by Karekin I and John Paul II in December, 1996, in Rome. Prompted by this article Professor Hagop Nersoyan presents a philosophical defense of the position of the Armenian Church regarding the nature(s) of Jesus Christ. Guroian's article is reproduced below (as is, except for the correction of some obvious typographical errors), followed by Nersoyan's comments.

***The Contemporary Significance of Armenian Christology:
On the Controversy over the Joint Declaration of
Karekin I and John Paul II***

By VIGEN GUROIAN

In a recent article entitled "The Joint Vatican Declaration Contradicts the Christological Tradition of the Armenian Church (*Armenian Reporter Int'l*, April 12, 1997), Rev. Fr. Mesrop Aramian comments that the Armenian Church "is almost at the brink of being detached from its tradition" and that in Armenian life generally "issues of faith ... have become unimportant." No one who truly cares about Armenian religious life and is in the least bit honest about the present condition of the Armenian Church could disagree. This lamentable state of affairs ought to have moved church leaders long ago to bring about genuine reform in the Church and meet Armenians around the world at the level of their lived lives as members of diverse societies requiring different strategies of evangelism, education and pastoral guidance. Likewise, I wholeheartedly agree with Rev. Fr. V. N. Nersessian's comments in his recent letter to the *Armenian Reporter* (May 3, 1997). He writes: "Armenian theology ... needs to bring the value and the insight of its patristic and monastic thought to bear on the reality of life as lived by the contemporary Armenian Orthodox faithful." I believe that these statements invite a much needed discussion about the Armenian Church's theology and contemporary ethical practice. And I also want to suggest that they are quite related to the principal issue at hand. Thus, in my closing remarks I intend to return to these concerns about the practical place of faith in the lives of Armenians.

However, I do not see that much good can come from the criticisms leveled by these same individuals against His Holiness Karekin I for recently having signed a joint declaration with Pope John Paul II. Both have expressed grave misgivings over the Armenian Catholicos's actions because they believe His Holiness has compromised the Armenian Church's historic teaching about who Jesus Christ is. Similarly, I find it incredible and most unfortunate that three Armenian Primates of the Armenian Church have publicly joined this criticism (*Armenian Reporter* April 19, 1997). For years I have conscientiously withheld from becoming engaged in the polemics that appear regularly in the pages of the Armenian weekly newspapers and sadly seem to characterize much of Armenian public speech. But the recent ill-spirited public attacks upon the religious leader of the Armenian Church require some sort of response. And so I am glad also that Archbishop K. Krikorian of Vienna has already submitted a sober rebuttal to the critics (*Armenian Reporter*, April 12, 1997). The Archbishop has laid the essential groundwork for any worthwhile discussion that might follow on this matter.

If Fr. Aramian is correct that vast numbers of Armenians are hardly knowledgeable of the

tenets of their faith—and I believe that he is— then his article and other statements in the same spirit that have appeared of late in the Armenian press are only bound to confuse, mislead or alienate people still more. So I would issue an appeal that we find the appropriate forums wherein these and related matters could be argued and discussed to some constructive end with real benefits that might accrue to the faithful.

In the remarks which follow, I will try to explain to the ordinary reader what seems to be at issue. And while I believe that reasonable persons might disagree about the precise meaning conveyed by the paragraph on the teaching about Christ in the joint statement signed by Karekin I and John Paul II, I am persuaded that the content of the paragraph does not betray Armenian teaching. I also believe that Karekin I was acting well within his prerogative as Catholicos in signing the statement with the contested paragraph in it.

What is At Issue

Stated in the simplest terms, a principal historic reason why the Armenian Church is not in communion with either the Roman Catholic Church or the greater body of so-called Eastern Orthodox (e.g. Greek or Roman) churches is that the Armenian Church has refused to consent to a fifth-century formulation about the Person of Jesus Christ that was agreed to by a great gathering of the universal church at the Ecumenical Council of Chalcedon in 451. The Armenian Church together with the several other churches that we now refer to as Oriental Orthodox churches, was *at that time* suspicious that this formula logically divided Christ in two and thus jeopardized the ancient scriptural confession of “one Lord, one faith, one baptism” (Ephesians 4:5). How might Christ be described in two? In the first place by carelessly speaking of Jesus acting as a man in certain instances, such as when he hungered, and with his divinity when, for example, he performed miracles.

Armenians detected the influence of just such bifurcated thinking in the definition on the faith of the Council of Chalcedon. They worried that this way of thinking and speaking about Jesus Christ would lead people to believe that the One Lord confessed in Scripture was actually *two beings* who were joined in the physical individual known and seen as Jesus of Nazareth: the human individual gestated in the womb of his mother Mary and the Second Person of the Holy Trinity who came to dwell within that individual during his earthly life. Armenian Christians certainly had reason for concern. Many members of the so-called Chalcedonian party were receiving the words of the council in a spirit that at least bordered on the Nestorian heresy which represented such a belief. They were prone to speaking as if Jesus acted as God in some instances and as a human being in other instances. From the standpoint of Armenian churchmen the definition of Chalcedon did not emphasize sufficiently the essential unity of Christ’s person in his being and in his acts. Christ is one, the Armenians insisted, and he acts as one single being in his divine-human Nature at all times and on every occasion.

In more technical terms, Armenians objected to the “two natures” language adopted by the Council of Chalcedon. This terminology of two natures had been used to explain how Jesus was both fully human and fully divine. Christ was composed of both a human nature and a divine nature, said the council. By contrast Armenians adhered strictly to the language and meaning of the first Great Ecumenical Council of Nicaea (325 A.D.). The Nicene Creed that we say at every Divine Liturgy was the product of that council. The Nicene Council had employed the term nature with a very specific intent to connote a concrete existence. Thus God was one being and nature. And the Son was of the same being and nature of the Father. That was how the council

